

Գիտական ու մասնագիտական հանդես



# Երևան Աշխարհություն

№ 3, 2017 թ.

ISSN 1829-0345

«ԽԵԼԱՑԻ  
ՆՅՈՒԹԵՐԻ»  
ՆՈՐԴԱՍ  
**22**


ԿԱՆԱԳԱՊԱՏՄԱՆ  
ՄԵջ ԿԻՐԱՌՈՎՈՂ  
ԾԱՌԱԲՈՒՅՍԵՐԻ  
ԳԵՂԱԶԱՐԴՈՒԹՅԱՆ  
ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

**30**

ՀԱՅԵՐԻ ԾԱԳՈՒՄ-  
ՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ԳԵԼԵՏԻԿԱԿԱՆ  
ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ

**42**

ԲՐԵՆԴ  
ԵՎ  
ԲՐԵՆԴԻՆԳ  
**14**



Գիտահանրամատչելի հանես  
**ԻՍՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՐՀՈՒ**

№3, 2017 թ.

Լրատվական գրքունեություն	
իրականացնող՝	ՀԱԱ Նախագահություն
Նախագահ՝	Ռ. Սարգսիոսյան
Պետական գրանցման	
վկայականի համարը՝	03Ա055313
Տրված՝	28.06.2002 թ.
Գլխավոր խմբագիր՝	Ղազարյան Էդ.
Գլխավոր խմբագիր	
տեղակալ՝	Սովորյան Յու.
Բաժինների խմբագիրներ՝	Ղազարյան Ար.
Գրոքադիր տնօրին՝	
Պատասխանատու	Ղազարյան Յու.
քարոզուար՝	Վարդապետ Ն.
Տեղականիան	
խմբագիր՝	Կիրակոսյան Ա.
Համաշարժային	
օպերատոր՝	Հովհաննիսյան Ք.
Դիզայներ՝	Օհանջանյան Ա.
Թարգմանչ՝	Սարգսյան Մ.
Համարի	
պատասխանատու՝	Կիրակոսյան Ա.
Ստորագրման	
տապագրության՝	29.09.2017
«Գիտության աշխարհում»-ի խմբագրական	
խորհրդի կամք՝	



Արաման Կ., Արարովյան Լ., Արայան Ա., Այվազյան Ս. (ՊԴ), Գայստյան Հ., Եսայան Ս. (ԱԱԾ), Թավարան Լ., Հարությունյան Հ., Հարությունյան Ռ., Հարությունյան Ս., Համբարձումյան Ա., Հովհաննիսյան Հ., Ղազարյան Հ., Մարտիրոսյան Բ. (ԲԴ), Մերոնյան Ա., Ներսիսյան Ա., Չափաման Ա., Շուրովյան Ս., Ֆրանջյան Ո., Սեդրակյան Դ., Մինոնյան Ա.

Խմբագրության հասցեն՝

Մարշալ Բարյանյան 24 դ,  
ՀՀմանաբար գիտական գրադարանի շենք, Զրոյի հարկ,  
Հեռ.՝ +374 60 62 35 99, ֆաք.՝ +374 10 56 80 68  
e-mail: journal@sci.am

«Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանեսն անեղներէ է << կառավարության և << ԶԱԱ նախագահության որոշմանք:

Տպաբանակը՝ 500 օրինակ:  
Ժամանակ՝ 64 էջ:  
Գինը՝ պայմանագրային:  
Հղովաների վերատպումը հնարքոր է միայն խմբագրության գրավոր համաձայնության դեպքում: Մերժելումների դեպքում հնարքությունը միշտ չէ, որ համակարգիր է հեղինակների հետ: Խմբագրությունը պատասխանավորություն չի կրում գովազդային նյութերի բռվանդակության համար:



## 2 ՍՊԱՍՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԱՍՏԱՆՈՒՄ

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՀԱՅ պատմության ինստիտուտը հրատապակել է «Հայ պարբերական մամուլի պատմություն. 1900-1922» (հ. 2, Ե., 2016) հեղինակային խմբի աշխատության երկրորդ հատորը, որ սպասվում էր վաղող: «Հայ մամուլի պատմության այս, ինչպես և առաջին հատորը»: «Հայ պարբերական մամուլի պատմություն. XVIII-XIX դարեր» (հ. 1, Կահիրե, 2006), բռվանդակում են 1794-1922 թթ. հրատարակված սովորարիվ հայերն թերթերի և ամսագրերի պատմությունը՝ սկսած մեր լրագրության առաջնեկ «Ազդարար»-ից (Մադրաս, 1794-1796):

## 6 ՎԱՐԱՐԴԱՏ ՏԵՐՈՅԱՆ (1887-1938 թթ.)

ՈՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Ժամանակի վաստակաշատ մտավորական, գիտական, հասարակական գործիչ Վարազդատ Տերոյանի (Ներոյան) անոնը, ցավոք, ներկայի հասարակությանը գրեթե անհայտ է մնացել: Գիտական-հասարակական ասպարեզ մտնելով ՀՀ դարի սկզբին՝ նա իր կարծանու կյանքի ընթացքում գրալիքի է բազմաթիվ ու բազմաբնույթ ինտերեսություններով:

Սովորական կամքու կատարյալ տիրապեսելով՝ ֆրանսերեն ու գերմաներեն լեզուներին՝ նա բարձր էրության ունեցող զարմանակ աշխատափորությամբ օժտված բազմակողմանի հետաքրքրությունների տեր գիտական գործիչ էր:

## 14 ԲՐԵՆԴ ԵՎ ԲՐԵՆԴԻՆԳ

ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՅԱՆ

Բրենդինգի (ֆիրմային ոճ) նպատակը բրենդի հստակ պատկերի ստեղծումն ու հաղորդակցության ողղողության հստակ ձևակերպումն է:

Բրենդի ստեղծումը արվեստ՝ հիմնված «Չուկայի» խորը իմացության վրա: Բրենդի ստեղծման գործընթացը բավական դժվար է երկարատև:

Ներկայում խիստ բարձրացել է ապրանքներ արտադրողների և ծառայություններ մատուցողների կորպորատիվ տարբերանշանների, սիմվոլների ներքը: Խորը մասնավորապես ապրանքային նշանների մասին է: Դրանք սպառողների կողմից դիտվում են ոչ միայն որպես որպակի երաշխիք, այլև ընկերության գործարականության համար:

## 22 «ԽԵԼԱՑԻ ՆՅՈՒԹԵՐԻ» ՆՈՐ ԴԱՍ

ՀԱԿՈԲ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ի՞նչ է գրաֆենը:


21-րդ դարի հեղափոխական նյութ, մեկ ասոմական շերտով ածխածնի հաղորդիչ, երկշափ, գերամուր բարակ թաղանթ Ահա այսպես է բնութագրվում գրաֆենը, նյութ, որի հայտնագրությունը դարասկզբին իրավամբ ցնցեց գիտական աշխարհը:





14

22



30

## ԿԱՆԱԴԱՊԱՏՄԱՆ ՄԵԶ ԿԻՐԱԾՈՎՈՂ ԾԱՌԱԲՈՒՅՍԵՐԻ ԳԵՂԱԶԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻԾԵՐԸ

Ժ. ՎԱՐԴԱՅԱՆ, Ե. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Գ. ԳԱՏՐՅԱՆ, Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երկարատև ծաղկող այգիները գեղազարդ պարտիզագործության կարևոր բաղադրիչ են, քանզի աչքի են ընկնում ծաղկող բույսերի առատությամբ, որոնք հաջողաբար ծաղկելով՝ մեծացնում են այգիների գեղազարդությունը և դանում բնակչության ժամանակի և հանգստի հաճենի վայրը: Այդպիսի այգիների ստեղծումը պահանջում է մասնագիտական հարուստ գիտելիքներ և ձաշակի զգացողություն:

## ՀԱՅԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԵԼԵՏԻԿԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԸՆԵՐԸ

ԶԱՐՈՒՀԻ ԽԱՇԱՏՐՅԱՆ, ԼԵՒՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՅԱՆ

Հայկական լեռնաշխարհում էրնուժողվրդագրական գործնքացները սկսվել են դեռևս վաղ քարե դարի ժամանակաշրջանում, որը թերևս, մասսամբ անհնար է դարձնում դրանց լիարժեք և հստակ պարզաբանումը միայն ավանդական մուտքային պատմություն, հնագիտություն, լեզվաբանություն, առասպելաբանություն, մարդաբանություն կիրառմամբ:

Վերջին տասնամյակներում մոլեկուլարյային գենետիկական հասլանիշների հիման վրա իրականացվող հետազոտությունները տարբեր ժողովրդների էրնուժենեցի վերակառուցման անբաժանելի մասն են և հնարավորություն են տայիս նախապատճեն և պատմական իրադարձությունները ներկայացնել ու հազարամյակների խորքից:

## ՏԱՐԲԵՐ ՌԱԴԻՈՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԼՏԵՆԱՆԵՐ. Մաս II

ՎԱՀԱՆ ԱՎԵՏԻԽՅԱՆ

Սույն հոդվածում քննարկվում են նաև անտենաների և անտենային չափումների տեխնիկայի բնագավառում հայկական գիտության վերջին նվազումները:


## ՖԵՌՈՒԵԼԵԿՏՐԻԿԵՐ. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՌԱՋԱՎԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍԻՆԹԵԶԱՆ ԵՂԱԱԿԵՐԸ ՈՒ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. Մաս I

ՎԱՀԱՆ ԲՈՒՆԻԱՐՅԱՆ


Ժամանակակից տեղեկատվական համակարգերի ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման նվազմամբ օրավոր ածող պահանջներն անխոսափելիորեն կարևորում են նոր և բարելավված հասկություններով նյութերի և կառուցվածքների ստացման հետ կապված հարցերը: Այս իմաստով ֆեռուէլեկտրիկ (ՖԷ) նյութերը և դրանց վրա հիմնված կառուցվածքները հակառական ներուժ ունեն:



42



48



56

# ՍՊԱՍՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԱՍՏԱՆՈՒՄ

**ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

Պատմական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր

Հ ԳԱԱ պատմության  
ինստիտուտը հրատա-  
րակել է «Հայ պարբե-  
րական մամուլի պատմություն.  
1900–1922» (հ. 2, Ե., 2016) հեղի-  
նակային խմբի աշխատության  
երկրորդ հատորը, որ սպասվում  
էր վաղուց: Պատասխանատու  
խմբագիրներն են նոյն ինս-  
տիտուտի աշխատակիցներ՝ ՀՀ  
ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ  
Խառատյանը և պատմական  
գիտությունների դոկտոր Լիդա  
Գևորգյանը: Հայ մամուլի պատ-  
մության այս, ինչպես և առաջին  
հատորը՝ «Հայ պարբերական  
մամուլի պատմություն. XVIII–  
XIX դարեր» (հ. 1, Կահիրե, 2006),  
բովանդակում են 1794–1922 թթ.  
հրատարակված ստվարաթիվ  
հայերեն թերթերի և ամսագրերի  
պատմությունը՝ սկսած մեր լրագ-  
րության առաջնեկ «Ազդարար»–  
ից (Մադրաս, 1794–1796): Երկու  
հատորների նյութերը դասավոր-  
ված են ժամանակագրական և  
միաժամանակ, աշխարհագրա-  
կան սկզբունքներով: Կա նաև  
ըստ գաղափարական և քաղա-  
քական ուղղությունների տրոհ-  
ման մոտեցումը: 1-ին հատորի  
տասը գլուխները սկսվում են



հնդկահայ մամուլով, որին հետևում են միխթարյանների հրատարակությունները, ապա արևելահայ և արևմտահայ պարբերականները և այլն: Բայց պետք էր հաշի առնել նաև մամուլի բովանդակային ընդհանրության, ուրեմն և ըստ այդմ այն դասակարգելու մոտեցումը՝ թերթերի և ամսագրերի վիթխարի քանակության պայմաններում: Այստեղից՝ գլուխների բաժանումները նաև թեմաների՝ երգիծական, մանկավարժական, մանկապատանեկան հայատառ թուրքերն, ազգային կուսակցությունների և այլն:

Առաջին հատորում հեղինակները մշտապես հաշվի են առել մամուլի հասարակական-քաղաքական արժեքը՝ ելնելով այն իրողությունից, որ մամուլն իր սկզբնավորման օրից և այդուհետև, հիմնականում ունեցել է հասարակական ուղղություն: Ուստի՝ XIX դ. երկրորդ կեսի պարբերականներից սկսած, դրանց վերլուծության ու գնահատման մեջ, որպես առաջնային չափանիշ, նկատի են առնվել հասարակական կողմնորոշումները կամ գաղափարական ու քաղաքական արժեքը: Առաջին, ինչպես և երկրորդ հատորի բոլոր նյութերում մամուլը բնութագրվում է ոչ թե զուտ ազգային, ինքնարավ շրջանակներում, այլ առհասարակ քաղաքակրթության իրողություններին, այլ ազգերի պատմությանն ու մշակույթին լծորդված (Եվրոպական, ռուսական, արևելյան մշակույթ, գրականություն, արվեստ, գիտություն և այլն, որոնք զորել խթան դարձան հայ հոգևոր ու մտավոր մշակույթի զարգացման համար): Ուշագրավ է նաև հայ մամուլի գաղափարական հասունաց-

ման գործընթացի լուսաբանումը առաջին հատորում, որ հեղինակներն իրականացնում են որոշակի նյութերի քննարկման միջոցով: Այսպես, 1840-1860-ական մամուլը հիմնականում ներկայացվում է իր լուսավորական-կրթական բովանդակությամբ, այնուհետև՝ սոցիալական ուղղվածությամբ, ապա և ազատագրական շարժման գաղափարախոսության դրսուրումներով և այլն: Առաջին հատորում (ինչպես և երկրորդում) հասուլ տեղ է հատկացված ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ գաղթօջախների մամուլի յուրահատկություններին, լեզվին, մշակութային ազդեցություններին, ազգային մշակույթը, գրականությունն ու լրագրությունը զարգացնելուն ուղղված տարրեր մոտեցումներին և այլն: Թերթերի ու ամսագրերի հսկայական զանգվածի մեջ հեղինակներն ընտրել են անսփիքք, որոնք առավել բնութագրական դրսեվորումներով կամ լավագույնս են արտահայտել վերը նշված երևույթները, ինչպես, օրինակ, 1850-1870-ական թթ. համար՝ «Հյուսիսափայլը», «Մեղու Հայաստանին», «Մեղուն», «Մասիսը», «Ծաղիկը», «Կոռոնկ հայոց աշխարհինը», «Արևելյան մամուլը», «Սշակը», «Թատրոնը» և այլն: Այս և մյուս հրատարակությունների բովանդակային դիմագծերի վերլուծության մեջ հատկապես կարևորվում են առաջատար հրապարակախոսներն ու մամուլի երախտավոր գործիչները (Հարություն քահ. Շմավոնյան, Մ. Թաղիադյան, Գ. Պատկանյան, Ստ. Նազարյան, Մ. Նալբանդյան, Կ. Ոհրյուծյան, Հ. Սվաճյան, Ստ. Ոսկանյան, Հ. Պարոնյան, Գր. Արծրունի, Հաֆֆի, Մ. Մամուրյան, Գր. Զիլիսկիրյան և շատ ուրիշներ): Այս հատորի՝ 1880-1900-ականի բնութագրերում արժանին է հատուցվում հայ քաղաքական մտքի զարգացմանը՝ ի դեմս ազգային կուսակցությունների մամուլի և դրա գործիչների, նրանց հայացքների ու կողմանորշումների հետևողական վերլուծությամբ:

Հայ մամուլի պատմության 2-րդ հատորը ևս պատկանելի ծավալ ունի, որ առնչվում է 1900-1922 թթ. հայ պարբերականների անհավատալիութեն մեծ թվաքանակի և համապատասխան ընդգրկումների հետ: Մամուլում պետք է արտացոլվեին ազգային ու համաշխարհային շրջադարձային իրողությունները՝ ազատագրական պայքարի և դրա գաղափարախոսության ընթացքը, սոցիալական և առօրյա իրողությունները Հայաստանի գույգ հատվածներում և գաղթօջախներում, օսմանյան պետության հայացինց քաղաքականության շարունակությունը երիտրութերի կառավարման տարիներին, համաշխարհային պատերազմը և հայերի ցեղասպանությունն ու հայրենազրկումը, հայկական պետականության վերածնունդը և այլն: Դարասկզբի հայ մամուլը նոր որակ էր նշանավորում նաև նյութը մատուցելու ձևի տեսակետից: Հատորի հեղինակներին հաջողվել է վերհանել մամուլի ժանրային զարգացումները (ակնարկ, քրոնիկ, էստե, լրատվական բնույթի հրապարակումներ, քաղաքական տեսություններ և այլն), որով ուրվագծվում են մամուլի լրագրական ու լրատվական արժեքները եվրոպական մամուլին համընթաց մակարդակով:




Պարբերականները բաժանված են գլուխների՝ ըստ արևելահայ, արևմտահայ և գաղթօջախների մամուլի, այնուհետև ըստ քաղաքական ուղղվածության, այնուհետև ազգային պետականության վերականգնման շրջանի՝ Հայաստանի առաջին հանրապետության մամուլ և ցեղասպանությունից հետո Կ. Պոլսում, Զմյունիխայում ու գաղթօջախներում հրատարակված պարբերականներ (1918–1922): Այս ամենով հանդերձ, ամրագրենք հայ մամուլի պատմագիտության մեջ գրախոսվող աշխատության բերած նորույթները: Նախ, շատ կարևոր է իր ընդգրկումներով նախընթացը չունեցող այս երկհատորյակի մեջ մեր մամուլի պատմության համակարգումը, որ արվում է առաջին անգամ: Այստեղ քննարկվում են հարյուրավոր հրատարակություններ՝ իրենց ժամանակային ու բովանդակային արժեքների համադրումներով: Այս տեսակետից ևս ապահովվում է երկհատորի ամբողջականությունը կամ որ նույն է, այս՝ երկրորդ հատորի անմիջական շարունակելիությունը մեկ տասնամյակ առաջ լույս տեսած առաջին հատորից հետո: Արդյունքում՝ անվարան կարելի է ասել, որ

հայ մամուլի սկզբնավորումից մինչև XX դ. երկրորդ տասնամյակի սկիզբը (1794–1922) և առաջին անգամ այս ժամանակահատվածի համար առաջին անգամ, մեր թերթերն ու ամսագրերն արժեվորվել են իրենց ընդհանրություններով ու առանձնակի նկարագրով՝ գնահատման ելակետ ունենալով հետազոտական որոշակի չափանիշներ: Անշուշտ, այդ բնութագրական կողմերը դիտարկվում են մամուլի բազմածալ բովանդակության, հատկապես հասարակական-քաղաքական մտքի կտրվածքով, քանի որ պարբերականները ուսումնասիրված են իրենց այդ ուղղությամբ և խնդրուարկա երկիհատորյակը ոչ այլ ինչ է, բայց եթե մամուլի պատմություն: Իհարկե, մամուլը մեծաքանակ նյութ է պարունակում մեր պատմության և մշակույթի և առհասարակ իմացական ամենատարբեր բնագավառների վերաբերյալ, որոնց հատորի հեղինակներն անդրադարձել են ըստ հարկին՝ նկատի առնելով յուրաքանչյուր պարբերականի ուղղությունն ու հրապարակումները:

Հասորի բնութագրերի շարքի մեջ կարելի է առանձնացնել նաև նյութի մատուցման ոճա-

կան միանությունը, որ արդեն կապվում է հետազոտությար բուն առարկայի արժեքի բացահայտման ընդհանրությունների հետ: Նկատի ունենք տարբեր թերթերի և ամսագրերի հետազոտության ընթացքի միասնականությունը, իհմնահարցերի քննության որոշակի հերթագայությունը, որ հասգում է նույնական կամ հարակից իհմնախնդիրների քննության ու վերհանման և տարբեր հեղինակների շարադրանքների հեղինակած ու կիրթ հայերենը՝ գիտական լեզվի ուսանելի նկարագրով հանդերձ:

Իհարկե, հայ մամուլ հասկացության մեջ մտնում են անասելիորեն շատ թվաքանակ կազմող և մի քանի հազարի հասնող թերթեր ու ամսագրեր, որեւէն և հայ մամուլի պատմությունը ավելի հարուստ է, քան այս բնագավառի որևէ աշխատություն, այդ թվում և գրախոսվող աշխատությունը (կամ որ նույն է՝ երկիհատորյակը) կարող է ներկայացնել: Այս հատորից, բնականաբար դորս պետք է մնային բազմթիվ հրատարակություններ և այդ անխուսափելի էր, որովհետև որևէ գործի արժանիքը ոչ թե անծանոթի ամրողական լուսաբանում է (տվյալ



դեպքում և գործնականում այդ անհնարին էր), այլ այն, թե այդ գործը որբանով է նպաստում ուսումնասիրության առարկայի հնարավոր և հետազա լուսաբանմանը: Եվ այս տեսակետից խնդրո առարկա հատորը, ինչպես և նախորդը, ամենայն հաջողությամբ կատարել է իր առարելությունը՝ ճանաչողական տիրույթ բերելով հայ մամուլի պատմությանը ցարդ անհայտ մնացած և թիզ ծանոթ բազմաթիվ պարբերականներ և ընթերցողի դատին հանձնելով հայ մամուլի պատմության համար դարակազմիկ նշանակություն ունեցող՝ XX դ. առաջին երկու տասնամյակների մտավոր և լրագրական անդրադարձը:

Կարելի էր որոշ դիտողություններ անել, թեկուզ և ընդգրկումների տեսակետից, գրքի հեղինակային խմբին. հատորը հիմնականում թիզ է անդրադարձել բուն Արևմտահայաստանում լույս տեսած մամուլին, թեև այստեղ կարելի է մեկ անաշառ վերապահում անել: Այդ մամուլը, սակայ բացառություններով չի պահպանվել կամ պահպանվել է ուսումնասիրության համար շատ նվազ չափերով, իբրև բնաշխարհում կատարված ցե-

յասպանության անխուսափելի հետևանքը: Կարելի էր, սակայն, գոնե տեսականորեն, անդրադառնալ այդ մամուլի տեղական, գավառական նշանակությանը: Կարելի կլիներ նաև հատորի հետազոտական ծիրի մեջ մտցնել հայ Առաքելական և հարանվանությունների (հայ կաթոլիկներ և բողոքականներ) կրոնական-եկեղեցական հրատարակությունները, որոնք առհասարակ դուրս են մնացել հայ մամուլի պատմաբանների տեսադաշտից:

Վերջում կցանկանայինը ավելացնել, որ հատորն ունի կիրառական շատ լուրջ նշանակություն ոչ միայն հայ մամուլի պատմության գալիք ուսումնասիրությունների, այլև դպրոցական, մանավանդ բուհական ուսուցումը հարստացնելու տեսակետից, երբ «լրագրություն» մասնագիտությամբ գործում են բազմաթիվ ուսումնական հաստատություններ: Կարող ենք ասել, որ իր բարձր

արժանիքներով, մասնավորապես հիմնախնդիրների առաջդրման ու դրանց լուծման աննախադեպ ծավալներով և դրան համապատասխան հետազոտության առարկայի իմաստավորմամբ այս գիրըը նշանակալի երևույթ է հայ մամուլի պատմության ուսումնասիրությունների շարքում:



# ՎԱՐԱԶԴԱՏ ՏԵՐՈՅԱՆ (1887-1938 թթ.)



ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

պատմական գիտությունների  
դոկտոր

**Ժ**ամանակի վաստակաշատ մտավորական, գիտական, հասարակական գործիչ Վարազդատ Տերոյանի (Դերոյան) անոնքը, ցավոր, ներկայիս հասարակությանը գրեթե անհայտ է մնացել:

Գիտական-հասարակական ասպարեզ մտնելով XX դարի սկզբին՝ նա իր կարծատև կյանքի ընթացքում զբաղվել է բազմաթիվ ու բազմաբնույթ խնդիրներով:

Ստանալով փայլուն կրթություն, կատարյալ տիրապետելով Փրանսերեն ու գերմաներեն լեզուներին՝ նա բարձր էրողիցիա ունեցող, զարմանալի աշխատափրությամբ օժտված բազմակողմանի հետաքրքրությունների տեր գիտական գործիչ էր:

Վ. Տերոյանը թողել է ուշագրավ ու արժեքավոր մի շարք ուսումնասիրություններ՝ նվիրված փիլիսոփայության ու գրականության բարդ հարցերին, թարգմանել է փիլիսոփայության դասականների կարևորագույն աշխատությունները (բնագրից): Նա զբաղվել է նաև գիտական-կազմա-

կերպչական աշխատանքներով, որոնց շարքում հատուկ տեղ են գրավում Հայ փիլիսոփայական ընկերություն հիմնելու, հայերեն-գերմաներեն-ֆրանսերեն լեզուներով փիլիսոփայական բառարաններ ստեղծելու ծրագրերը: Մտահոգվել է դասագրքեր պատրաստելու, Հայաստանում գրքերի ամբողջական հավաքածու ստեղծելու, Միսիթարյան միաբանության հետ գրքափոխանակությամբ զբաղվելու հարցերով և այլն:


Հայրենիքի նկատմամբ ունեցած ջերմ սերն ու նվիրվածությունը չին կարող Վարազդատ Տերոյանին թողնել Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող դրամատիկ իրադարձությունների սառնասիրտ դիտորդի դերում: Ինչպես հայ մտավորականության շատ ներկայացուցիչներ, նա ևս իր ուժերը ներածին չափով աշխատում է օգնել բզկտված, ծանրագույն վիճակում գտնվող ժողովրդին:

1915 թ. ապրիլ-մայիս ամիսներին Վ. Տերոյանը մասնակցել է Վանի Այգեստան թաղամասի ինքնապաշտպանական մարտերին:

1916-1920 թթ. ընթացքում Տերոյանը հասարակական-քաղաքական և կազմակերպչական լայն գործունեություն է ծավալում, մասնակցել է հայ գաղթականությանը նվիրված համագումարներին, գրել է մի շարք հոդված-ծրագրեր Հայրենիքի վերաշնուրական, գաղթականության խնդիրների վերաբերյալ:

Վարազդատ Մկրտչի Տերոյանը ծնվել է 1887 թ. փետրվարին, Վան քաղաքի Այգեստան թաղամասում: Նա հայ ազգային-ազատագրական շարժման գործիչներ, ՀՅԴ անդամներ Վազգեն (Տիգրան) և Ժենյա (Զարուհի) Տերոյանների կրտսեր եղբայրն էր:

Վ. Տերոյանը նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում: Նրա պատանեկության մասին հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ, Վանի 1915 թ. ինքնապաշտպանության կազմակերպիչ Արամ Մանուկյանի հուշերում կա հետևյալ վկայությունը. «Մենք հաճախ էինք գնում Վազգենի մայրիկի մոտ, որ ամենքիս մայրիկն էր: Այն



Վ. Տերոյանը, բանտից հետո՝ 1932 թ.

ժամանակ մայրիկը մի աղջիկ ուներ՝ օր. Սաթենիկ և մի փոքրիկ տղա՝ Վարազդատը, դեռ պատանի, 13-15 տարեկան, որ հաճախում էր Երամյան դպրոցը. հանդարտ, փափլիկ, սիրուն տղա էր, աչքարաց: Նա Ահարոնյանի Վազրիկն էր և, ինչ ասել կուզել, որ թունդ դաշնակցական էր: Նա էր մեր և Երամյան դպրոցի ուսուցիչների միջի կապը»:

Վ. Տերոյանը 1905 թ. ընդունվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարան: Այստեղ նրա հետ միասին ուսանում էին մեկ տասնյակ վասպուրականցիներ՝ Համազասպ Բաղեցյանը, Ղևոնդ Մելոյանը, Արտակ Դարբինյանը, Հայկակ Կոսոյանը, Արսեն Հացագործյանը և ուրիշներ: Ուսանողական երություններին մասնակցելու պատճառով Վ. Տերոյանը հեռացվել է ճեմարանից: Նույն թվականին նա վերադարձել է Վան, ուր դասավանդել է «Երամյան» և «Սանդիստյան» դպրոցներում:

Վանեցիները գումար են տրամադրում Վ. Տերոյանին՝

արտասահմանում բարձրագույն կրթություն ստանալու համար: 1909 թ. նա մեկնում է Փարիզ և ընդունվում Սորբոնի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետ, որն ավարտում է 1912 թ.: Այսուհետև, ինչպես գրում է Վ. Տերոյանն իր ինքնակենսագրությունում. «ուսումն շարունակել եմ նաև գերմանական մի քանի համալսարաններում: Ամեն տեղ էլ փիլիսոփայական ֆակուլտետներում», եղել է նաև Ավստրիայում և Խովհայում:

Սորբոնի համալսարանում Վ. Տերոյանի ավարտական թեզն էր "La biologie d'Auguste Comte" («Օ. Կոնտի կենսաբանությունը»), իսկ Բեռլինում փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան ստանալու համար պատրաստել էր "Die Soziologischen Grundlagen der Erkenntnis" («Իմացության սոցիոլոգիական հիմունքները») թեզը: Ցավոք, վրա հասած Առաջին համաշխարհային պատերազմը հնարավորություն չի տալիս պաշտպանել դոկտորական թեզը: 1914 թ. ամուսն վերջին Վ. Տերոյանը վերադառնում է Վան: Ծննդավայրում նա դասավանդում է Կեդրոնական վարժարանում:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան Թուրքիայի կառավարությունն իրականացնում է կայսրության տարածքում բնակվող հայ ժողովրդի ցեղասպանությունը: Մի շաբթ վայրերում հայերը դիմում են ինքնապաշտպանության: Երիտրուրք երուզակներին առաջին դիմադրությունը ցույց է տալիս Վան-Վասպուրականի հայությունը:

1915 թ. ապրիլի 7-ին Վան քաղաքի հայկական թաղա-

մասերի՝ Այգեստանի և Քաղաքամեծի հայ բնակչությունը կազմակերպում է ինքնապաշտպանություն: Երիտրուրքական իշխանությունները նրանց դեմ կենտրոնացնում են զգալի թվով կանոնավոր զորամասեր, քրդական ջոկատներ, հրետանի և գնդացիներ: Դիմադրական մարտերը ղեկավարելու համար ստեղծվում է «Վանի Հայ ինքնապաշտպանության զինվորական մարմին»: Վ. Տերոյանն ընդգրկվում է «Հայկական Կարմիր խաչ» մարմնի կազմում, որի հիմնական խնդիրն էր. «անմիջական օգնություն հասցնել դիրքերում ընկած վիրավորներին»:

Հայ բնակչության հերոսական դիմադրության և ոռուսական զորքերի ու հայ կամավորական ջոկատների առաջխաղացման շնորհիվ Վանի հայկական թաղամասերի ինքնապաշտպանությունն ավարտվում է հաղթանակով:

1915 թ. մայիսի 7-ին ոռուսական հրամանատարությունը Արամ Սանուկյանին, Վ. Տերոյանի բնորոշմամբ՝ «Վասպուրականի հասարակական հսկային», նշանակում է Վանի և նահանգի ազատագրված գավառների ժամանակակիցությունը: Վասպուրական դեկանական մասնակցությամբ և մասնակցությամբ կազմակերպվում են նահանգային կառավարման մարմիններ՝ նահանգային վարչություն, տնտեսական մարմին, ոստիկանական տեսչություն, դատարան և այլն:

Վանի 1915 թ. հուլիսյան նահանջից հետո Վ. Տերոյանը գաղթականների մի մասի հետ գալիս է Թիֆլիս: Նույն թվականին Բաքվի «Հայոց մարդասիրական ընկերություն հանուն

Ս. Գրիգոր Լուսավորչի» մշակութային, կրթական և բարեգործական հասարակական կազմակերպության կողմից նա հրավիրվում է Բարո՛ դասավանդելու քաղաքի հայկական թաղամասի հայ գաղթական երկսեռ ծխական դպրոցում:

1916 թ. ապրիլի 20-ին Բարվի հայ գաղթականների ժողովը Վ. Տերոյանին լիազորում է «Հայոց մարդասիրական ընկերությունում» լինել իր ներկայացուցիչը:

Որպես Բարվի հայ գաղթականներից ընտրված պատգամավոր, նա մասնակցում է 1916 թ. մայիսի 10-13-ը Պետրոգրադում կայացած Առաջին հայկական համագումարին: Այստեղ հավաքվել էին փախստականներին օժանդակող 29 կազմակերպությունների ներկայացուցիչներ, Պետական դումայի և Պետական խորհրդի ազգությամբ հայ անդամներ:

1918 թ. Վ. Տերոյանին հրավիրում են դասավանդելու Թիֆլիսի «Գայանյան օրիորդաց դպրոցում»: Նույն թվականին, դպրոցի մանկավարժական կոլեկտիվը նրան ընտրում է տնօրեն: Այդ պաշտոնում, սակայն, Վ. Տերոյանը երկար չի մնում, և 1918 թ. վերջին գալիս է Երևան «որովհետև ուսուցչական կազմը (Գայանյան դպրոցի - Ռ. Ա.) արձակեցին, վրացիները հալածում էին հայերին...»:

1919 թ. փետրվարի 6-13-ը Երևանում տեղի ունեցած Արևմտահայերի 2-րդ համագումարում նա ընտրվում է գործադիր կոմիտեի նախագահ:

1919 թ. ապրիլին կայացած Արևմտահայ գործադիր կոմիտեի նիստերի որոշմամբ Վ. Տերոյանը մեկնում է Էջմիածին՝ հարթելու ՀՀ կառավարության



Վ. Տերոյանը բանտարկյալ, 1935 թ.

և գեներալ Անդրանիկ Օզանյանի միջև ծագած տարածայնությունները:

1919 թ. Վ. Տերոյանը ծառայության է անցել Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեում (Ամերկում), ուր տնօրինել է ուսումնական հաստատությունները, որբանցները և հիվանդանոցները:

Վ. Տերոյանը վիճակագրական տվյալներ է հավաքում Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում, Թիֆլիսում և Բաթումում ապաստանած արևմտահայ գաղթականներից: Նա կազմում է համապատասխան տեղեկագրեր, ուր արձանագրվում են փախստականների «ոչ միայն ընթացիկ, այլև 1915-ից առաջ ունեցած սոցիալ-տնտեսական կացությունը, և այդ բոլոր վիճակագրական տվյալները նա գետեղում է Ա-Դոյի (Հ. Տեր-Մարտիրոսյան) 1912 թ. լուս տեսած Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգներին նվիրված աշխատության համապատասխան էջերում:

Հայաստանում խորհրդային

կարգեր հաստատվելուց հետո Վ. Տերոյանը Հայաստանի Հեղկոմի կողմից նշանակվում է լիազոր Ամերկումում:

Հիրավի, Հայաստանի Հեղկոմի ղեկավարությունը, հանձին նախագահ Սարգսի Կասյանի և արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ալեքսանդր Բեկզադյանի, գիտակցելով, որ Ամերկումի աշխատակիցների հեռանալուց հետո խորհրդային պետությունն ի գորու չի լինի ապահովել բազմահազար որբերի տարրական կենսապայմանները, 1920 թ. դեկտեմբերի 14-ին հատուկ ուղերձով դիմում են Ամերկոմին: Ուղերձում ասվում էր. «Ըստունելով Մերձավոր Արևելքի Օգնության կոմիտեի գործունեությունը գաղթականական, որբական և ընդհանրապես խնամատարական գործում օգտակար և անհրաժեշտ Խորհրդային Հայաստանում, Հ.Խ.Ա.Հ. Հեղկոմը նրա գործունեության շարունակությունը և ընդարձակումը համարելով անպայման ցանկալի, խոստանում է նրան

իր լիակատար աջակցությունը և առաջարկում է Հ.Խ.Ս.Հ. բոլոր քաղաքացիական և զինվորական իշխանություններին ցույց տալ նոյն Կոմիտեի վարիչներին հարկ եղած աջակցությունը իրենց գործունեության ընթացքում:

Վ. Տերոյանը 1930-1931 թթ. աշխատում է ՀԽՍՀ Գրապալատում՝ որպես միջազգային գրքափոխանակման բաժնի վարիչ: Այդ պաշտոնում նամակագրական կապ է հաստատում Մխիթարյան միաբանության և նրա պարբերական «Հանդես ամսօրեայ»-ի խմբագրության հետ: Նա հատկապես կարևոր էր համարում Հայաստանում լույս տեսած հայագիտական բնույթի գրականությունը Մխիթարյանը ուղարկելու գործը, նաև ձեռնամուխ է լինում գրքերի ցուցակներ կազմելու, որով նպատակ ուներ լրացնել Գրապալատի գրադարանում եղած գրականության պակասը:

1931 թ. հունիսի 31-ին Վ. Տերոյանին՝ որպես «անբարեհուս տարրի» ազատում են ՀԽՍՀ Գրապալատում զբաղեցրած պաշտոնից: Լուսժողկոմատը նրան աշխատանքի է տեղափորում «Նոր ուղի» ամսագրի խմբագրությունում որպես տեխնիկական քարտուղար:

Բանտարկությունից ազատվելուց հետո, 1933 թ. նա դիմել է Լուսաշխին կից գիտաշխատողների սեկցիայի նախագահությանը՝ խնդրելով իրեն ընդունել որպես գիտաշխատող: Ըստանիքի գոյությունը պահպանելու համար Վ. Տերոյանը ստիպված է եղել աշխատել նաև որպես սրբագրիչ Պետի-

րատում և վարել օտար լեզուների մասնավոր դասեր:

Առավել հետաքրքրական է Վ. Տերոյանի գիտական ժառանգությունը, որը մինչև օրս, չնչին բացառությամբ, հնարավոր չի եղել ներկայացնել մեր հասարակությանը: Նրա գիտական աշխատություններից հիշատակելի են: «Բերգանի Էվոլյուցիոն թեորիայի մասին», «Կանտի պրագմատիզմը», «Սոցիոլոգիայի տեղը փիլիսոփայության մեջ», «Պանզերմանիզմը և

դատությունը» (լույս է տեսել 2010 թ. հետմահու), «Պրոլետարիատություն մեթոդի մասին» (լույս է տեսել 1968 թ. հետմահու), Սպինոզա՝ «Էքիկա», Հեգել՝ «Ոգու երևութարանությունը», Բերգան՝ «Ստեղծագործող էվոլյուցիան», Վինդելբրանդ՝ «Փիլիսոփայության պատմություն», Հիպոլիտ Տեն՝ «Գեղարվեստի փիլիսոփայությունը» (լույս է տեսել 1935 թ., երբ Վ. Տերոյանը ձերբակալված էր, և այդ պատճառով թարգմանչի անունը հանվեց արդեն տպված գրքից):

Վ. Տերոյանը թարգմանել է նաև գեղարվեստական երկեր. Անատոլ Ֆրանս՝ «Կարմիր շուշան» (հրատ. 1946 թ., հետմահու), Բլասկո Իրանիեզ՝ «Պիեր դը Լյուն», Հանրի Բարբյուս՝ «Կրակը» (հրատ. 1935 թ.) և այլն:

Առանձնապես հետաքրքիր են Վ. Տերոյանի հարաբերությունները Հ. Բարբյուսի հետ: Նրանց ծանոթության շարժադիրը եղել է Ասքանազ Մխավյանի հանձնարարությունը՝ ֆրանսերենից թարգմանել Հ. Բարբյուսի «Կրակը» երկը:

Երբ 1927 թ. ամռանը գրքի թարգմանությունը արդեն հիմնականում պատրաստ էր, Վ. Տերոյանը դիմում է հեղինակին՝ մի շաբթ հարցերի շուրջ պարզաբանումներ ստանալու նպատակով: Բանն այն է, որ Հ. Բարբյուսն իր ստեղծագործություններում հաճախ օգտագործել է ժարգոնային արտահայտություններ, զինվորական կենցաղին հատուկ խոսակցական դարձվածքներ և այլն:

Կարելի է ենթադրել, որ թարգմանչի և հեղինակի միջև աշխատյած նամակագրություն է




Վ. Տերոյանը քրոջ Զարուհու հետ,  
Բեղյան, 1911 թ.

եղել, քանի որ պահպանվել են երկու նամակ Հ. Բարբյուսից և երեք նամակ Վ. Տերյանից:

1929 թ. Վ. Տերյանն ավարտում է թարգմանությունը և տևական ձգձգումներից հետո գիրքը լույս է տեսնում: Վ. Տերյանը շտապում է ուրախալի լուրը հաղորդել այդ ժամանակ Մհսկվայում գտնվող Հ. Բարբյուսին: Վերջինս 1935 թ. օգոստոսի 14-ին Մհսկվայից ուղարկած նամակում գրում է. «Իմ թանկագին բարեկամ, ես բերկրանք զգացի՝ իմանալով, որ իմ «Կրակ» գրքի թարգմանությունը պետք է լույս տեսնի Հայաստանում: Ես շատ կցանկանայի ունենալ մեկ-երկու օրինակ այդ թարգմանությունից»: Հ. Բարբյուսը խնդրում է գիրքն ուղարկել Մհսկվա: Մենք չկարողացանք պարզել, թե նշանավոր գրողը ստացավ թարգմանությունը, թե ոչ: Բան այն էր, որ 1935 թ. օգոստոսի վերջին Հ. Բարբյուսը մահանում է Մհսկվայում:

Վ. Տերյանի գիտակազմակերպչական գործունեության մեջ հատուկ տեղ է գրավում Հայ փիլիսոփայական ընկերություն ստեղծելու ծրագիրը, որի նպատակն էր. «փիլիսոփայական գիտությունների և խնդիրների ուսումնասիրությունը և համապատասխան գրականության մշակումը հայոց լեզվով»:

1935 թ. ապրիլի 27-ին Վ. Տերյանը ՀԽՍՀ ժողովնախորհրդին է ներկայացրել հայերեն-գերմաներեն և ֆրանսերեն լեզուներով փիլիսոփայական բառարան հրատարակելու որոշման նախագիծ: 1931 թ. Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հանձնարարությունը և համապատասխան գրականության մշակումը հայոց լեզվով»:



Վ. Տերյան, 1900 թ.

Փիլիսոփայական բառարան: Միաժամանակ, մշակում է ծրագիր՝ 80000 բառ ընդգրկող գերմաներեն-հայերեն բառարան կազմելու համար: Եղել է Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի փիլիսոփայական տերմինարանական հանձնաժողովի աշխատակից:

Դեռևս 1916 թ. Թիֆլիսում Վ. Տերյանը գրում է բավական հետաքրքիր մտքեր պարունակող մի հոդված՝ «Ծրագիր վերաշինության» վերնագրով: Այստեղ նա ներկայացնում է նաև արդյունաբերության, լուսավորության, գյուղատնտեսության վերաշինության, իր կարծիքով նախընտրելի տնտեսաձևը. «Կոպերասիոնը կազմելու է մեր տնտեսական վերաշինության հիմնական սկզբունքը: Վերաշինությունը լինելու է ազգային ջանքերով»:

Իր գրառումներում Վ. Տերյանն անդրադառնում է հոդային հարցին և բնապահպանական խնդիրներին: Նա

հատկապես կենտրոնացել է լուսավորության հիմնահարցերի վրա, և ընդգծել է գիտության և տնտեսության կապը:

Վ. Տերյանի մտահոգության առարկան են եղել հայ գաղթականների և որբերի խնդիրները: Նրա մտորումների արդյունքն է «Գաղթական հարցեր» անտիպ հոդվածը, ուր նա գրում է. «Ամեն հասարակարգի մեջ էլ գոյություն են ունեցել աղքատներ և նպաստընկալներ, բայց նպաստընկալ ժողովուրդ, միայն գաղթականությունն է ձանաչում: Նպաստընկալ ժողովուրդ, մի անկարելիություն է, մի հասարակագիտական անհեթեթություն: Ազգային կյանքի մահն է դա, և անպատվությունը: Գլխավորն է՝ մենք կարողանանք ասել – մենք ազգ ենք, մեր ազգը նպաստընկալ ազգ չէ: Աշխատանքի կազմակերպությունը, ահա կոնկրետ առաջարկություններից մեկը»:


Խորհրդային իշխանության տարիներին Վ. Տերյանը ձերբակալվել է չորս անգամ: Առաջին ձերբակալությունը տեղի է ունեցել 1922 թ. օգոստոսի 4-ին: Նա և 17 հոգի ևս, ամրատանվել են ՀՅԴ անդամ լինելու և Թիֆլիսում Ձեմալ փաշայի սպանությանը մեղսակից լինելու մեջ: Հետաքանության ընթացքում չի հաջողվում անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերել, ուստի Վ. Տերյանն ազատ է արձակվում:

Երկրորդ անգամ նա ձերբակալվում է 1924 թ. հոկտեմբերի 6-ին՝ ամբաստանվերով Ամերկումի Լենինականի մասնաճյուղում դաշնակցական գործունեություն ծավալելու մեջ: Վ. Տերյանի մասով ներկայացված մեղադրական եզրակացության մեջ նշվում է, որ նա՝ «որպես դաշնակ, հայտնի է վաղուց:

մասնակցություն է ունեցել Թուրքիայում տեղի ունեցած անկարգություններին, որի համար պատժվել է թուրք իշխանությունների կողմից: Ամերկումում մշտապես գտնվելով պատասխանատու պաշտոններում՝ Դերոյանը (Տերոյանը – Ռ. Ս.) համակողմանի աջակցություն է ցուցաբերել Դ/կ (Դաշնակցություն կուսակցության – Ռ. Ս.) ընդհատական քններին, իր երաշխավորություններով և հանձնարարականներով Ամերկումում աշխատանքի ընդունել Դ/կ անգործ անդամներին: Բայց այդ, նա անձամբ մասնակցություն

է ունեցել հակախորհրդային աշխատանքում, սակայն այնպես հմուտ և զգույշ, որ դժվար է հաստատել փաստերով»:

Չնայած ամբաստանյալները, այդ թվում Վ. Տերոյանը, կտրականապես մերժել են իրենց հարուցված մեղադրանքները, գործը քննող լիազոր Մ. Միխայլովը 1925 թ. ապրիլի 15-ին առաջարկում է նրանց դատապարտել հինգ տարվա արտրի: Այս վճիռը, սակայն, 1925 թ. հուլիսի 21-ին բեկանվում է Ասդրֆեդերացիայի Պետական քաղաքական վարչության կողմից, և ամբաստանյալներն ազատ են արձակվում:



Վ. Տերոյանի եղբայր Վազգենը  
1896-1897 թթ.

Այս ձերբակալության մասնամասնությունների մասին տեղեկանում ենք Վ. Տերոյանի 1925 թ. հունիսի 15-ի Ասդրֆեդերացիայի Կենտգործկոմի նախագահին ուղղված բողոք-դիմումից, որը նա ուղարկել էր Թիֆլիսի Մետեխի տիբրահոչակբանտի հիվանդանոցից: Վ. Տերոյանը գրում է, որ ինը ամիս է ինչ բանտարկված է և ոչ մի հետաքննություն չի կատարվել: Իսկ Արտակարգ հանձնաժողովի նախագահ Ս. Մելիք-Հովսեփյանին հղած իր բազմաթիվ

դիմումները մնացել են անպատճախան: Ի վերջո, Ս. Մելիք-Հովսեփյանը բարեհաձել է ներկայացնել այն «ծանրակշիռ փաստերը», որոնց հիման վրա կատարվել է ձերբակալությունը:

Երրորդ անգամ Վ. Տերոյանը ձերբակալվել է 1931 թ. օգոստոսի 5-ին և ամբաստանվել լրտեսության մեջ: Նման անհիմն մեղադրանքի համար առիթ է հանդիսացել 1918 թ. ամռանը մի խումբ հայ մտավորականների կողմից Թիֆլիսում հիմնած Հայ-գերմանական ընկերությունը: Նրա հիմնադիրների թվում էին՝ Ստեփան Կանայանը, Սանուկ Աբեղյանը,

Վարազդատ Տերոյանը և ուրիշներ՝ մոտ 20 հոգի: Հարցաքննության ժամանակ Վ. Տերոյանը հետևյալ պարզաբնություն է տվել. «1918 թ. կեսերին թուրքերի տեղ Թիֆլիս մտան գերմանացիները, հայ ինտելիգենցիայի, գլխավորապես նախկին գերմանական (հայ) ուսանողների (նկատի ունի տարրեր տարիներ Գերմանիայում ուսանած հայերի – Ռ. Ս.) շրջանում միտք հղացավ կազմել հայ-գերմանական ընկերություն, կուտուր-քաղաքական մերձեցման համար հող նախապատրաստելու նպատակով Համաշխարհային պատերազմի



պատմական մոմենտում, երբ բանակները (գերմանական) ոչ մի ֆրոնտում լուրջ պարտություն չէին կրել և ընդհանրապես Կովկասյան ֆրոնտում, հակառակ իրենց դաշնակից թուրքերի ցանկության՝ իրենք էին մտնում Թիֆլիս, արգելում թուրքերի մուտքն այնտեղ, գերմանական օրինտացիայի այս նպաստավոր պայմաններում, սակայն, հայ ինտելիգենցիայի համար բավական հանդուզն մի նախաձեռնություն էր հիմնադրությունը»:

Վերը նշվածը վկայում է ոչ թե հայ մտավորականության, մասնավորապես Վ. Տերոյանի «լրտեսական» գործունեության, այլ նրանց կողմից գերմանացիների և թուրքերի միջև եղած հակառակություններն ի նպաստ հայ ժողովրդի օգտագործելու մասին:

Ուստի, օպերատիվ նկատառումներով 1932 թ. հունվարի 25-ին Վ. Տերոյանն ազատ է արձակվում: Սակայն նրա նկատմամբ ուժեղացվում է գործակալական հսկողությունը:

Բանտարկությունից վերա-

դառնալուց հետո, հավանաբար կանխազգալով մոտալուտ ձերբակալությունը, Վ. Տերոյանը փորձում է պաշտպանություն գտնել ՀԿ(ԲԿ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի մոտ: Վ. Տերոյանի հարազատների վկայությամբ, նա եղել է Ա. Խանջյանի ուսուցիչը նրանք եղել են մտերիմներ, Վ. Տերոյանի ձանաշել է Ա. Խանջյանի հորը՝ Ղևոնդին: Այս հաստատելու է գալիս Վ. Տերոյանի նամակն՝ ուղղված Ա. Խանջյանին. «Ընկեր Խանջյան: Ավարտելով իմ հերթական բանտարկությունը, մեծ ցանկություն զգացի, որ նման դեպքերում, առանց մեծ դժվարություններ հարուցելու, Կենտկոմի քարտուղարն ինձ ընդունում է երկարատև խոսակցության: Այս անգամ, հույս ունեմ, որ մի առանձին դժվարություն չպահանջանա սերկայանա այդ ավանդական սովորությունը գործադրելու նույնությամբ, ուստի խնդրում եմ, քարի եղեք նշանակել տեղը և ժամանակը՝ պարտուպահանջի խնդիրներն ամենակարծ ձևով վերջացնելու համար և որպեսզի ասեմ, ինչ

որ գրել չպիտի կարողանամ»:

Վ. Տերոյանի վերջին և ձականագրական ձերբակալությունը տեղի է ունենում 1935 թ. օգոստոսի 17-ին: Եթե նախորդ երեք ձերբակալությունների ժամանակ նրան ձիգերի գերազույն լարումով, և հավանաբար Ա. Սիավյանի, Ա. Հովհաննիսիայանի և Գլխավորապես Ա. Խանջյանի աջակցությամբ, հաջողվել էր ապացուցել իր անմեղությունը, այս դեպքում, ստպիչներն ահարեկչության պայմաններում դա անհնար էր: Վ. Տերոյանին ներկայացնում են մեղադրանքներ, որ նա հանցանոր լուրջուն է պահել.

1. ՆԳԺԿ-ին չի հայտնել նախկին գեներալ-լեյտենանատ Մովսես Միլիկյանի միապետական հայացքների մասին:

2. Աքսորավայրից վերադարձած, ՀՅԴ նախկին անդամ Հոփիսիմե Մուշեղյանի կողմից Հայաստանում դաշնակցական կազմակերպությունների վերականգնման փորձերի մասին:

3. Երգիծաբան Լեռ Կամսարի (Արամ Թովմանյան) հակախորհրդային հայացքների մասին:



Դատավարության ժամանակ Վ. Տերյանը հերքել է բոլոր մեղադրանքները: Նա հայտնել է, որ գեներալ Մ. Միլիկյանի հետ ծանրացել է 1924 թ., Լենինականում, ուր վերջինս աշխատում էր Ամերկովի տեղի մասնաճյուղում: Երևանում եղել են հարևաններ, ունեցել են ջերմ, բարեկամական հարաբերություններ, սակայն հակապետական բնույթի գրուցներ չեն վարել: Հ. Մուշեղյանի հետ խոսակցությունները եղել են առօրյա թեմաներով, և դրանք չեն առնչվել ՀՅԴ-ի ընդհատակյա գործունեության հետ: Իսկ ինչ վերաբերում է Լեռ Կամսարին, ապա իրենք մանկության ընկերներ են եղել և դրանով է բացատրվում իրենց մտերմությունը:

Սակայն կիրառված բռնությունների պատճառով Վ. Տերյանը «խոստովանել» և «հաստատել» է հարուցված մեղադրանքները:

1936 թ. հունվարի 4-ին ԽՍՀՄ ՆԳԺԿ-ին կից հատուկ խորհրդակցությունը Վ. Տերյանին դատապարտել է երեք

տարվա բանտարկության, որը նա պետք է կրեր Միբիրում ուղղիչ աշխատանքային ձամբարում:

Ըստ պաշտոնական տեղեկանքի, Վ. Տերյանը վախճանվել է 1938 թ. փետրվարի 6-ին, 51 տարեկան հասակում Մարիխնակում, ԽՍՀՄ - Նովոսիբիրսկի մարզի Օռլովո-Ռոգովսկյան բաժնի համակենտրոնացման ձամբարում:

Տերյանների ընտանիքին սպասում էր մեկ ծանր հարված ևս: Ազգայնամոլության ամրատանությամբ ձերբակալվում է Վ. Տերյանի կողմանց՝ Մարիխամի եղբայրը, անվանի վիրարույժ, Հայաստանում ժամանակակից վիրարուժության հիմնադիրներից մեկը՝ պրոֆեսոր Հարություն Միրզա-Ավագյանը (1879-1938): Ամբաստանությունը լոկ առիթ էր նրան ձերբակալելու համար: Հ. Միրզա-Ավագյանը այն երեք բժիշկների թվում էր եղել, որոնք հրաժարվել էին վկայել Ա. Խանջյանի «ինքնասպանությունը»: Տերյանների ընտանիքը գրկվում է իր վերջին պաշտպանից ու

հովանավորից: Այժմ նրանք համարվում էին «երկկողմանի ժողովրդի թշնամիներ»:

Ի. Ստալինի մահից և նրա մի շարք կամակատարների ձերբակալությունից հետո միայն հնարավոր դարձավ վերականգնել 1930-ական թվականներին անհիմ բանտարկվածների բարի անունը:

ՀԽՍՀ դատախազությունը, իմբ ընդունելով Վ. Տերյանի դատեր՝ Ն. Դերյանի 1954 թ. գրված դիմումը, հարուցում է քրեական գործ և 1955 թ. մարտի 4-ից մինչև 1956 թ. մարտի 12-ը հետաքննություն կատարում, որի արդյունքում Տերյանի ընտանիքին պաշտոնակես հայտնում են. «ՀԽՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերի Դատական կոլեգիան 1956 թ. փետրվարի 15-ի իր որոշման համաձայն, Վարագդատ Դերյանի նկատմամբ ՆԳԺԿ-ի հատուկ խորհրդակցության 1936 թ. հունվարի 4-ի վճիռը չեղյալ է հայտարարել և ապացույցների բացակայության պատճառով գործը կարձել»:

ԲՐԵՆԴ ԵՎ  
ԲՐԵՆԴԻՆԳ



ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՅԱՆ

Բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ



**F**րեսդինգի (ֆիրմային  
ոճ) նպատակը քրեն-  
դի հստակ պատկերի  
ստեղծումն ու հաղորդակցության  
ուղղության հստակ ձևավորումն  
է:

Բրենդի ստեղծումը ար-  
վեստ է՝ հիմնված «շոկայի» խո-  
րը իմացության վրա: Բրենդի  
ստեղծման գործընթացը բավա-  
կան դժվար է և երկարատև:

Ներկայումս խիստ բարձրացել է ապրանքներ արտադրողների և ծառայություններ մատուցողների կորպորատիվ տարբերանշանների, սիմվոլների դերը: Խոսքը մասնավորապես ապրանքային նշանների մասին է. դրանք սպառողների կողմից դիտվում են ոչ միայն որպես որակի երաշխիք, այլև ընկերության գործարար համբավի կարևոր բաղադրիչ: Մեր օրերում ընկերությունների համար գրանցված ապրանքային նշան ունենալը դառնում է ոչ միայն պատվարեր, այլև անհրաժեշտ: Չէ՞ որ ապրանքային նշանն ունի իր սեփական գինը, անկախ ապրանքի կամ ծառայության արժեքից: Այն դիտվում է որպես ընկերության թանկարժեք և երկարատև ակտիվ: Շատ կարևոր է ապրանքային նշանի

## ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ

Բրենդը նյութական և ոչ նյութական ակտիվների համակցություն է, որը սպառողների մեջ ձևավորում է ընկերության(ապրանքի, ծառայության, արտադրողի) համբավը (իմիջը), առաջացնում դրական վերաբերմունք և հայտնի է սպառողների մեծ քանակի, անգամ նրանց, ովքեր չեն օգտվում ապրանքից՝ ծառայությունից:

Դեռևս Հին Հռոմում արտադրողները արտադրանքի վրա դնում էին սեփական դրոշմանիշը: Այս երևոյթը հասուկ նշանակություն ձեռք բերեց այն ժամանակ, երբ առևտուրն ընդգրկեց ողջ Եվրոպան և տարածվեց դեպի Մերձավոր Արևելք: Դրոշմանիշը վկայում էր ապրանքի ինքնությունը, բացի այդ, այն օգնում էր առավելապես անգրագետ բնակչությանը ճանաչելու անհրաժեշտ ապրանքները: Միջին դարերում շրջանառության մեջ հայտնվեցին նոր տեսակի ապրանքանիշեր՝ համբարության նշանները: Համբարությունը միևնույն արհեստով զբաղվող արհեստավորների միությունն է: Ցուրաքանչյուր համբարություն ուներ հեշտ ճանաչելի **ապրանքանիշ կամ լոգոտիպ**: Այս շրջանում ապրանքանիշերն ունեին նույն նշանակությունը, ինչ Հին Հռոմում: Արդյունաբերական հեղափոխության ժամանակներում ապրանքային նշանը դարձավ ընկերությունների արդյունաբերության մասնակիության որակով: Վերջիններիս բանակը շուկայում շատ մեծ է: Գոյություն ունեն բազմաթիվ ընկերություններ, որոնք արտադրում են նույնարնույթ ապրանքներ, մատուցում միատեսակ ծառայություններ: Ապրանքային նշանը ոչ միայն արտացոլում է ապրանքների և ծառայությունների որակը և համբավը, այլև օգնում սպառողին ընտրություն կատարելիս կողմնորոշվել դրանց բազմազանության մեջ: Այս իրավիճակում մեծապես բարձրանում է գովազդի դերը, որի խնդիրն է՝ ապրանքը, ծառայությունը, կազմակերպությունը, ապրանքային նշանը դարձնել բրենդ: Օրինակ, համակարգչային միկրոսխեմաները արտադրող Intel ընկերությունը այս հարցում հասել է ցանկալի արդյունքների. հաշվի առնելով, որ միկրոսխեմաները



սպառողների  
աշբի համար  
տեսանելի չեն և  
արտաքնապես չեն տար-

բերվում այլ արտադրողների միկրոսխեմաներից, իսկ սպառողներն էլ մեծամասմբ գլուխ չեն հանում դրանցից՝ Intel ընկերությունը սկսեց ակտիվությունը գովազդել իր ապրանքը: Արդյունքում Intel-ը դարձավ բրենդ, և այժմ հաճախորդները այդում են, որպեսզի իրենց համակարգիչներն անպայման համարված լինեն Intel միկրոսխեմաներով, իսկ արտադրողներն էլ, իրենց հերթին, պատվիրում են հենց Intel-ի միկրոսխեմաները, ինչը Intel-ի համար ստեղծել է առևտրային մեսանորի կատարյալ իրավիճակ: Intel ընկերությունը ժամանակին պնդեց, որ իր ապրանքային նշանը փակցված լինի վաճառքի հանվող բոլոր համակարգիչների վրա:

Սպառողը շատ քիչ դեպքերում է կարողանում հիմնավորել իր ընտրությունը: Միակ շարժիչ ուժը տվյալ դեպքում գովազդն է, որն օգնում է համոզել սպառողին ապրանքի բացահկության հարցում:

Բրենդի կառավարման գործնթացը, որը ներառում է բրենդի ստեղծումը, դրա առաջընթացը շուկայում և հարմարումը



շուկայի անընդհատ փոփոխվող պահանջներին՝ տեսարաններն անվանում են **բրենդիսգ**: Գործնականում բրենդիսգը բնորոշվում է որպես գործողությունների ամբողջություն՝ ուղղված շուկայում ապրանքների/ծառայությունների առաջևադաշտման ռազմավարության իրականացմանը՝ բրենդիս ստեղծմանը: Հարկ է նշել, որ այդ ռազմավարությունը պետք է մշակվի ընկերության ստեղծման առաջին իսկ օրվանից և հետևողականորեն իրականացվի դրա գոյության ամբողջ ընթացքում: Բրենդիս ստեղծումը ընկերության գործունեության ուղղվածությունն է, որը ներառում է հստակ գաղափարախոսության մշակում և իրագործում: Այդ գաղափարախոսությունն ուղղված է հանրության գիտակցության մեջ ընկերության, նրա արտադրած ապրանքների, մատուցվող ծառայությունների մասին իդեալական պատկերացում ձևավորելուն: Գործնականում

դա հանգում է որոշակի իմաստով՝ առասպելագործության, քանզի ընկերության, նրա կողմից արտադրվող ապրանքների, մատուցվող ծառայությունների մասին հանրության պատկերացումը շատ անգամ կարող է բոլորովին չհամապատասխանել իրականությանը։ Հարկ է նշել, որ այդ պատկերացման ձևավորման ուղիների շարքում ամենաարդյունավետը, թերևս, **գովազդն** է։ Բրենդի առաջևադարձման գործընթացում շատ կարևոր է այնպիսի ապրանքների և ծառայությունների ստեղծումը, որոնք սպառողը կգերադափակի շուկայում առկա ապրանքներից և ծառայություններից։ Այդ նպատակով անհրաժեշտ է համակողմանիորեն ուսումնասիրել շուկայում առկա իրավիճակը, արդի պահանջները, ձիշտգնահատել այն տեղը, որը արտադրվող ապրանքը/մատուցվող ծառայությունը գրավում է ինչպես շուկայում, այնպես էլ մարդկանց գիտակցության մեջ։

Մինույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, թե որքանով է այդ դերը համապատասխանում կանխատեսումներին։ Բրենդի կայացման գործընթացում պետք է հաշվի առնել բոլոր հնարավոր փոփոխությունները, որոնք կարող են տեղի ունենալ շուկայում։ հաշվի են առնվում նաև մարդկանց ձաշակի հնարավոր փոփոխությունները։ Բրենդինգը սպառողների նվաճման և պահպանման արդյունավետ մեջող է՝ գործունեություն, որն ուղղված է սպառողի կողմից ապրանքի/ծառայության երկարատև նախընտրելիության ստեղծմանը։ Որպես բրենդի կարևորագույն տարր՝ հանդես է գալիս **բրենդային իմիջը**, որը բնորոշվում է որպես մարդկանց գիտակցության մեջ բրենդի իրական և թվացյալ առավելությունների ընկալում, որը ձևավորվում է ժամանակի ընթացքում իրականացվող մշտական գովազդային արշավների միջոցով և հաս-

տատվում է սպառողների անմիջական ընկալմամբ: Բրենդային իմիջի հետ սերտորեն կապված է և նրա հետ գրեթե նույնանում է կորպորատիվ իմիջը: Այն բնութագրում է որպես մտավոր պատկեր, որը հայտնվում է ֆիրմայի անվանումը հիշատակելիս: Հոգեբանական տպավորությունների խառնուրդ է, որն անընդհատ փոխվում է որոշակի հանգամանքների, ԶԼՄ-ների կողմից ֆիրմայի լուսաբանման, գովազդի և այլնի ուժով: Ֆիրմայի համբավի և վարկանիշի նման դա ավելի շատ հանրության տպավորությունն է, ընկալումը ֆիրմայի մասին, քան վերջինիս փաստացի դրությունը: Ի տարբերություն կորպորատիվ նույնության՝ այս հեղիեղուկ է և կարող է փոխվել դրականից դեպի բացասական և չեզոք: Խոշոր կազմակերպությունները օգտագործում են կորպորատիվ գովազդի տարբեր եղանակներ իրենց իմիջի բարձրացման համար որպես մատակարար, գործառու, հաճախորդ և վարկառու իրենց ցանկահությունը ապահովելու նպատակով: Օրինակ՝ որպես հաջողակ բիզնես Apple computers ընկերության իմիջը վերջին երեսուն տարիների ընթացքում խամրել և վե-

րականգնվել է մի քանի անգամ, բայց որպես նորարարական ընկերություն նրա համբավը/իմիջը, որը փոխանցվում է նրա անվան և բազմագույն խնձորների լոգոյի ձևով, մասց անձեռնմխելի այդ նույն ժամանակահատվածում: Բրենդային իմիջի ստեղծողները հաշվի են առնում ապրանքի ֆիզիկական հատկանիշները, գգացուները, որ այն առաջացնում է մարդկանց մեջ և աշխատում են ոչ միայն մարդկային գիտակցության, այլև գգացողությունների վրա՝ այդ կերպ ազդեցու ենթագիտակցության վրա: Օրինակ. Coca-Cola գրվացուցիչ ըմպելիքի գովազդի ժամանակ շիշը բացելիս արձակվող ձայնը (և ոչ միայն) խոր ազդեցություն է թողնում մարդկանց ենթագիտակցականի վրա և ըմպելիքը փորձելու անհագցանկություն առաջացնում: Եվ եթե որևէ բրենդ շուկայում հաջողության է հասել, ապա միշտ էլ կգտնվեն այնպիսի ընկերություններ/անհատներ, որոնք կփորձեն կրկնել վերջինիս հաջողակ կերպարը: Այդ իսկ պատճառով էլ բրենդինգը մշտապես զարգացող գործընթաց է, որի նպատակներից մեկը մրցակիցներին պայքարից դուրս մղելն է:

### Ամենակարևորը ապրան-

**քանիշի անվանումն է,** որն իրականում այդքան էլ հեշտ գործ չէ: Ըստրել մի անուն, որը պետք է ուղեկցի քեզ հետագա տարիների ընթացքում, դառնա քո դրոշակը շուկայում, տեղ գտնի սպառողների հիշողության մեջ, պայքարի մրցակիցների հետ և այլն: Սա իհարկե գիտակցում են շատերը, այդ պատճառով էլ մեծ գումարներ ու ժամանակ են վատնում միայն անուն որոշելու համար: Այն պետք է լինի հնչեղ, հեշտ հիշվող և այլն:

Բրենդային ինքնության առավել հիշարժան հատկանիշը բրենդի անունն է, որն իրականացնում է մի շարք գործառույթներ.

1. Հատկանշում է ընկերությունը կամ ապրանքը շեշտադրելով նրա եզակիությունը:

2. Տախիս է ընկերության կամ ապրանքի առավելությունների նկարագրությունը:

3. Մրցակիցների դեմ ծառայում է որպես իրավական արգելք:

4. Համարվում է ընկերության ինտելեկտուալ կապիտալը և ոչ նյութական արժեքը: Բրենդի անվան ընտրության ժամանակ պետք է հաշվի առնել հետևյալ չափանիշները.

1) ընկերության ուղղակա-



րական նպատակները (օրինակ՝ բրենդը կարող է նախատեսված լինել երկրի ներսում ներքին սպառման կամ համաշխարհային շուկայի համար),

2) բրենդային ձարտարապետությունը և ենթարբենադրը,

3) իրավական պաշտպանության անհրաժեշտությունը,

4) ապրանքի նորարարական աստիճանը,

5) պահանջվող զգացողություն ստեղծելու անհրաժեշտությունը,

6) անունը կարող է արտահայտել որևէ թեմա (Սայրական խնամք), ապրանքի տեսակ («Ալավոնական պատառներ», «Սովորական փոշի»), անձնանուն կամ անձնական հատկանիշներ (ԼուսԱստղ, Կարգին շինանյութ):


Բրենդի անվան ստեղծման ժամանակ կարող են կիրառվել տարրեր մեթոդներ, այդ թվում՝ ուղեղների գրոհ, համակարգչային ընտրություն, լեզվաբանական վերլուծություն: Բոլոր մեթոդների ընտրությունը հիմնվում է բրենդի առանցքային արժեքների վրա: Եթե անունների ցուցակը արդեն կազմված է լինում, դրանից ընտրվում են առանցքային մի քանի անուններ և ենթարկվում վերլուծության: ստուգվում է վերջիններիս իրավական մաքրության, արտասանության պարզության, ինչպես նաև այլ լեզուներում բացասական զուգորդումների առկայությունը/բացակայությունը և այլն:

Պատմությունը ցույց է տալիս, որ հոչակավոր բրենդների անվանումները, որոնք այսօր թագավորում են մեր սպառողական ուղեղներում, ի հայտ են եկել ոչ թե պրոֆեսիոնալ նեյմինգի կամ հետազոտությունների արդյունքում, այլ հիմ-

նականում պատահականորեն՝ կապված որևէ անձի անվան, իրադարձության կամ տեղանքի հետ: Բերենք հեղինակավոր ու սիրված ապրանքանիշների անվանակոչման օրինակներ:

## 1. Apple

Խնձորը Ստիվ Ջոբսի սիրելի միրգն էր: Նա ուղիղ 3 ամիս մտածել է ընկերության անվանման շուրջ: Մի օր Էլ Գործընկերների վրա բարկանում է. «Եթե մինչև ժամը 5-ը ինձ տարրերակ չառաջարկեք, ես ընկերությունը կկոչեմ Apple»: Ինչպես երևում է նրանք չին կարողացել որևէ անուն որոշել: Իսկ Apples Macintosh-ը խնձորի տեսակ է:



## 2. BMW

Հապավում է՝ Bayerische Motoren Werke, որը նշանակում է Բայերի շարժիչների գործարան: Բանս այն է, որ ընկերությունն ի սկզբանե գրաղվում էր ինքնաթիռների շարժիչների արտադրությամբ: Ի դեպ, ընկերության լոգոն հենց դա էլ խորհրդանշում է՝ երկնքում միացրած շարժիչ:



### 3. Coca-Cola

Երբ այն ստեղծվեց, բաղադրության հիմական տարրերը կոլայի տերևներն ու արևադարձային կոլայի պտուղներն էին:



## Ի ԴԵՊ

### ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՅՏԱԵԼ ԵԼ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱՆՁԵՏԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ\*

Յորքի համալսարանի գիտնականները հանգել են այն եզրակացության, որ անգլերենի բրիտանական բարբառը 50 տարի անց կանհետանա, իսկ դրան կիրարինի լեզվի լուղոնյան բազմամշակութային տարրերակը:

Լեզվի դասական տարրերակի անհետացումը հետազոտողները կապում են դրա համընդհանուր դերի, մասնավորապես՝ ժամանակակից Լոնդոնի տարածքում ապրող կարիքյան, արևմտաֆ-

րիկյան և ասիական համայնքների ազդեցության հետ:

Կանխատեսվող փոփոխությունները կարող են վերաբերել բացառապես լեզվի հնչյունակազմությանը, բայց ոչ բերականությանը: Օրինակ՝ կանհետանա **th** հնչյունը, որի տեղը, բարից կախված, կըրադեցնեն **f**, **d** կամ **v** հնչյունները: Դրա հետևանքով **thick**-ը կարող է վերածվել **fick**-ի:

Ս հնչյունն ամենուր կիրխարինվի **oo**-ով: Օրինակ՝ **duke**-ը կըրածվի **dook**-ի, **news**-ը՝ **nooze**-ի, **beauty**-ս՝ **booty**-ի: Գիտնականների կարծիքով՝ հնչյունակազմության փոփոխությունը

կիանգեցնի որոշ բառերի միանական արտասանության, օրինակ՝ **wed** և **red**, **paw** և **pool**:

Նշվում է նաև, որ կլրճատվի հնչյունների բանակը բառում: Կրծատման կենթարկվի կրնանանսների կոմպլեքսը (այն բաղադայնների գորգակցումը, որոնց արանքում բացակայում է ձայնավորը): Օրինակ՝ **text** բառում կանհետանա վերջին **t**-ն և այն կվերածվի **tex**-ի:

Մասնագետների կարծիքով՝ բրիտանական դասական բարբառի հնչյունակազմության փոփոխությունն անգլերեն լեզվի բնական զարգացման արդյունք է:

\* <http://www.km.ru/science-tech/2016/09/29-nauchnye-issledovaniya-i-o-tvetytiya-v-mire-785325-uchenye-nazvali-sroki-ische>

# ԴՈՒՔ ՏԽՈՒՐ ԵՔ: ԼՍԵՇ ՏԽՈՒՐ ԵՐԱԺԾՏՈՒԹՅՈՒՆ\*

**Թ**վում է տխուր տրամադրությունը պետք է ցրվի առույգ, ուրախ երաժշտությունից: Սակայն աշխարհի տարբեր երկրներում հոգեբանների կատարած հարցումները և գիտափորձերը ցույց են տվել, որ պետք է ընտրել հակառակը:



772 մարդու հարցումները (408-ը Եվրոպայից, մյուսները՝ Ասիայից և Հյուսիսային Ամերիկայից) և նրանց հետ կատարված փորձերը ցույց են տվել, որ տխուր երաժշտությունն առաջացնում է դրական շատ զգացմունքներ և հոյզեր, մասնավորապես՝ անցյալի հաճելի հիշողություններ: Մովորաբար

մարդիկ լսում են երաժշտական տխուր ստեղծագործություններ հուզական սթրեսի պահերին, երբ սփոփանքի կարիք ունեն կամ մենակություն են զգում:


Որպես երաժշտական սիրված տխուր ստեղծագործություն՝ հետազոտության մասնակիցներն ամենից հաճախ հիշատակել են Բեթհովենի (1770–1827) «Լուսի սոնատը», չինացի կոմպոզիտոր Վու Ցուկանի (1893–1950) «Լուսի արտացոլումը սրբազն աղբյուրի ջրերում» և ամերիկացի կոմպոզիտոր Սեմյուել Բարբերի (1910–1981) աղաջիռն լարայինների համար:

\* «Наука и жизнь», 2015, N 4.



Վերջին 30 տարում թռչունների թվաքանակը Եվրոպայում կրծատվել է 421 միլիոն միավորով:


\* «Наука и жизнь», 2015, N 4.




Հաշվարկվել է, որ աֆրիկյան փղի գենոմում կա հոտառությունն ապահովող գրեթե 2000 գեն: Շան դեպքում այդ թիվը փոքր է 2 անգամ, իսկ մարդու դեպքում՝ 5 անգամ:




Մարդու գործունեությանը չենթարկված կուսական անտառների մակերեսը կազմում է մոլորակի բոլոր անտառների 23,5 %:



ՄԱԿ-ի Պարենի և զյուղատնտեսության կազմակերպության տվյալներով՝ մարդկության սննդի 99 %-ն ապահովում է ցամաքը. մինչդեռ օվիկանուները, ծովերը, գետերը և լճերը՝ ընդամենը 0,6 %-ը:



2014 թ. Աֆրիկայում առյուծների թիվը, ըստ գնահատումների, եղել է 35 հազար: 1980 թ. այդ թիվը 76 հազար էր:



# «ԽԵԼԱՑԻ ՆՅՈՒԹԵՐԻ» ՆՈՐ ԴԱՍ



**Ի՞նչ է գրաֆենը**  
21-րդ դարի հեղափոխական նյութ, մեկ ատոմական շերտով ածխածնի հաղորդիչ, երկշափ, գերամուր բարակ թաղանթ... Ահա այսպես է բնութագրվում գրաֆենը, նյութ, որի հայտնագործումը դարասկզբին իրավամբ ցնցեց գիտական աշխարհը: Գրաֆենն օժտված է իսկապես եզակի հատկություններով: Շնորհիվ միաշերտ, միևնույն ժամանակ կատարյալ ատոմային ցանցի, սենյակային ջերմաստիճանում գրաֆենում էլեկտրոնների արագությունն ունի մեծ արժեք, քանի որ բացակայում են ցրումները ցանցի անկատա-

րելությունների վրա: Ատոմային ցանցը ձևավորված է ածխածնի ատոմների միջև ամուր, բայց միևնույն ժամանակ ձկուն կապերով, որոնք էլ այդ բա-







## ՀԱԿՈԲ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Գիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու ԵՊՀ կիսահաղորդչային սարքերի և նանոտեխնոլոգիաների կենտրոնի առաջատար գիտաշխատող  
Գիտական հետաքրքրություններ՝ կիսահաղորդչային բարակ թաղանթների տեխնոլոգիա, նանոտեխնոլոգիաներ, հեղուկ բյուրեղների օպտիկա, պոլիմերային հեղուկ բյուրեղներ  
Էլ. փոստ: marhakob@ysu.am

րակթաղանթային միջավայրը դարձնում են և ձկուն, և գերամուր:

Բարակ, թափանցիկ ու ձկուն զգայակային էկրաններ, արդ-



յունավետ արևային մարտկոցներ և լուսադիոդներ, գերամուր կազմածող (կոմպոզիտ) նյութեր, տարրեր գագերի համար ընտրողունակ զգայակներ, կենսաբանական թաղանքներ, օվկիանոսի աղաջրերի մաքրման առավել էժան զտիչներ, մեծ ունակությամբ կոնդենսատորներ... Սա գրաֆենի հնարավոր կիրառությունների ոչ լրիվ ցանկն է:

Գրաֆենի նանոմետրական չափերը հնարավորություն են տալիս ստեղծելու սկզբունքուն նոր տիպի տվիչներ կենսաբժշկական հետազոտությունների համար: Այդպիսի սարքերը կարող են հեշտությամբ ներթափանցել մարդու մարմնի մեջ, հետազոտել հյուսվածքները և անհրաժեշտության դեպքում դեղորայքն ուղղակի հասցնել օրգանիզմի համապատասխան տեղը: Բառացիորեն վերջերս իլինոյսի (ԱՄՆ) համալսարանի գիտնականները ցույց են տվել, որ գրաֆե-

նի հպումը քաղցկեղային թջջներին համան տեղում փոխում է դրանց հատկությունները, և այդ փոփոխությունը կարելի է գրանցել ժամանակակից ռամանյան սպեկտրադիտման մեթոդով:

Ինչպես պարզել են Քեմբրիջի (Ասգլիա) գրաֆենի կենսարուսի աշխատակիցները, լինելով չեզոք, գրաֆենը չի վնասում առողջ կենսաբանական թջջները և չի ազդում դրանց էլեկտրաֆիզիոլոգիական ակտիվության վրա: Վերջինս էլ նշանակում է, որ այն կարող է դահնալ շատ հեռանկարային նյութ ներունային այրոթեզների պարագաներու համար՝ փոխարինելով վոլֆրամե կամ սիլիցիումային էլեկտրոդներին, որոնք ժամանակի ընթացքում պատվում են որոշակի տիպի թջջներով՝ շարքից հանելով նեյրոններին:


Լինելով մեկ ատոմական շերտով երկչափ կառուցվածք՝ գրաֆենը ցուցաբերում է ինքնատիպ էլեկտրոնային հատկություններով՝ գրաֆենի ստացման տեխնոլոգիաները, կատարվում են ինչպես կիրառական, այնպես էլ հիմնարար

որոնք ի զորու են ժամանակակից էլեկտրոնիկան դարձնել է ավելի մանրաչափ և արդյունավետ: Միկրո- և նանոէլեկտրոնիկայում ակտիվ հետազոտական աշխատանքները են տարրվում սիլիցիումը գրաֆենով փոխարինելու ուղղությամբ: Ամենայն հավանականությամբ, մոտ ապագայում մեծ ինտեգրալային սինեմաները կարող են նախագծվել ու պատրաստվել որակապես նոր՝ գրաֆենի հիմքի վրա: Այսօր արդեն գրաֆենային տրանզիստորն աշխատում է գերցածք էներգածախսով, իսկ հաճախությունը հասնում է մինչև 100 ԳՀց-ի: Գրաֆենի բարձր էլեկտրահաղորդականությունը հնարավորություն է տվել ստեղծելու լիցքակիրների շատ մեծ շարժունությամբ դաշտային տրանզիստոր, որն իր այս ցուցանիշով գերազանցում է սիլիցիումային տեխնոլոգիայով պատրաստված նմանատիպ կառուցվածքներին:

Գրաֆենի վերը նշված հատկությունները և հնարավոր կիրառության ոլորտները բնավ արդեն նորություն չեն, և այսօր, գիտական հոդվածներից բացի, դրանք բավական մանրամասն ներկայացված են նաև համացնում:

Այս բոլորն, անշուշտ, չի նշանակում, որ լուծված են բոլոր տեխնիկական խնդիրները՝ այս նյութի օգտագործումն արտադրական ծավալներով ապահովելու համար: Ամենայն: Օրեցօր կատարելագործվում են տրված հատկություններով՝ գրաֆենի ստացման տեխնոլոգիաները, կատարվում են ինչպես կիրառական, այնպես էլ հիմնարար

հետագուստություններ, մշակվում են տարրեր տեսական մոդելներ, որոնք տրանզիստորային կառուցվածքներում կիսահաղորդչային սիլիցիումին փոխարինելու նպատակով օգտագործում են նրա գերբարձր էլեկտրահաղորդականությունը: Եվ այս աշխատանքները շարունակվում են:



Նկ. 1. Լույսով պտտվող մեխանիկական ճախարակ

### **Հեղուկրյուրեղային պոլիմերներ: Գրաֆենի կիրառության նոր ոլորտ**


Այսօր գրաֆենը փորձում են օգտագործել գործնականում ամենուրեք: Սակայն կա մի բնագավառ, որտեղ գրաֆենի ինքնատիպ հատկությունները կարող են դառնալ ուղղակի անփոխարինելի: Խոսքը գրաֆենի և այսօրվա մեկ այլ, ոչ պակաս հեղափոխական և նոր նյութի՝ հեղուկրյուրեղային պոլիմերի (ՀԲՊ) համատեղ օգտագործման մասին է: Ի հայտ գալուն պես այն անմիջապես լայն կիրառություն գտավ առաջին հերթին հեղուկրյուրեղային լուսավահանակներում, բնագավառ, որի շուկայական ծավալներն այսօր դժվար է գերազանահատել: Ստեղծվեցին նաև նոր՝ 4-րդ սերնդի, սկզբունքորեն այլ հատկություններով օժտված օպտիկական տարրեր և սարքեր: Մի փոքր ավելի ուշ սինթեզվեցին ազորենզենի պարունակությամբ պոլիմերային ֆոտոռակտիվ միացություններ, որոնք լույսի ազդեցությամբ կարող են կատարել տարրեր մեխանիկական շարժումներ: Այս նյութերի կիրառության ոլորտներն սկսեցին զարգանալ այնպիսի խելահեղ արագությամբ, որն ավելի

շուտ նման էր պայմանի: Այսպես, օրինակ, S. Իկեդան աշխատավայրում հետ առաջին անգամ ցուցադրեց միայն լույսի ազդեցությամբ պտտվող մեխանիկական ճախարակ (նկ.1), որը շարժման մեջ էր դրվում ՀԲՊ-ից պատրաստված ժապավենը տեսանելի և անդրամանուշակագույն լույսերով միաժամանակ ճառագայթահարելի: Մեկ տարի անց նույն հեղինակները պատրաստեցին լույսով աշխատող ձկուն եռաչափ շարժական թև՝ միկրոռոբոտուտեխնիկայի համար: Ամերիկյան “BEAM Co.” ընկերության աշխատակիցներն առաջին անգամ ցուցադրեցին իրենց պատրաստած ազորենզեն պարունակող հեղուկրյուրեղային բարձակը՝ հեծան, որի մի ծայրը ամրացված է, իսկ մյուսը կարող է կատարել մեխանիկական տատանումներ: Այն կարելի է տատանել մի քանի տասնյակ հերց հաճախությամբ՝ պարբերաբար փոփոխելով ինչպես լույսի ալիքի երկարությունը, այնպես էլ ճառագայթման քսենացման ուղղությունը (նկ. 2): Եվ այս շարքը կարելի է շարունակել:

ՀՊԲ հատկություններին և կիրառության ոլորտներին էր

նվիրված մեր նախորդ հոդվածը (ԳԱ, թ. 1, 2017): Ստորև կներկայացնենք լույսի ազդեցությամբ ազորենզենային ՀԲՊ-ի մեխանիկական շարժումներ կատարելու հատկությունները, ինչպես նաև կրնարկենք էլեկտրական դաշտով այն դեկավարելու հնարավորությանները:

Օպտիկական սարքերում, հատկապես հեղուկրյուրեղային տեխնոլոգիաներում, էլեկտրական դաշտի կիրառման համար սովորաբար օգտագործում են ITO բարակթաղանթային ծածկույթը, որն իրենից ներկայացնում է ինդիումի և անագի օքսիդների խառնուրդ: Բավարար թափանցիկությամբ և էլեկտրական հաղորդականությամբ օժտված այս թաղանթներն ստացվում են վակուումային փոշեցրման եղանակով, մեծ մակերեսներով հարթ ապակե կամ օրգանական տակդիրների վրա: Սակայն դրանք թիզ են կիրառվում ձկուն էլեկտրոնիկայի և ֆոտոնիկայի սարքերում, քանի որ բազմակի ձկուն ներդրություն արդյունքում արագ շարքից դուրս են գալիս և կորցնում իրենց հաղորդականությունն ու թափանցիկությունը՝ վատրարացնելով լույսի ներթափանցու-



Նկ. 2. Լոյսով տառանվող բարձակ

մը: Այս թաղանթների մյուս թերությունն անկայունությունն է արտաքին մեխանիկական և քիմիական տարրեր ազդակների նկատմամբ: Նշված բոլոր թերություններից գերծ է գրաֆենը. այն ամուր է, քիմիապես կայուն, ձկուն և համեմատաբար էժան:

### Ինչպես կարելի է սպառագրափեն

Գրաֆենի ստացման եղանակները՝ կախված այն օգտագործելու կոնկրետ նպատակներից, տարրեր են: Հստ թաղանթի ձևավորման մեխանիզմի՝ դրանք կարելի է բաժանել մի քանի հիմնական խմբերի: Առաջինը բարձր կողմանորոշվածությամբ բյուրեղային գրաֆիտից մեկ ատոմական շերտի մեխանիկական անջատումն է, որի դեպքում ստացվում են, թերևս, ամենակատարյալ միաշերտերը: Ելեկտրոնային հատկությունների, հաղորդականության ուսումնասիրությունների, ինչպես նաև գրաֆենի հիման վրա առանձին սարքերի նախանմուշների պատրաստման համար այսպիսի թաղանթներն ուղղակի անփոխարինելի են: Գրաֆեն կարելի ստանալ նաև ածխածնի օրոխիդի (SiC) բարակ թաղանթներ, ինչպես նաև p-i-n դիոդային կառուցվածքներ ստանալու նպատակով նախագծվել և պատրաստվել է գազային ֆազից քիմիական նստեցման տեխնոլոգիական սարքավորում: Սարքավորումը հնարավորություն է տալիս ստանալու նաև գրաֆեն՝ օգտագործելով ածխածնի պարունակող գազ, օրինակ՝ մեթան (CH<sub>4</sub>):

Գրաֆիտից հեղուկֆազային մեթոդով առանձին շերտերի անջատման եղանակներով: Սակայն այս ձևով ստացվող թաղանթները շատ հեռու են կատարյալ լինելուց:


Մեխանիկական եղանակով առանձին, փոքր չափերի նմուշների ստացումը հետազոտական նպատակով, իհարկե, նպատակահարմար է, սակայն կրկսվող բնութագրերով փորձնական նմուշների (օրինակ՝ տրանզիստորային կառուցվածքների) պատրաստումն անհնար է, առավել ևս, եթե խոսքը վերաբերում է արտադրական տեխնոլոգիաներին: Այս իմաստով գազային ֆազից քիմիական նստեցման մեթոդը (CVD – Chemical Vapour Deposition), անշուշտ, առավել կատարյալն է և այսօր հաջողությամբ օգտագործվում է էլեկտրոնային արդյունաբերության մեջ՝ բարձր մաքրությամբ, մեծ մակերեսներով ու արտադրական ծավալներով կիսահաղորդչային բարակ թաղանթների ստացման համար:

ԵՊՀ Կիսահաղորդչային սարքերի և նանոտեխնոլոգիաների կենտրոնում ամորֆ սիլիցիումի ( $\alpha$ -Si) ու սիլիցիումի

կարբիդի (SiC) բարակ թաղանթներ, ինչպես նաև p-i-n դիոդային կառուցվածքներ ստանալու նպատակով նախագծվել և պատրաստվել է գազային ֆազից քիմիական նստեցման տեխնոլոգիական սարքավորում: Սարքավորումը հնարավորություն է տալիս ստանալու նաև գրաֆեն՝ օգտագործելով ածխածնի պարունակող գազ, օրինակ՝ մեթան (CH<sub>4</sub>):

Թաղանթի աճի ընթացքը կարելի է բաժանել երկու մասի: Առաջինը մեթանի ջերմային տրոհումն է անցումային մետաղների (Ni, Pd, Cu և այլն) մակերևույթին, երկրորդը՝ բարձր ջերմաստիճանում ածխածնի լուծումը մետաղում և ապա արագ սառեցմումով նրա հետագա անջատումը մետաղի մակերևույթին: Ածխածնի լուծությունը մետաղում, մակերևույթի բյուրեղային կառուցվածքը և աճի պրոցեսի պայմաններն ել հիմնականում որոշում են ածող գրաֆենի թաղանթի ձևաբանությունն ու հաստությունը (շերտերի քանակը): Այսուել հարկ է նշել, որ, կախված հարթակի մետաղի տեսակից (օրինակ՝ Cu կամ Ni), գրաֆենի սինթեզի պրոցեսն սկզբունքուն տարբեր է: Պինձի դեպքում, որն այսօր համարվում է, թերևս, ամենատարածված տակողիրը, այն հիմնականում պայմանավորված է մետաղի մակերևույթին գազի մոլեկուլի դիտումամբ և ատոմական ածխածնի մակերևության դիֆուզիայով:

Պինձի մակերևույթին գազային ֆազից ածխածնի միաշերտ թաղանթի քիմիական նստեցման մեթոդն իր տարածվածությունը գործարկության մեջ առաջարկվում է:



յան, միաշերտի համասեռության, տեխնոլոգիական պրոցեսի ձգրիտ վերահսկման և այլ արտադրական տեխնոլոգիաների հետ համատեղելիության շնորհիվ, հավանաբար, ամենախոստումնալիցն է: Այս մեթոդը հնարավորություն է տալիս իրականացնելու բարձր վակուումի պայմաններում քվարցեռեակտորի նախնական մշակում, մեծ մաքրությամբ գազերի օգտագործում, ջերմային ռեժիմների, ինչպես նաև գազերի հնորդերի ձգրիտ կառավարում: Այսօր, ինչպես ցույց են տվել որոշ հետազոտողներ, պղնձի վրա գրաֆենային թաղանթներ հաջողվում է աճեցնել ինչպես ցածր, այնպես էլ մրնուրտային ճնշման պայմաններում, իսկ օգտագործելով այսպես կոչված «ճախարակից-ճախարակ» մեթոդը՝ կարելի է ստանալ մինչև մետր լայնությամբ և անսահմանափակ երկարությամբ թաղանթներ: Իրատեսական է նաև գրաֆենի ստացումը համեմատաբար ցածր ջերմաստիճանների (մինչև  $420^{\circ}\text{C}$ ) և աճի մեծ արագության պայմաններում: Հիմնական խնդիրը թաղանթի անցանկալի բազմաբյուրեղային բնույթն է, 300 մկմ-ից փոքր դոմենների բնորոշ չափե-


րով, որը նվազեցնում է գրաֆենի էլեկտրա-և ջերմահաղորդականությունը, մեխանիկական ամրությունը, ինչպես նաև օքսիդացման նկատմամբ կայունությունը: Սակայն վերջերս հաղորդագրություն եղավ այս մասին, որ կատարելագործված CVD մեթոդով հաջողվել է աճեցնել միլիմետրական և նույնիսկ սանտիմետրական չափերի դոմեններով գրաֆեն: Չնայած տեխնոլոգիան ստանդարտ CVD-ն է, այն ներառում է բազմազան նորարարություններ: Նախ՝ ընտրվում է որոշակի բյուրեղագիտական ուղղությամբ աճեցված պղնձել բարակ ( $25\text{-}30$  մկմ) տակոիր, որը նախապես ենթարկվում է էլեկտրափայլեցման, որի արդյունքում մակերևույթի անհարթությունները հասցվում են մինչև  $20$  նմ-ի: Այնուհետև, տակոիրը տեղափոխվում է քվարցեռեակտորի մեջ և մի քանի ժամ ենթարկվում բարձրջերմաստիճանային վերականգնման ջրածնի միջավայրում:

Ինչո՞ւ՝ է այս տեխնոլոգիան այդքան նախընտրելի և գրավիչ: Նշենք, որ CVD-ին միակ տեխնոլոգիան է, որ հնարավորություն է տալիս աճեցնելու գրաֆենի ինչպես կարծ ժամա-

նակում (1-2 ժամ) ու մեծ մակերևումներով, այնպես էլ բարձրորակ գրաֆենային թաղանթներ էլեկտրոնային և օպտոէլեկտրոնային արդյունաբերության համար, որոնք օժտված են մեծ էլեկտրահաղորդականությամբ ու թափանցիկությամբ: Պետք է ուղղակի կարողանալ հստակ տարբերակել գրաֆենի օգտագործման ձգրիտ ոլորտը, այսինքն՝ պարզել, թե կոնկրետ ինչ նպատակով է այս օգտագործվելու, և ֆիզիկական բնույթագրերի որ՝ արժեքներն ու սահմաններն են այս կամ այն խնդրի համար առավել կարևոր:

Պղնձե փայլաթիթեղի վրա աճած գրաֆենն այնուհետև կարելի է տեղափոխել այլ տակդիրի վրա: Դրա համար գրաֆենի թաղանթը նախ պատվում է պոլիստիրոլի շերտով, ապա պղնձե տակդիրը քիմիական եղանակով հեռացվում է: Ստացված կառուցվածքը տեղափոխվում է այլ տակդիրի վրա, և պոլիստիրոլի շերտի քիմիական հեռացումից հետո ստացվում է գրաֆենի բարակ թաղանթ անհրաժեշտ տակդիրի վրա:

Նկ. 3-ում բերված են մեր լարուատորիայում պղնձե փայլաթիթեղի վրա աճեցված (Ճախից) և ապակե հարթակի վրա



Նկար 3. Գրաֆենի թաղանթ պղնձե փայլաթիթեղի և ապակե հարթակի վրա

տեղափոխված (աջից) գրաֆենի թաղանթի պատկերները: Ի դեպ, նշենք, որ գրաֆենն էլեկտրահաղորդականությամբ և լուսաթափանցությամբ օժտված միակ նյութն է, որը կարելի է նշված ձևով տեղափոխել՝ պրակտիկորեն առանց հատկությունների էական փոփոխության: Ավելին, այն հեշտությամբ կարելի է տեղափոխել ինչպես հարթ, այնպես էլ կոր և ձկուն մակերևությունների վրա:

### Վերջապան

Նանոմետրական չափերի տարրեր և կառուցվածքներ ստեղծելու նպատակով օգտագործվող տեխնոլոգիաները շատ չեն: Պահանջվող ճշտություն ապահովում են կիզակետված իոնային փնջերը կամ էլեկտրոնաձառագայթային վիմագրությունը: Ֆենտովայրկենսային ( $10^{-15}$  վ) գերկարծ լազերային իմպուլսներով իրականացվող երկֆուտոն պոլիմերացումն այսօր ոչ միակ, բայց ամենակատարյալ

մեթոդներից մեկն է: Լինելով ոչ գծային պրոցես՝ այն հնարավորություն է տալիս օգտագործելու լազերային փնջի կիզակետի զգալի փոքր մասը և, հետևաբար, ստեղծելու պահանջվող տեսքի, նանոմետրական չափերի եռաչափ մասնիկներ և կառուցվածքներ, անգամ ձևավորել բարդ մատրիցներ կամ պարբերական ցանցեր: Վերջիններն, անշուշտ, հիմքն են մետանյութերի, որոնք արիեստականուն ստեղծված նանոչափային (Փոտոնիկական) պարբերական կառուցվածքներ են, կազմված այսպես կոչված մետասուլեկուլներից կամ մետամոլեկուլներից, որոնք ունեն նույն նշանակությունը, ինչ որ բնական նյութերը կազմող ատոմները կամ մոլեկուլները: Այս դեպքում արդեն առավել էական են մասնիկների չափերը, տեսքը և ձևավորված կառուցվածքի ցանցի պարբերությունը, այլ ոչ թե կոնկրետ նյութը, որից այն պատրաստված է: Նյութի տեսակը կարևոր է, թերևս, միայն պատրաստման

այս կամ այն մեթոդն ընտրելու հարցում: Մետանյութերի յուրօրինակ հատկությունները, որպես կանոն, չունեն նախատիպ բնության մեջ, իսկ երկֆուտոն պոլիմերացման մեթոդն այն գենքն է, որը հնարավորություն է ընձեռում ստեղծելու վերը նշված կառուցվածքները:

Մյուս կողմից, ազորենզեն պարունակող հեղուկրյուրելային պոլիմերներն այն նյութերն են, որոնք իրենց եզակի հատկություններով ի վիճակի են բավարարել ժամանակակից մետանյութերին ներկայացվող ամենախիստ պահանջները: Ավելին, լույսի ազդեցությամբ տարրեր մեխանիկական շարժումներ կատարելու նրանց հատկությունը կարելի է դարձնել նաև էլեկտրականապես դեկավարելի: Դրա համար անհրաժեշտ է ՀԲՊ-ը պատել հաղորդիչ և թափանցիկ հպակներով: Օժտված լինելով մեծ էլեկտրահաղորդականությամբ ու բարձր թափանցելիությամբ, գրաֆենն, իհարկե, լավագույն հպակային նյութն է, առավել ևս, որ այն, լինելով միաշերտ ատոմային թաղանթ, հեշտությամբ է ենթարկվում ձկումների:

Նման կառուցվածքներն, անշուշտ, կրածնան մի նոր դաս այսպես կոչված «խելացի նյութերի» ներկա շարքում: Հրաշալի է այն, որ դրանք կարող են ստեղծվել ամենամոտ ապագայում: Այս իմաստով մեզ սպասում է պայծառ ապագա:



**«Բոյաջյանական ընթերցումներ»՝ նվիրված ՀՀ ԳԱԱ Միջազգային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Աննա Բոյաջյանի հիշատակին**

Նոյեմբերի 5-ին Երևանում անցկացվեցին «Բոյաջյանական ընթերցումներ»՝ մարդու համալիր իիվանդությունների գենոմիկայի, խունոնդիայի և կենսախնֆորմատիկայի վերաբերյալ՝ նվիրված ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Աննա Բոյաջյանի հիշատակին:

Աննա Բոյաջյանը մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը գլխավորել է 2006թ-ին և ղեկավարել այն մինչև իր անսպասելի մահը՝ 2015թ-ը: «Նրա գալուստով

ինստիտուտն ստացավ իր գործունեության հստակ ուղղությունները, և այժմ զարգացնում է այդ ուղղությունները ժամանակակից մակարդակով՝ իրացնելով լավ գիտական պոտենցիալ»,՝ իր ողջույնի խոսքում նշեց ՀՀ ԳԱԱ ընական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանը:

Միջազգային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, կենսաբանական գիտությունների թեկնածու Արսեն Առաքելյանը նշեց, որ Աննա Բոյաջյանը նշանակալից ներդրում է ունեցել Հայաստանում կենսաբժշկական հետազոտություններում կենսահնֆորմատիկայի և հաշվարկային կենսաբանության ժամանակակից մեթոդների ներդրման գործում:

Աննա Բոյաջյանը միջազգային ճանաչում ունեցող գիտնա-

կան էր, բազմաթիվ ազգային և միջազգային դրամաշնորհների հաղթող, ավելի քան 370 գիտական հրապարակումների հեղինակ, նրան շնորհվել են ազգային և միջազգային մի շարք պատվավոր պարգևներ գիտության մեջ ունեցած ներդրման համար: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել հետազոտողների երիտասարդ սերնդի կրթության և կարիերայի զարգացման գործում: Հիմնել և ղեկավարել է ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակլթական կենտրոնի Միջազգային և բջջային կենսաբանություն ամբիոնը: Իր գիտական կարիերայի ընթացքում նա պատրաստել է գիտության 20 թեկնածու և ավելի քան 30 ասարհանտ:

**ՀՀ ԳԱԱ գրեգեկարգական-վերլուծական ծառայություն**

## Ի ԴԵՊ



45-ից բարձր տարիքի 30239 մարդկանց երկարաժամկետ հետազոտությունը, որ կատարվել է ԱՄՆ-ում, ցույց է տվել, որ արյան AB, այսինքն՝ 4-րդ խմբի կրողները (աշխարհի բնակչության 7-8 %) ծեր հասակում 82 %-ով ավելի հաճախ են տառապում հիշողության և մտածողության հետ կապված խնդիրներից, քան արյան այլ խմբեր ունեցողները:



2015 թ. Ճապոնիայի ափերի երկայնքով տեղադրվել է ցունամի գրանցող 300 տվյալ:



Համընդհանուր տարացման պատճառով Գանայում և Կոտ-դ’Իվուարում կակաոյի ծառերի զբաղեցրած տարածքների 40-70 %-ը կարող է դառնալ ոչ պիտանի այդ մշակաբույսի աճեցման համար:

Բուրդապեշտի Բժշկական համալսարանի տվյալներով՝ լիալուսնի գիշերը ըստ տևողությունը կրծատվում է շուրջ 25 րոպեով, իսկ երազների տևողությունը կես ժամով երկարում է:



«Наука и жизнь», 2015, N 5.

ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ  
ՄԵԶ ԿԻՐԱՌՎՈՂ  
ԾԱՌԱԲՈՒՅՑՄԵՐԻ  
ԳԵՂԱԶԱՐԴՈՒԹՅԱՆ  
ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ



ԺԻՐԱՅՐ ՎԱՐԴԱԼՅԱՆ

<< ԳԱԱ թղթակից անդամ,  
կենարանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր, << ԳԱԱ  
Ա. Թախտաջանի անվան  
բուսաբանության ինստիտուտի  
տնօրեն

**Q** Եղազարդ ծառաբույ-  
սեր Երկարատև ծաղ-  
կող ալգիների համար


Երկարատև ծաղկող այգիները գեղազարդ պարտիզագործության կարևոր բաղադրիչն են, քանզի աչքի են ընկնում ծաղկող բույսերի առատությամբ, որոնք հաջորդաբար ծաղկելով՝ մեծացնում են այգիների գեղազարդությունը և դաշնում բնակչության ժամանցի և հանգստի հաճելի վայր։ Այդպիսի այգիների ստեղծումը պահանջում է մասնագիտական հարուստ գիտելիքներ և ձաշակի զգացողություն։ Մասնագիտական ձիշտ մոտեցումը պետք է հիմնված լինի բազմամյա փորձի և դիտողականության վրա, քանի

որ այգիներում օգտագործվող բույսերն ածեցնելու հետ մեկ-  
տեղ անհրաժեշտ է ուշի-ուշով հետևել դրանց ծաղկման ժամ-  
կետներին և տևողությանը, ծա-  
ղիկների առատությանն ու գու-  
նավորմանը, տերևների աշնա-  
նային երանգավորմանը, սա-  
դարթի ձևին և բարձրությանը:  
Կանաչապատող մասնագետը  
միաժամանակ պետք է ման-  
րակրկիտ ուսումնասիրի բոյ-  
սերի պահանջները ջրի, լուսի,  
օ եռմաս-

տիճանսի և հողի նկատմամբ։ Ծաղիկների գունային համադրության հետ մեկտեղ անհրաժեշտ է հաշվի առնել նաև տվյալ բույսի վերաբերմունքն արտաքին ազդակների հանդեպ, այլապես երկարատև ծաղկող այգու ստեղծումը դատապարտված կլինի անհաջողության։

Ծաղկող այգիների ստեղծման համար օգտագործվող բույսերի կարևորագույն հատկանիշներն են.

- **Կենսաձեռ՝** (ծառ կամ թուփ), բարձրությունը և սաղարթի ձևը, ինչպես նաև բույսը խուզելու հնարավորությունը (գ ե ղ ե ց ի կ ձևավորումների համար կարելի է ստանալ տարբեր երկրաշափական մարմին-





### ԳԱՅԱՆԵ ԳԱՏՐՉՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի Բույսերի ներմուծման բաժնի կիտաշխատող



### ՆԵԼԼԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի Բույսերի ներմուծման բաժնի կրտսեր գիտաշխատող



### ՄԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի Բույսերի ներմուծման բաժնի կրտսեր գիտաշխատող

ներ՝ գունդ, բուրգ, սկավառակ, շարահարկ և այլն): Կարելի է օգտագործել նաև տարրեր բույսերի արդեն գոյություն ունեցող գեղազարդ ձևերը, օրինակ՝ Թույա արևմտյան բրգածն, Կենսածառ արևելյան գնդածն, Գիհի չինական խայտարդետ, Գիհի կազակական հասկառուկեգույն, Կծոխուր սովորական կարմրա-

տերն, Սզնի միավարսանդ վարդագույն լիաթերթ, Կրիպտոմերիա ճապոնական նրբագեղ, Տոսախ մշտադալար դեղնաեղրավոր, Կտտկենի սև դեղնախայտարդետ, Բռնչի սովորական ձյունագունդ, Իլեսի ճապոնական կենտրոնախայտարդետ, Ուռենի բարելոնյան ոլորված և այլն:

- ծաղկման ժամկետը,**որը չափազանց կարևոր է երկարատև ծաղկող այգիների ստեղծման համար: Ըստ ծաղկման ժամկետների՝ գեղեցիկ ծաղկող ծառաբույսերից պայմանականորեն առանձնացրել ենք մի քանի խումբ:

**Վաղ զարնանը ծաղկող-ներ՝** Հոնի սովորական, Ֆորսի-



Թույա արևմտյան բրգածն



Գիհի կազակական հասկառուկեգույն

ցիա միջանկյալ, Սերկսիլենի ճապոնական, Թխենի սովորական, Նշենի, Ծիրանենի, Դեղձենի և այլն:



Ֆորսիցիա միջանկյալ

Դեյցիա խորդուբորդ, Բռնչի սովորական, Բռնչի սովորական ծյունագունդ, Մասրենի կիսագնդածե, Սզնի խոշորափուշ, Սզնի միավարսանդ վարդագույն լիաթերթ, Ռորինիա կեղծակացիա, Չմենի հրոհզրնական, Ցախակեռաս այծի, Ցախակեռաս դեղին, Եղրևանի, Հուղայածառ և այլն:



&lt;ուղայածառ կանադական



Սերկսիլենի ճապոնական



Ասպիրակ Վանհուտի

**Ուշ գարնանը ծաղկողներ՝** Կարագանա ծառանման, Կծոխուր սովորական, Զիակասկ սովորական, Ասպիրակ Վանհուտի, Վիստերիա չինական,

**Ամռանը ծաղկողներ՝** Փշատենի նեղատերև, Լաբրունում անագիրատերև (ռուկե անձրև), Արնգենի կովկասյան, Ռորինիա կպչուն, Կիպրոս սովորական, Կատալպա օվալածե, Լորենի սրտածե,



Լաբրունում անագիրատերև



Լորենի սրտածե



Մրնգենի կովկասյան



Կելրեյթերիա հուրանավոր



Ասպիրակ ձափռական



Հիբիսկոս սիրիական

Լորենի կովկասյան և այլն:

**Ուշ ամռանը և մինչև աշնան կեսերը ծաղկողներ՝** Կելրեյթերիա հուրանավոր (Օճառածառ), Մետաքսածառ, Բուդդեյա Դավիթի, Հիբիսկուս սիրիական (Սիրիական վարդ), Սոֆորա ձափռական, Կամպսիս արմատակալող, Ցախակեռաս ձափռական, Ասպիրակ ձափռական, Ասպիրակ Դուգլասի, և այլն:

- Երկարատև ծաղկող այգիների ստեղծման համար չափազանց կարևոր է նաև բույսերի ծաղկման տևողությունը, որը տարբեր բույսերի մոտ տարբեր է՝ 10-ից մինչև 150 օր: Հստ ծաղկման տևողության՝ առանձնացրել ենք մի քանի խումբ՝

**Երկարատև (60-150 օր) ծաղկող բույսեր.** Ձափռական ցախակեռաս, Հազար, Վեյգելա, Կուսածառ, Մետաքսածառ, Բուդդեյա Դավիթի, Հիբիսկուս, Կամպսիս և այլն:



Վեյգելա ծաղկառատ



Բուդդեյա Դավիթի

**Միջին տևողությամբ (20-40 օր) ծաղկող բույսեր.** Ռորինիա կեղծակացիա, Ռորինիա կաչուն, Հոնի, Ֆորսիցիա, Խենոմելես, Չմենի, Փշատենի, Լորենի, Օճառածառ և այլն:



Ռորինիա կաչուն



&lt;ո՞նի

**Կարծատև (10 – 20 օր) ծաղկող բույսեր.**  
Նշենի, ծիրանենի, Դեղձենի, Կեռասենի, Հուդայածառ, Եղբանի, Թխենի, Զիակասկ, Դեյցիա և այլն:

**Կրկնակի ծաղկող բույսեր** (իհարկե, դրանց ծաղիկները նույն փարթամությամբ և քանակով չեն լինում). Ասպիրակ Վանհուտի, Վիստերիա չինական, Ռոբինիա կեղծակացիա, Ռոբինիա կպչուն:



Թխենի սովորական



Դեյցիա խորդուբորդ



Ռոբինիա կեղծակացիա

- Բույսերի տերևների **աշնանային գունավորում** իր իհասքանչ ներկապնակով արթնացնում է մարդու գեղագիտական զգացմունքները (իզուր չէ, որ նմանատիպ այգիներում նկարիչների մեջ հոսք է նկատվում հատկապես աշխանը): Իրենց գունագեղությամբ աչքի են ընկնում հատկապես հացենիները (ոսկեգույն տերևներ), սպիրին (դեղնանարնջագույն երանգ), կուսախաղողը (մուգ կարմիր), ամուրյան խաղողը (վառ դեղին), նրբագեղ ճապոնական կրիպտոմերիան (բալագույն), սպիտակ ճապկին (մուգ կարմիր), սովորական մահոնիան (մուգ կարմիր) և այլն:



Երևանի բուսաբանական այգում

## ԲՈՒՍԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

- Աշնանային գունագեղության մեջ հատկապես հարկ է նշել այն բույսերը, որոնք իրենց հյութեղ և բազմագույն պտուղներով կարող են զարդարել այգիները: Դրանցից են հորիզոնական չմենին (բազմարիվ կլոր, կարմիր պտուղներ), սովորական բռնչին (համեղ, կարմիր, հյութալի), սովորական կծոխուրը (մուգ կարմիր, շատ օգտակար՝ պարունակում է մեծ քանակությամբ վիտամին C), սովորական թխենին (սև, հյութալի, տտիպ՝ պատրաստում են հյութեր և ալկոհոլային խմիչքներ), ակոնիֆրատերև ամանապսիսը (սկզբում դեղին, նարնջագույն, հետագայում կապտավուն), հնգատերև կուսաղաղը (կլոր, կապտասև), ամուրյան խաղողը (գնդած, կապտասև, պատրաստում են մուրաբա, կիսել, օշարակ, քացախ), ճապոնական սերկահիենին (կլորավուն, խնձորանման, դեղին, պարունակում է վիտամին C), սպիտակ ճապկին (կլոր, սպիտակ, փնջերով), նեղատերև փշատենին (Ելիպսաձև, դարչնադեղնավուն, պարունակում է վիտամին C), սովորական կիպրոսը (սև, գնդած, փայլուն), սովորական մահոնիան (Ելիպսաձև, կապտավուն, համեղ), կիսագնդած մասրենին (գնդած, նարնջագույն, պարունակում է վիտամին C), սև կտտկենին (կլոր, սև, փայլուն, կիրառվում է բժշկության մեջ), արոսենիները (կարմիր, գնդած, պարունակում են վիտամին C, պատրաստում են ալկոհոլային խմիչքներ), սպիտակ ձյունապտղիկը (կլոր, սպիտակ):

• Երկարատև ծաղկող այգիներում իրենց ուրույն տեղն ունեն նաև այն բույսերը, որոնց միջոցով ստեղծվում են տարբեր ձևի և բարձրության (մշտադարձ կամ տերևաթափ) կենդանի ցանկապատեր, օրինակ՝ Տոսախ մշտադարձ, հիեսի ձափոնական, Կենսածառ արևելյան, Ճապկի սպիտակ, Սրնգեսի կովկասյան, Ֆորսիցիա միջանկյալ, Հասմիկ թփային, Կիպրոս սովորական, Ասպիրակ Վանհուտի, Զյունապտղիկ սպիտակ և այլն:


• Երկարատև ծաղկող այգիներին առանձնահատուկ տեսք են հաղորդում փաթաթվող բույսերը (լիանները), որոնց համար տարբեր ձևի և բարձրության հատուկ հենարաններ են նախատեսվում: Լիանների համար հենարան կարող են ծառայել արդեն կառուցված տաղավարները, կամարները, ցանկապատերը, սյուները և այլն: Փոքրիկ հողակտոր գրաղեցներով, որոշ բնափայտավոր լիանների երկարությունները կարող են հասնել մինչև մի քանի տասնյակ մետրի և ունենալ շատ մեծ կանաչ զանգված, որը կարող է նպաստել հատկապես մեզապոլիսներում թթվածնային քաղցի խնդրի լուծմանը: Ուղղաձիգ կանաչապատման գարգացումը Երևանում դրական դեր կիսաղա օդի աղտոտվածությունը մեղմելու գործում: Առաջարկվում է մի շարք լիաններ կիրառել երկարատև ծաղկող այգիներում Վիստերիա չինական, Կամպսի արմատակալող, Ցախակեռաս այծի, Ցախակեռաս դեղին, Ցախակեռաս ճապոնական, Կուսախա-



Սերկահիենի ճապոնական



Մահոնիա սղոցենատերև



Արոսենի հայատանյան



Վիստերիա չինական



Կամպսիս արմատակալող

դող հնգատերև, Կուսախսաղող եռատերև, Խաղող ամուրյան, Շքահյուս հինական, Բաղեղ սովորական, Ամպելոպսիս ակոնիթատերև և այլն:

Երկարատև ծաղկող այգիների ընդհանուր ֆունը գերադասելի է ծածկել սիզամարգով, որի հյութեր կանաչ գույնը յուրահատուկ տեսք կհաղորդի այգում ծաղկող բույսերին:

### **Ծառաբույսերի սաղարթների բազմազանությունը որպես բարձր գեղազարդության ցուցանիշ**

Քաղաքների և բնակվայրերի կանաչապատման ժամանակ ծառաբույսերի ընտրություն կատարելիս առաջին հերթին հաշվի է առնվում դրանց գեղազարդ հատկանիշները՝ բնի, ճյուղերի, տերևների, ծաղիկների, պտուղների ձևը, չափերը և գունագեղությունը: Գեղազարդության կարևոր ցուցանիշներից է ծառերի սաղարթը, որը պայմանավորված է ցողունի ուղղահայց և հորիզոնական ածով: Ծառատեսակներն իրենց բնորոշ սաղարթը սովորաբար ձևավորում են միջին տարիքում. երբեմն երիտասարդ հասակում ունեցած տեսքը հասուն տարիքում բոլորովին փոխվում է: Ծառերի սաղարթների գեղազարդությունը լինում է բնական և արհեստական: Արհեստական սաղարթի դեպքում գեղազարդ տեսք ստանում են խուզման շնորհիվ: Եթե ծառը ձկուն է և լավ է տանում խուզումը, ապա դրան կարելի է տալ երկ-




Ցախակեռաս ծապոնական


բաշավական մարմինների, կենդանիների, մարդկանց տեսք: Էտ և ձևավորում կատարելիս պետք է հաշվի առնել տվյալ ծառատեսակի կենսաէկոլոգիական առանձնահատկությունները, տարիքը, գեղազարդության դրսնորման բնույթը, ինչպես նաև տվյալ վայրի միկրոկլիմայական պայմանները:

**Արհեստական գեղազարդություն.** Հստ սաղարթի արհեստական ձևափոխության, ընդունված է առանձնացնել 3 հիմնական խմբեր.

- **Սովորական ձևափոխություն:** Այս դեպքում խուզման միջոցով ծառին տալիս են երկրաչափական մարմնի տեսք՝ գունդ, բուրգ, կոն, գլան և այլն: Սովորական խուզման համար պիտանի են հատկապես հարթ և տերևառատ թեղիները, սո-



Սովորական ձևափոխություն




Վորական բուսին, պրատերև և դաշտային թխկիները, կովկասյան և մանրատերև լորենիները, Վանհուտի ասպիրակը, սովորական բռնչին, սպիտակ թխկին, թաթարական և վրացական ցախակեռաները, սովորական կիալոռը, սովորական եղևնին, մշտադալար նոճին, վիրգինյան գիհին, հատապտղային կեսին, արևմտյան թույան, արևելյան կենսածառը, մշտադալար

տակ ձապկին, կովկասյան սրնգենին, արևելյան սոսին, խոշորափուշ սզին և այլն:

- **Գծային ձևափոխություն:** Այս դեպքում ծառաբույսերը տնկում են 1-2 շարքով և խուզման միջոցով ստանում են կենդանի ցանկապատ: Գծային խուզման համար պիտանի են՝ արևելյան հաճարենին, փետրաձյուղավոր և տերևառատ թեղիները, արևելյան և սովորական բռնչիները, Վանհուտի ասպիրակը, արևելյան և խոշորափուշ սզիները, մանրատերևն և կովկասյան լորենիները, ամբողջաեզր չմենին, սպիտակ թխկին, թաթարական և վրացական ցախակեռաները, սովորական կիալոռը, սովորական եղևնին, մշտադալար նոճին, վիրգինյան գիհին, հատապտղային կեսին, արևմտյան թույան, արևելյան կենսածառը, մշտադալար դալար տոսախը, ծապոնական իլենին և այլն:



Գծային ձևափոխություն



Պատկերային ձևափոխություն

- Պատկերային ձևափոխություն:** Այս դեպքում յուրաքանչյուր առանձին տեսակ կամ ծառաբույսերի խումբ խուզվում, վերածվում է մարդկային, կենդանական, բուսական, երբեմն՝ արտասովոր, ֆանտաստիկ պատկերների կամ էլ ճարտարապետական տարրերի (դարպաս, շատրվան, կամար, զամբյուղ և այլն): Պատկերային խուզման համար պիտանի են՝ մշտադալար տոսախը, արեվելյան կենսածառը, արևմտյան թույան, սովորական և փայլուն կիպրոսները, սպիտակ ճապկին և այլն:

Տոպիար արվեստով (բույսերի խուզմամբ) զբաղելիս առաջնային պայման է բույսի ընտրությունը, քանի որ ոչ բոլոր բույսերն են լավ տանում խուզումը: Այն կախված է սաղարթի խտությունից, աճման տեմպից, երբեմն նաև տերևների արտաքին տեսքից և այլն: Այս դեպքում կարևոր է նաև այդ աշխատանքները կատարողի մասնագիտական պատրաստվածությունը: Վերջինս քաջա-

տեղյակ պետք է լինի բույսերի կենսաբանական առանձնահատկություններին, արհեստավարժության կատարի խուզման աշխատանքները և ունենալու գեղագիտական բարձր ձաշակ: Այն աշխատատար պրոցես է և երկար ժամանակ է պահանջում: Երբեմն ցանկալի արդյունքի հասնելու համար տարիներ են պետք, քանի որ բազմակի խուզում անցնելուց հետո միայն կարելի է ստանալ վերջնական տեսքը:

- Բոնսայ (սեղանայգի):** Մարդկանց սովորաբար չի բավարարում այն, ինչ տալիս է բնությունը: Նրանք փորձում են փոխել իրենց շրջակա միջավայրը: Դրա դրսևորման արդյունք է բոնսայ՝ սեղանային բույսերի չափով փոքրիկ ծառերի ստացումը: Սա բույսերի սաղարթների արհեստական ձևերի ստացման մի այլ եղանակ է: Բոնսայը չինարեն «պենցայ» բառն է, որը թարգմանաբար նշանակում է «աճեցնել սկզբունքում» կամ «ծառը ծաղկամանի մեջ»: Այն սովորական բույսի ծիշտ պատճենն է, բայց շատ փոքր չափերով (20 սմ-ից մինչև 1,5–2 մ), որն ստանում են մեխանիկական ազդակներ կիրառելով: Այն կարգավորվում է արմատային համակարգի շորիկիվ՝ խուզման միջոցով: Այս ոճն առաջացել է Չինաստանում, հետագայում լայն կիրառություն ստացել Ճապոնիայում, որտեղ ներկայում ավելի մեծ մասշտարներով է օգտագործվում, քան այլ երկրներում:

Սեղանայգու առաջացման մասին մի հետաքրքիր պատմություն կա: 14-րդ դարում մի ծագոյալ պետական գործիչ, որը ծանապարհորդում էր որպես հոգևորական, հյուրընկալվում է մի աղքատ սամուրայի տանը, որն իր հյուրին տաքացնելու համար կտրում է իր տան 3



Բոնսայ (սեղանայգի)

ծաղկամաններում աճող ծառերը, որտեղից էլ ավելի է տարածվում բոնսայի հասկացությունը՝ դաշնալով հյուրընկալության խորհրդանիշ։ Մեղանայգում օգտագործվող ծառաբույսերն են՝ սոճին,

նոճին, գիհին, կեսին, եղևսին, թխկին, լաստենին, կծոխուրը, կեչին, տոսախը, բռիսին, դրախտածառը, սզնին, իլենին, հաճարենին, կաղնին և այլն։

**Բնական գեղագարդություն:** ծառաբույսերն



Բոնսայ (սեղանայգի)

ըստ սաղարթի բնական ձևի շատ բազմազան են։ Գոյություն չունի ծառապսակների գիտական դասակարգում, ծառապսակի ձևը պայմանավորված է ուղղահայաց և զուգահեռ աճող ձյուղերի հարաբերակցությամբ։ Ելնելով դրանից՝ կարելի է տալ ծառաբույսերի սաղարթների պայմանական դասակարգում, ըստ

որի դրանք լինում են՝ *ցրված, վրանաձև, բրզաձև, սյունաձև, օվալաձև, ձվաձև, հակառակ ձվաձև, հովանոցաձև, գնդաձև, լացող, փաթաթվող, սողացող, բարձիկանման* և այլն։

Ցուրահատով սաղարթի կառուցվածքը ունեն ծառաբույսերի մի շարք պարտիզային ձևեր, որոնք, շնորհիվ իրենց ինքնատիպ ձյուղավորման,



Սաղարթի ծեր

լրացուցիչ գեղազարդություն են հաղորդում կանաչ տնկարկներին:

Հստ սաղարթի կառուցվածքի, պարտիզային ձևերն ընդունված է խմբավորել հետևյալ կերպ՝

- *բրգաձև*, երբ սաղարթը նման է բուրգի, որը վերին հատվածում սրված է (Կաղնի ամառային բրգաձև, Կենսածառ արևելյան բրգաձև և այլն),
- *սյունաձև*, երբ ծառապսակը կազմող ճյուղերն ուղղված են դեպի վեր և վերից վար ունեն նույն լայնությունը (Թույա արևմտյան սյունաձև, Կենի հատապտղային սյունաձև, Տուսախ մշտադար սյունաձև և այլն),
- *գնդաձև*, երբ ծառապսակը հավասարապես աճում է և ուղղաձիգ, և հորիզոնական ուղղությամբ (Թեղի տերևաշատ գնդաձև, Ռոբինիա կեղծակացիա գնդաձև, տոսախ մշտադար գնդաձև և այլն),
- *լացող*, երբ ծառապսակը կազմող ճյուղերն



Ռոբինիա կեղծակացիա գնդաձև

Թեղի տերևաշատ գնդաձև

ուղղված են դեպի ներքև (Թթենի սպիտակ լացող, կարագանա ծառանման լացող, Ռոբինի սպիտակ լացող և այլն):

Այգեպուրակ ձևավորումներում երրեմն օգտագործում են նաև սաղարթի յուրահատուկ կառուցվածքով պարտիզային ձևեր, որոնք ավելի շուտ ծառապսակի ձևափոխված աղավաղումներ են, սակայն նույնպես բարձր են գնահատվում կանաչապատման մեջ և ունեն լայն կիրառություն: Այդպիսի ձևերից են՝ *օձաձև*, *ոլորաժյուղ*, *թելանման*, *ոլորիված*, *հյուսաձև*, *պարուրաձև*, *ყռձև* և այլն:

Գեղարվեստական կոմպոզիցիաներում անփոխարինելի են նաև *կարճահասակ*, *գաձած* և *բարձիկանման* ծառաթփատեսակները, որոնք հատկապես շատ են օգտագործվում քարապարտեզներում:



Տոսախ մշտադար սյունաձև


Թույա արևմտյան սյունաձև




Եղևնի կեռիկավոր լացող



Կաղնի ամառային բրգածև



Թթենի սպիտակ լացող



ԻԴԵՊ

## ԴԱՏՃԱՌԸ ԼՈԼԻԿՆ Է\*

Արդեն մի քանի տասնամյակ քժիշկները խոսում են «միջերկրկածովային երևոյթի»՝ Միջերկրական ծովի ավազանի երկրների բնակչության կյանքի երկար տևողության մասին: Հավանաբար դրա պատճառը սնունդն է, քայլ հատկապես դրա ո՞ր բաղադրիչը: Ըստ տարբեր վարկածների՝ պատճառը հարավային ժողովուրդների սննդակարգում ձկան, կարմիր գինու կամ ձիթապտղի առա-

տությունն է: Վերջերս առաջ է քաշվել «կենսահյութի» ևս մի թեկնածու՝ լիկոպինը՝ կարոտինի տիպի միացություն, որը պարունակվում է տարբեր բանջարեղեններում և մրգերում, հատկապես լոլիկում: Այս միացությունը ստացել է իր անվանումը հենց լոլիկի լատիներեն անվանումից՝ *Lycopersicum*:

Ասգլիացի քժիշկները 36 սրտային հիվանդների տվել են լիկոպին պարունակող հարեր, և երկու տարի ան-



նրանց արյունատար անորների աշխատանքը բարելավվել է 53 %-ով:

\* «Найка и жизнь», 2015, N 5.

# ՀԱՅԵՐԻ ԾԱԳՈՒՄ- ՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԵԼԵՏԻԿԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ

**(Եթոգենոմիկայի լաբորատորիա,  
ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության  
ինստիտուտ)**



ԼԵՎՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային  
կենսաբանության  
ինստիտուտի Եթոգենոմիկայի  
լաբորատորիայի վարիչ,  
կենսաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր

այկական լեռնաշխարհում էթնոժողովրդագրական գործընթացները սկսվել են դեռևս վաղ քարե դարի ժամանակաշրջանում, որը թերևս, մասամբ անհնարի դարձնում դրանց լիարժեք և հստակ պարզաբանումը միայն ավանդական մոտեցումների (պատմություն, հնագիտություն, լեզվաբանություն, առասպելաբանություն, մարդաբանություն) կիրառմամբ: Ժողովրդագրական հիմնահարցերի օբյեկտիվ լրացրանում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում հատկապես հայ ժողովրդի համար, որի արմատների և պատմության ուսումնասիրության ասպարեզում տասնամյակներ շարունակ գերակայել է եկվորության տեսակետը:

Վերջին տասնամյակներում մոլեկուլային գենետիկական հատկանիշների հիման վրա իրականացվող հետազոտությունները տարբեր ժողովուրդ-



ների էթնոգենեզի վերակառուցման անբաժանելի մասն են և հնարավորություն են տալիս նախապատմական և պատմական իրադարձությունները ներկայացնել հազարամյակների խորքից:

Հայաստանում պոպուլյացիոն գենետիկական հետազոտությունները սկսվել են շուրջ

կես դար առաջ՝ 1970-ական թվականների սկզբից: Այս ուղղությամբ հրատարակված աշխատությունների հիմքում ընկած են հայերի՝ տարբեր աշխարհագրական խմբերի գենետիկական կառուցվածքի գնահատմանն ուղղված ուսումնասիրությունները՝ օգտագործելով հնէամարդաբանական,



## ԶԱՐՈՒՀԻ ԽԱՎԱՏՐՅԱՆ

«ՀԱԱ մոլեկուլային  
կենսարանության  
հնատիտուտի Եթնոգենումիկայի  
լաբորատորիայի ավագ գիտ.  
աշխատող, կենսարանական  
գիտությունների թեկնածու»

յան բնակիչները տարածքը լրել են համատարած սառցակալման պատճառով, իսկ լեռնաշխարհի վերաբնակեցումը տեղի է ունեցել սառուցների նահանջից հետո՝ հողագործության համար բարենպաստ պայմանների ի հայտ գալուն պես: Ըստ գենետիկական տվյալների՝ հայերը, որպես առանձին էթնիկ միավորում, ծևավորվել են մոտ հինգ հազար տարի առաջ, որը համապատասխանում է հնդեվրոպական լեզվաբնտանիքից հայերենի անջատման ժամանակաշրջանին: Բացի այդ, ժխտվում է հայերի՝ այսպես կոչված «քալկանյան» ծագման, այսինքն՝ եկվորության վարկածը և ցույց է տրվում, որ ժողովրդի էթնոգենեզը տեղի է ունեցել իրենց անմիջական գենետիկա-

յերի հայրական գենոֆոնները շատ բազմազան է, որը վկայում է մեծ թվով հիմնադիր հայրերի առկայության մասին: Դրա հետ մեկտեղ, հայկական գենոֆոնն ունի ցայտուն արտահայտված տարածքային շերտավորում: Դա նշանակում է, որ հայկական տարբեր խմբերը (օրինակ՝ սասունցիներ, վանեցիներ, արցախցիներ և այլն) գենետիկորեն միատարր չեն, որը բացատրվում է աշխարհագրական խոչընդոտներով և պատմաբաղարական գործոններով՝ պայմանավորված տևական մեկուսացմամբ: Դրա ակնառու հետևանքներից մեկն է նաև այն, որ հայերենը հարուստ է միմյանցից բավական տարբերակված բարբառներով: Այդ իսկ պատճառով հայերի

մատնահետքային և նույնաշաբանական հատկանիշներ:

1997 թվականին միջազգային համագործակցության շրջանակներում սկսվեց հետազոտությունների միանգամայն նոր փուլ, որի հիմնական նպատակն էր հայերի և Մերձավոր Արևելքի, ինչպես Հարավային Կովկասի այլ հարակից տեղաբնիկ ժողովուրդների գենետիկական պատմության վերականգնումը հայրագծային, մայրագծային և երկկողմանի (առտոսումային) ժառանգվող և սերնդեսերունդ փոխանցվող հատկանիշների հիմնա վրա: Այդ հետազոտությունների համաձայն՝ հայերի գենոֆոնը գլխավորապես բաղկացած է նեղիթյան տոհմագծերից, որոնք մուտք են գործել Հայկական լեռնաշխարհ Մերձավոր Արևելքից առաջին երկրագործների միջոցով շուրջ 10 – 12 հազար տարի առաջ: Ըստ երևույթին, Հայկական բարձրավանդակի պալեոլիթ-



կան նախաների բնակեցման տարածքում, ինչը նշանակում է, որ հայերը տեղաբնիկ են իրենց պատմական հողերի վրա:

Չնայած խիստ արտահայտված էթնիկ ինքնությանը՝ հա-

գենետիկական պատմության առավել ձգբիտ վերականգնումը պահանջում է պատմական Հայաստանը ներկայացնող առանձին տարածքային խմբերի ուսումնասիրություն:


Այսպես, հաջողվել է ստուգել հայերի առավել մեկուսացված համայնքներից մեկի՝ Երբեմնի հարավային մերձական ծովովան Պոնտոսի տարածքում բնակվող համշենահայերի ծագման վերաբերյալ տարրեր վարկածները: Մեր հայրենակիցների այս աշխարհագրական խումբը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում պատմաբանների և գենետիկների համար, քանի որ նրանց ծագման վերաբերյալ հայ և թուրք մասնագետների տեսակետները տրամադրուեն հակառակն են: Դեռևս

18-րդ դարում բռնի կրոնափոխված համշենահայության սերունդներն այսօր ապրում են Թուրքիայի տարրեր շրջաններում, որոնց մի մասում ընդգրկված է պատմական Հայատանի Համշեն գավառը: Ժամանակի ընթացքում համշենցիների քրիստոնեությունը պահպանած

հատվածը սփռվել է Սև ծովի հարավարևելյան, իսկ հետագայում՝ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, ցեղասպանություն վերապրած համշենահայերի մեծ մասը հաստատվել է Սև ծովի հյուսիսարևելյան (ռուսական) մերձափնյա շրջաններում՝ պահպանելով լեզուն, կրոնը, ազգային ավանդույթները: Մինչդեռ Օսմանյան կայսրության, հետագայում նաև հանրապետական ժողովի համար համապատասխան պահպանական աշխատավայր է համշենահայության սերունդները:

Մասնաւոր պահպանական աշխատավայր համշենահայության սերունդները, կտրվելով հայկական մշակույթից, աստիճանաբար կորցրել են հայկական ինքնության կարևոր բաղկացուցիչները՝ պահպանելով միայն տեղական ազգագրական նկարագիրը, որն արտահայտվում է ընդամենը գենետիկական ծագման մասին հիշողության դրսնորումներով:

Այս խմբի ինքնության խնդիրները վերլուծելիս գիտնականները տարրեր տեսակետներ են հայտնել՝ որպես նրանց առա-



վել հավանական ծննդավայր առաջարկելով Արևելյան Հայաստանը, Արևմտյան Հայաստանը կամ Կենտրոնական Ասիան: Այս երեք թեկնածու տարածաշրջանները ներկայացնող պոպուլյացիաների և համշենցիների գենետիկական նկարագրերի համեմատությունը վկայում է տվյալ խմբի հայկական ծագման մասին՝ մատնանշելով պատմական Հայաստանի կենտրոնական շրջանները որպես համշենցիների նախնիների ծննդավայր և հերքելով նրանց կենտրոնաասիական ծագման վարկածը: Միևնույն ժամանակ համշենահայերը բնութագրվում են գենետիկական բազմազանության համեմատաբար ցածր մակարդակով, որն արտացոլում է նրանց երկարատև վերաբռնողական



## ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեկուսացվածությունը, որի վառ ապացույցն է նաև յուրահատուկ համշենական բարբառի պահպանումը:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև Ծովաստանի եվրոպական հատվածի հարավում բնակվող մեկ այլ համայնքի՝ Դոնի հայերի գենետիկական պատմությունը: Ըստ բանավոր ավանդության և պահպանված արձանագրությունների՝ ժամանակակից Դոնի հայերի նախնիների մեծամասնությունն ապրել է Ասիում՝ միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքում: Մեջուկ թյուրքերի ավերիչ արշավանքների հետևանքով քաղաքի բնակչության մի մասը ստիպված լրել է հայրենի հողերը և 13-րդ դարի կեսերին վերաբնակվել Վոլգայի հարավային շրջանում: Սակայն թյուրքախոս նոգայցիների հաճախակի ներխուժումների ճշշման ներքո նրանք լրել են նաև այդ

վայրերը: 14-րդ դարի սկզբում նրանք գաղթել են Ղրիմ, որտեղ ապաստանել են ընդհուպ մինչև 18-րդ դարի վերջը, երբ մերձագովյան դիրքերի ամրապնդմամբ մտահոգված ոռուսական կառավարության որոշմամբ սկսվեց Ղրիմի հայերի վերաբնակեցումը Դոնի հողերի վրա:

Գենետիկական տեսանկյունից գաղթագնացության ալիքներով և տարրեր էթնիկ կազմավորումների հետ շփումներով ուղեկցվող նման հարուստ պատմությունը պես է այս կամ այն կերպ ազդեր Դոնի հայերի գենոֆոնդի վրա: Եվ իրոք, դարեր շարունակ սփյուռքում ապրելու հանգամանքն իր հետքն է ժողել այդ համայնքի գենետիկական պատկերի վրա, որտեղ արտացոլվում է հարևան սլավոնական բնակչության ազդեցությունը: Մինչդեռ նույնը չի կարելի պնդել թյուրքական ազդեցության մասին, չնայած գրեթե կես հազարամյակ մինչյանց հետ համագոյակցությանը Ղրիմի թերակղում:

Առհասարակ, իր բազմադարյա պատմության ընթացքում, թեև մշտապես գտնվելով տարրեր օտար տիրապետությունների ներքո, հայ ժողովրդի գենոֆոնդն առնվազն վերջին հազարամյակում է հական արտաքին գենետիկական ազդեցության չի ենթարկվել: Օտար նվաճողների հետ հայերի գենետիկական շփումները խոչընդոտող առավել հավանական պատճառներն էին Հայկական բարձրավանդակի աշխարհագ-



րական դիրքը, քրիստոնեության վաղ ընդունումը և հայերի մոտ խիստ արտահայտված էթնոմշակութային ինքնության ձևավորումը:

Ժամանակակից հայերի գենետիկական ուսումնասիրությունները վերջերս համալրվել են նաև Հայաստանի տարածքում պեղումներից ստացված հնէամարդաբանական նյութերի հետազոտություններով: Ոսկրային գտածների հնագոյն Դվթ-ի ուսումնասիրությունը հանգեցրել է ուշագրավ բացահայտումների, ըստ որոնց՝ Հայկական լեռնաշխարհի արևելյան շրջաններում նեղլիքյան ժամանակներից ի վեր բնակվող պոպուլյացիայի և ժամանակակից հայերի միջև առկա է հստակ գենետիկական շարունակականություն: Այս արդյունքն անհերքելի ապացույցն է այն իրողության, որ հայ ժողովրդի գենետիկական արմատները ծագել և կազմավորվել են Հայկական լեռնաշխարհում:



# ՑՈՒՑԱՍԱՐՔԸ ՉՈՐԱՑՆՈՒՄ Է ԱՉՔԵՐԸ\*

**Ա**շխատանքի բերումով կամ հաճույքի համար շատ մարդիկ ամեն օր ժամերով նստած են համակարգչի ցուցասարքի առջև: Համակարգչի հետ գործ ունեցող տարրեր տարիքի 96 մարդու հետազոտությունը, որ կատարել են ձապնացի մասնագետները, ապացուցել է, որ այդ գրաղմունքը չորացնում է աչքերը:

Բարակ թաղանթի տեսքով աչքի մակերեսը ծածկող արցունքները 98,2 %-ով կազմված են ջրից, մսացածը սպիտակուցներ են, միզանյութ, հանքային աղեր, ձարպեր և շաքար: Այդ բաղադրությունը պահպանում է եղջերաթաղանթի խոնավությունը, հեռացնում նստող փոշին: Օրվա ընթացքում արցունքագեղձերն արտադրում են շուրջ 10 միլիլիտր արցունք: Երկար ժամանակ համակարգչի էկրանին նայող մարդու արցունք-



ներն ավելի նոսր են, ավելի արագ են չորանում, որի հետևանքով առաջանում են աչքերի ծակոցներ և տեսողության աղոտություն: Համակարգչով 8 ժամից ավելի աշխատելը կրծատում է արցունքներում մուցին - 5 AC սպիտակուցի պարունակությունը, որն արցունքահեղուկը դարձնում է փոքրինչ մածուցիկ, դանդաղեցնում է չորացման գործնթացը և նպաստում արցունքահեղումի հավասարաշափ տարածմանը եղջերաթաղանթի մակերևոյթով:

Հատկապես շատ են տուժում մանկական աչքերը: Այս ուսումնասիրությունը կատարած ակնարույժները խորհուրդ են տալիս հաձախսակի կտրել հայացքն էկրանից և հառել այն դեպի հեռուն:



Գերմանիայի Ուլմ քաղաքի Համաձարակաբանության և բժշկական կենսաչափության ինստիտուտի սննդաբաններն առաջարկում են սմարթֆոնի միջոցով նիհարելու եղանակ: Տրագրին միանալ ցանկացողները հեռախոսով լուսանկարում են այն, ինչ ուսում են օրվա ընթացքում, և լուսանկարներն ուղարկում են սննդաբաններին:

Ինստիտուտում ստեղծված հատուկ ծրագիրը որոշում է լուսանկարված սննդի կալորիականությունը, և նրանում սպիտակուցների, ձարպերի ու ածխաջրերի քանակը: Օրվա վերջին

հանրագումարային արդյունքներն ուղարկվում են նույն հեռախոսին. դա հնարավորություն է տալիս դրա տիրոջը հետևելու, թե ինչ սնունդ է օգտագործում:

**Дюдиета**  
худейте вкусно

**Абсолютный контроль  
за Вашей диетой:**

- Список продуктов
- Рецепты блюд
- Калькулятор веса
- График контроля веса
- Календарь диеты
- Дневник диеты
- Список покупок
- Полезные советы!
- Автоматическое чередование белковых и белко-овощных дней
- Калькулятор потребляемых жидкостей
- Калькулятор белка

# ՏԱՐԲԵՐ ՌԱԴԻՈՇԱՌԱ- ՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՏԵԼԱՆԵՐ

## ՄԱՍ II

(Սկիզբ՝ Գիտության աշխարհում, N 2, 2017)



ՎԱՀԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համասարանի մաքեմատիկայի և բարձր տեխնոլոգիաների ինստիտուտի «Հեռահաղորդակցություն» բազային ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Երևանի կապի միջոցների ԳՀԻ» ՓԲԸ փոխտնօրեն՝ գիտության գծով:

Հետազոտությունների ոլորտը՝ անտենաներ և անտենային չափումներ, ԳԲՀ և միլիմետրային ալիքների տեխնիկա և տեխնոլոգիաներ, էլեկտրամագնիսական համատեղելիություն

**Մ**արդկության գործունեության համար ԷՄՄ-ն սահմանել է 40-ից ավելի տարրեր ռադիոհաղություններ, որոնք գործում են հետևյալ հիմնական ոլորտներում՝ ռադիոկապ երկրի վրա (շարժվող օրյենքների միջև՝ այդ թվում բջջային, անշարժ օրյենքների միջև՝ այդ թվում ռադիոռեկտային), երկրային և արբանյակային ռադիոհեռարձակում, ռադիոնավագնացություն, ռադիոտեղորոշում, ռադիոաստորագիտություն և տիեզերական կապ: Ընդ որում, ըստ ԷՄՄ Համաձայնագրի՝ ռադիոալիքների տիրույթը բաժանված է երկրագնդի տարրեր

պետությունների միջև՝ ըստ նրանց դիրքի աշխարհի սահմանված գոտիներում, ինչպես նաև առանձին պետություններում՝ տարրեր ռադիոհաղությունների միջև:

Կախված ռադիոհաղության տեսակից և ներկայացվող պահանջներից՝ ըստրում են այս կամ այն տիպի անտենա կամ միասնական անտենային համակարգ: Երկար և միջին ալիքների դեպքում ( $\lambda \sim 2 \cdot 10^4 \mu\text{-}10^4 \mu$ ) առավելապես օգտագործվում են Ռ- և Տ-աձև լարային անտենաներ, կեսալիքային տատանակներ, որոնց ալիքի երկարությունը՝  $l \leq \lambda$ : Կարճ և գերկարճ ալիք-

ների դեպքում օգտագործում են առավելապես լոգարիթմապարբերական, պարուրային և ձողաձև անտենաներ: ԳԲՀ և ավելի բարձր հաճախությամբ տիրույթներում օգտագործում են պարուրային, ձեղքային, տպասլիկային և այլ անտենաներ: Ռադիոռեկտային կապում օգտագործում են հայելային անտենաներ: Այդպիսի անտենաներ օգտագործվում են նաև կապի և հեռարձակման արբանյակային համակարգերում, իսկ մի շարք դեպքերում, որպես բազային կայանների անտենային համակարգեր և արբանյակային վերահաղորդիչներ, օգտագործ-




Նկ. 6. Լիաշրջուն հայելային ռադիոհեռադիտակների օրինակներ

Վում են անտենային ցանցեր: Ուղղորդիչ, լոգարիթմապարբերական, շրջանակածն և շրջանային անտենաներից կազմված ցանցերը լայն տարածում են գտել մետրային տիրույթի ռադիոտեղորշման համակարգերում: Վյուպիսի անտենային ցանցի ՈՒԴ-ի ձևավորմանը մասնակցում է նաև երկրային մակերևույթից անդրադարձառագայթումը: Սանտիմետրային տիրույթի ռադիոտեղորշման և ռադիոնավագնացության համակարգերում՝ քաղաքացիական և զինվորական ավիացիայի համար, ծովային նավերի վրա օգտագործվում են նաև հայելային անտենաներ և անտենային ցանցեր: Թորիչքի ընթացքում ականներ, արկեր, անօդաչու սարքեր, իսկ շարժման ընթացքում՝ տանկեր, զրահապատ տեխնիկա հայտնարերելու նպատակով մի շարք զինվորական նշանակության համակարգերում օգտագործվում են ճառագայթիչներից (Ճեղքային, ալիքատարային բաց ծայրեր և այլն) կազմված գծային փուլավորված անտենային ցանցի տեսքով՝ ճառագայթարիչներ, որոնք տեղակայվում են գլանային պարաբոլային հայելու կիզակետային գծի վրա: Կապում, ռադիոտեղորշման և ռադիոնավագնացութ-

յան համակարգերում օգտագործվող անտենաների ցանկը չափազանց ընդարձակ է:

Տիեզերական օբյեկտների անլյունային կոորդինատների ճշգրիտ որոշման և դրանց հետազոտման համար, մեծ հեռավորությունների պատճառով, պահանջվում են անտենաների բարձր անլյունային լուծունակություն և ընդունիչ համակարգերի բարձր զգայնություն: Ուստի, այդպիսի նշանակության անտենաները պետք է ունենան հավաքող մակերևույթի զգալի չափեր: Եթե հաշվի առնենք ֆինանսական ծախսերի խորանարդային կախումը ռադիոաստոնադիմակի առաջարկության համակարգերում օգտագործվում են ճառագայթիչներից (Ճեղքային, ալիքատարային բաց ծայրեր և այլն) կազմված գծային փուլավորված անտենային ցանցի տեսքով՝ ճառագայթարիչներ, որոնք տեղակայվում են գլանային պարաբոլային հայելու կիզակետային գծի վրա: Կապում, ռադիոտեղորշման և ռադիոնավագնացութ-


անտենաների չափերից, ապա պարզ է դառնում դրանց ահուելի թանկությունը: Այսուամենայնիվ, շատ երկրներում կառուցվել են հսկայական ռադիոաստղադիտակներ: Ստորև բերված են առավել տպավորիչ ռադիոաստղադիտակների օրինակների նկարները: Դրանց մասն են կազմում լիաշրջուն ռադիոաստղադիտակները՝ հսկայական պարաբոլարդային հայելիներով (Նկ. 6):



Այդ անտենաներն օժտված են անկյունային բռնկի տասներորդ մասին հասնող անկյունային լուծունակությամբ: Դրանցից են՝ Գրին-Բենք (ԱՄՆ) ռադիոաստղադիտակը՝ հիմնական հայելու  $110 \times 100 \text{ m}^2$  չափերով, Էֆելսբուրգ (Գերմանիա) ռադիոաստղադիտակը՝ հայելու  $100 \text{ m}$  տրամագծով, Լուվել (Ասգլիա) ռադիոաստղադիտակը՝ տրամագիծը՝  $76,2 \text{ m}$ , Եվպատորիայի (Ռուսաստան) ռադիոաստղադիտակը՝ տրամագիծը՝  $70 \text{ m}$ : Լիաշրջուն ռադիոաստղադիտակի չափերի մեծացմանը զուգընթաց, զգալիորեն բարդանում է դրա հենարանաշրջանային համակարգի **իրականացումը**, որի հետ ինչոր կերպ դեռ կարելի է հաշտվել: Սակայն միաժամանակ զգալիորեն աճում են հողմային և կշռային բեռնվածքները, որոնք հանգեցնում են անտենային համակարգի դեֆորմացման և, որպես հետևանք, անտենայի բնութագրերի վատթարացման: Դրան այլընտրանք է մեծ ռադիոաստղադիտակների կառուցումը, երբ հիմնական մեծ գնդածն հայելին անշարժ տեղակայվում է Երկրի գետնափոք թափի մեջ (նկ. 7):

Այդպիսի ռադիոաստղադիտակների ուղղորդումը դեպի երկնային աղբյուր իրականացվում է ձառագայթահարիչի տեղաշարժով: Այդ սկզբունքով է կառուցվել Արեսիբ (Պուերտո-Ռիկո) ռադիոաստղադիտակը, որի գնդածն հայելու տրամագիծը  $305 \text{ m}$  է, իսկ խորությունը՝  $51 \text{ m}$ : Ձառագայթահարիչը տեղավորված է  $130 \text{ m}$  բարձրությունում և տեղաշարժվում է ձոպանների միջոցով:  $54 \text{ m}$  տրամագծով կիսագնդի տեսքով հայելի՝ տեղադրված ժայռային թափի մեջ, օգտագործվել է POT 54/2,6 (Հայաստան) ռադիոաստղական աստղադիտակում: Հայելին բաղկացած է ավելի քան 4 հազար պանելներից, որոնց գնդածն մակերևույթները մշակված են բարձր ճշգրտությամբ՝ նախատեսելով դիտակի աշխատաքը նաև ալիքների կարգ՝ միլիմետրային տիրույթում: Ճառագայթահարիչը կենտրոնական ֆերմայի վերջնամասում է, որի հակառակ մասում, երկնային կողմից, տեղադրված է օպտիկական ռեֆլեկտոր՝  $2.6 \text{ m}$  տրամագծով, որը կատարում է նաև ֆերմայի կառուցվածքի հա-

կակշոի դեր: 2016թ. աշնանը Չինաստանում շահագործման է հանձնվել FAST ռադիոաստղադիտակը՝ գետնափոք թափում տեղակայված  $500 \text{ m}$  տրամագծով հայելիով: Այն մարդկության պատմության ամենականառու նախագծերից մեկն է: Հայելին կազմված է  $4450$  եռանկյունաձև անդրադանող պանելներից՝  $11$ -մետրանոց կողմերով: Յուրաքանչյուր պանելի դիրքը կարգավորվում է մեծ ճշտությամբ՝ պողպատե ծոպանների ցանցային և հիդրավլիկ հաղորդականներով համակարգերի օգնությամբ: Այդ պանելների դիրքով կարգավորվում է հայելու կիզակետումը զենիթից  $\pm 40^\circ$  սահմաններում: «Խադիոլության» գոտու շառավիղը կազմում է  $5 \text{ km}$ , որն ապահովելու համար մոտակա գյուղերից վերաբնակեցվել է  $9$  հազարից ավելի բնակիչ: Շինարարական աշխատանքները տևել են  $5$  տարի, իսկ ծախսը կազմել է  $180$  մլն. դրամ: Թեսաւոյն գործարկման ժամանակ ռադիոաստղադիտակն ընդունել է ազդանշաններ Երկրից  $1351$  լուսային տարի հեռավորությամբ բարակիչից (պոլ-



Նկ. 7. Գետնափոք թափով ռադիոհեռադիտակներ

սար): Ռադիոաստղադիտակի հիմնական խնդիրներն են՝ գրավիտացիոն ալիքների, նոր աստղերի և գալակտիկաների որոնումը և արտերկրային քաղաքակրթությունների հայտնաբերումը: Նշենք նաև հեռանկարային և շատ տարածական՝ սինթեզված ապերտուրով անտեսային համակարգերը և ահրելի հիմնահատվածներով ռադիոաստղադիտակի-հնտերֆերաչինները: Այդպիսի անտեսային համակարգերն ունեն մեկ կարգով ավելի լուծունակություն, իսկ ապագայի նախատեսվելիք նախագծերը՝ տիեզերական մասշտաբների հիմնահատվածներով, հնարավորություն կտան հասնելու ֆանտաստիկ ամեյունային լուծունակությունների:

### **Անդենաների և անդենային չափումների գեխնիկայի բնագավառում հայկական գիրության նվաճումների հակիրծականացում:**

Այս բնագավառի հետ կապված ռադիոֆիզիկական հետազոտությունների սկզբունքը Հայաստանում՝ Բյուրականի աստղադիտարանում դրել է աշխարհահռչակ գիտնական, ակադեմիկոս Վիկտոր Հանրարձումյանը, ում ջանքերով 1960թ.-ին հիմնվեց ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը (ՌՖԷԻ): Էմիլ Միրզաքարելյանի ղեկավարությամբ: Ակադեմիկոս Էմիլ Միրզաքարելյանի և, այնուհետև, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի ղեկավարությամբ: Ակադեմիկոս Էմիլ Միրզաքարելյանի և, այնուհետև, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի ղեկավարությամբ մշակվել և պատրաստվել են քվանտային և պարամետրական ցածրաղմկային ուժեղարարներ, ԳԲՀ տիրույթի տարբեր հատվածների քազմաթիվ բևեռացումաչափչներ և գերզգայուն ընդունիչներ, այդ թվում նաև՝ աղմկային ձա-

ռագայթման ռադիոչափներ: Վյու աշխատանքների արդյունքում ակադեմիկոս Մարտիրոսյանի ղեկավարությամբ ձևավորվել է գիտական դպրոց, որի ղեկավարը և մի խումբ գիտնականներ արժանացել են ՀԽՍՀ Պետական մրցանակի: Խոշոր գիտական ձեռքբերումների համար ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանն արժանացել է նաև Ուկրաինական ԽՍՀ Պետական մրցանակի, ԽՍՀՄ ու ՀՀ կառավարական և միջազգային բազմաթիվ պարգևների: Մշակված սարբերն օգտագործվում են տարբեր ռադիոաստղադիտակներում, որոնց թվին են պատկանում Ռուսաստանում կառուցված վիթխարի 600-մետրանոց ՊԱՏԱՀ-ը, Եվպատորիայի ՊՏ-70-ը և շատ ուրիշներ: Անտեսային չափումներն իրականացնում է ՌՖԷԻ-ի կիրառական ռադիոֆիզիկայի լարորատորիայի անձնակազմը՝ ակադեմիկոս Վլադրիտ Ղույանի գլխավորությամբ: ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Արսեն Հախումյանի ղեկավարությամբ ՌՖԷԻ-ի ԳԲՀ համակարգերի, միլիմետրային ալիքների և աղողանշանների թվային մշակման լարորատորիաներում ստեղծվում են նաև հեռահար և մոտակա գործողության ռադիոտեղորոշչներ: Ինստիտուտի կողեկանի և գիտնականների արժանիքների և հեղինակության ճանաչումն են ՌՖԷԻ-ում անցկացված «Ռադիոաստղագիտական սարբավորումներ» տարեկան համամիութենական գիտաժողովները, իսկ այժմ նաև ԳԲՀ և տերահերցային ալիքների ուղղությամբ միջազգային գիտաժողովները:

ՌՖԷԻ-ի հիմնան օրվանից Պարիս Հերունին՝ այն ժամանակ ԳԲՀ բաժնի ղեկավարը և

գիտության գծով փոխառոքենք, իրականացրել է ծավալուն հետազոտություններ անտեսայի մոտակա դաշտով չափումների ոլորտում: Հետաքրքիր է, որ այդ առաջադեմ մեթոդի ուղղությամբ ԱՄՆ-ում ևս սկսեցին կատարվել լայնածավալ աշխատանքներ: Հաճելի է նշել, որ ԱՄՆ-ում այդ ոլորտի և անտեսաների տեսության զարգացման մեջ խոշոր դեր ունի մեր հայրենակից, ականավոր գիտնական Արթուր Յաղյանը: Պարիս Հերունու ղեկավարած կողեկանի աշխատանքների և հաջող մշակումների շնորհիվ 1971թ. նրա գլխավորությամբ հիմնվեց Ռադիոֆիզիկական Զափումների Համամիութենական ԳՀԻ-ը (ՌՀՀԳՀԻ), որը հետագայում դարձավ ԽՍՀՄ-ի Պետական Ստանդարտացման Կոմիտեի գլխամասային հիմնարկություն՝ անտեսաների և փուլային չափումների ոլորտում: Ավելի ուշ Պ. Հերունու ղեկավարությամբ ստեղծվեց նաև Անտեսային Զափումների Պետական Էտալոնային Կենտրոնը (ԱՉՊԷԿ) Օրգով գյուղի մոտ՝ Բյուրականի մոտակայրում: ՌՀՀԳՀԻ-ում կատարելագործվում էին անտեսային չափումների մեթոդները մոտակա և հեռավոր դաշտերում, մշակվում էին դրանց չափագիտությունը և ստանդարտացումը, պատրաստվում էին ավտոմատ չափիչ համալիրներ անտեսաների մոտակա դաշտով, ինչպես նաև անցկացվում էին տարեկան «Անտեսաների և անտեսային չափումներ» համամիութենական գիտաժողովները: Այդ ուղղությամբ Պարիս Հերունու ղեկավարությամբ ձևավորվեց նաև գիտական դպրոց, որին պատկանելու պատիվ ունի նաև տողերիս հեղինակը: Արժանի



ավանդի և մեծ հաջողությունների համար ակադեմիկոս Հերունին արժանացել է մի շարք կառավարական ու միջազգային պարգևների, իսկ մի խումբ գիտնականներ նրա գլխավորությամբ արժանացել են ՀԽՍՀ ու ԽՍՀՄ Պետական մրցանակների: Պ. Հերունին առաջարկել է նաև ROT 54/2,6 ռադիոաստիկական աստղադիտակի նախագիծը: Այն կառուցվել է ԱՉՊԷԿ-ի տարածքում: Այդ դիտակով կա-



տարվել են նախնական չափումներ սանտիմետրային ալիքների տիրություն, սակայն ԽՍՀՄ-ի վիլոգումն ու ֆինանսական միջոցների բացակայությունը հետագայում հնարավորություն չտվեցին շահագործման հանձնելու այդ հզոր շինությունը:

Աշխատանքներ և հետազոտություններ անտեսնաների և

դրանց չափման տեխնիկայի ոլորտում վերջին 15 տարիների ընթացքում իրականացվում են նաև Երևանի Կապի Միջոցների ԳՀՀ-ում (ԵրԿՄԳՀ), որը գլխավորում է պրոֆեսոր Մհեր Մարկոսյանը: ԵրԿՄԳՀ-ում հաջողությամբ աշխատանքներ են տարվում նոր անտեսնաների, մետրային և սանտիմետրային տիրույթի ռադիոտեղորոշչինե-



րի ՓԱՑ-երի ստեղծման և անտեսնային չափումների մեթոդների զարգացման ուղղությամբ: Դրա հաստատումն են այդ ուղղություններով ստացված մի շարք գյուտերի արտոնագրերը և պայմանագրային աշխատանքների հաջող կատարումը Եվրոպայի և Մերձավոր Արևելքի մի շարք ընկերությունների հետ:

# ԳԵՐԳԱՆԱՅՔՆԵՐԻ ԵՎ ՀՐԹԻՌՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ. ԻՆՉ ԿԱՐՈՌ Է ՏՍԼ ՄԱՐԿԱՆՑ ՄԵՏԱՆԱԿԱՆ ԶՐԱԾԻՆԸ\*



«Մետաղական ջրածյան սիմախն տեսության ասպարեզ գալուց գրեթե մեկ դար անց Հարվարդի գիտնականները հասել են հաջողության մոլորակի ամենահազվագյուտ և հավանաբար ամենաարժեքավոր նյութերից մեկի ստեղծման գործում», - գրում է PhysOrg կայքը:

Մետաղական ատոմական ջրածին ստեղծել են բնագետներ Այզեկ Սիլվերան և Ռանդ Դիասը: Նյութի ստեղծումը մատերիայի բնույթի վերաբերյալ հիմնարար հարցերի պատասխանների որոնման գործում միայն գիտնականներին օգնելու հնարավորությունը չէ: Ենթադրվում է, որ մետաղական ջրածինը կունենա կիրառման լայն տիրույթ, մասնավորապես՝ այն կարող է լինել գերհաղոր-

դիշ սենյակային ջերմաստիճաններում:

- Այս բարձր ճնշումների ֆիզիկայի Սուրբ Գրավուն է, մետաղական ջրածինի ամենաառաջին նմուշը երկրի վրա, - ասում է Սիլվերան: Դուք տեսնում եք մի քան, որը նախկինում երբեք գոյություն չի ունեցել:

Այս ստեղծելու համար Սիլվերան և Դիասը ջրածինի փորրիկ նմուշը ենթարկել են 495 գիգապասկալ ճնշման (50,4 մլն տոննա՝ քառ. մետրի վրա), որն ավելի է, քան ճնշումը երկրի կենտրոնում: Այդպիսի կրիտիկական ճնշման դեպքում այնդ մոլեկուլային ջրածինի բյուրեղային ցանցը քանդվում է, միմյանց ամուր կապված մոլեկուլներն անջատվում են և վերածվում ատոմական ջրածինի, որը մետաղ է:

«Կանխատեսումներից

ամենակարևորն այն է, որ մետաղական ջրածինը լինելու է մետաստաբիլ «նյութ»,- ասում է Սիլվերան: Սա նշանակում է, որ ճնշումը վերացնելուց հետո ջրածինը մնում է մետաղական վիճակում ձիշտ այնպես, ինչպես գրաֆիտից, բարձր ջերմաստիճանի և ճնշման ազդեցության տակ ձևավորված ալմաստը, ջերմաստիճանը և ճնշումը նվազեցնելիս, մնում է առանց փոփոխության:

Նյութի կայունացնելու հանգամանքը կարևոր է մետաղական ջրածին՝ որպես գերհաղորդիչ, սենյակային ջերմաստիճաններում հասրավոր օգտագործման համար: Ներկայում էներգիայի առնվազն 15 %-ը կորչում է հաղորդելիս, ուստի նոր նյութի օգտագործումը կարող է առաջացնել իսկական հեղափոխություն: Մասնավորապես՝ մետաղական ջրածինը կարող է արմատապես փոխել տրանսպորտային հա-

\*<http://www.dsnews.ua/future/era-superpoezdov-i-raket-zachem-lyudymam-metallicheskiy-vodorod-07022017120000>



մակարգը՝ հնարավոր դարձնելով արագընթաց գնացքների մագնիսական ձախրանքը (լսիտացիա) և էապես բարձրացնելով էլեկտրամորֆիլների, ինչպես նաև էլեկտրոնային բազմաթիվ այլ սարքերի արդյունավետությունը:


Մետաղական ջրածինը կարող է նպաստել էներգիայի արտադրման և պահպանման կատարելագործմանը. գերհաղորդիչներն ունեն զրոյական

դիմադրություն, էներգիան կարելի է պահպանել՝ ապահովելով հոսանքները գերհաղորդականության կոճերում, ապա օգտագործել այն ըստ անհրաժեշտության:

Մետաղական ջրածինը կարող է վճռորոշ դեր խաղալ տիեզերական տարածությունը յուրացնելու գործում: Միլվերան նշում է, որ մետաղական ջրածին ստանալու համար պահանջվում է էներգիայի հսկա-

յական քանակություն: «Եթե մետաղական ջրածինը նորից վերածնը մոլեկուլայինի, ապա այդ ամբողջ էներգիան հետ կստանանք», – ասում է գիտնականը:

Վառելանյութի էներգատարությունը բնութագրվում է տեսակարար իմպուլսով՝ մեծությամբ, որը հաշվարկվում է վայրկյանով և ցույց է տալիս, թե իրթիռի հետնամասից ուեակտիվ շիթը որքան արագ է արտադրվում: Ներկայում ամենաէներգատար վառելանյութի տեսակարար իմպուլսը 450 վայրկյան է: Մետաղական ջրածինի դեաքում այդ ցուցանիշը կարող է հասնել մինչև 1700 վայրկյանի: Գիտնականները ընդգծում են, որ մետաղական ջրածնի օգտագործումն էապես կիեշտացնի այլ մոլորակների հետազոտումը: Օրինակ՝ կարելի է տիեզերը հեռարձակել երկուսի փոխարեն մեկ աստիճան ունեցող իրթիռներ, ինչպես նաև մեծացնել տիեզերանավե-





րի օգտակար բեռնվածության ծավալները:



Նոր նյութը ստեղծելու համար Սիլվերան և Դիասն օգտագործել են Երկրի վրա գոյություն ունեցող ամենապինդ նյութերից մեկը՝ ալմաստը: Փորձերի համար գիտնականները վերցրել են սինթետիկ ալմաստի խնամքով հղկված երկու փոքրիկ կտորներ: Մակերևույթից ածխածինը հեռացնելու համար ալմաստները հղկվում են ալմաստե փոշով:

Սակայն փորձի համար նախատեսված կտորներն ուսումնասիրելիս գիտնականները հայտնաբերել են թերույթուններ, որոնք կարող էին նպաստել նմուշների քայլայմանը՝ բարձր ճնշման ներգործության դեպքերում: Այդ պատճառով նրանք որոշել են կիրա-

ռել իննային խածառման ու ակտիվ եղանակը. ալմաստի մակերևույթից տաշել են բարակ շերտ՝ ընդամենը 5 միկրոն հաստությամբ (մարդու մազի հաստության մոտավորապես

մեկ տասներորդ մասը): Ապա ալմաստները ծածկել են այլումինի օքսիդի բարակ շերտով, որպեսզի ջրածինը չքափանցի դրանց բյուրեղային կառուցվածք՝ հակառակ դեպքում նմուշները փխրուն կդառնային: Դրանից հետո ալմաստի նախապատրաստած կտորները տեղադրել են դեմ-դիմաց՝ ալմաստե մամլիչ կոչվող հայտնի սարքում:

Սիլվերան խոսովանում է, որ նրանք անմիջական արդյունք չեն սպասում, բարձր ճնշման պայմաններում, միևնուն է, սա հիմնարար ու հեղափոխական հայտնագործություն է»,- ասում է Սիլվերան: Զե՞ս որ ավելի քան չորս տասնամյակ տևած աշխատանք պահանջվեց՝ ստանալու համար մի նյութ, որի մասին տեսությունը ծնվել էր գրեթե մեկ դար առաջ:



# ՏԵՌՈՒԷԼԵԿՏՐԻԿԱՆԵՐ.

## ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ,

### ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹ-

#### ՅՈՒՆԵՐԸ,

#### ՍԻՆԹԵԶՄԱՆ

#### ԵԴԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ

#### ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԵՐԸ



ՎԱՐԵ ԲՈՒՏԻԱԹՅԱՆ

տեխնիկական գիտությունների դրվագը, ՀԱՊՀ «Միկրոէլեկտրոնիկա և կենսաբժշկական սարքեր» ամբիոնի պրոֆեսոր Գիտական հետաքրքրությունների դրվագ՝ կիսահաղորդչային և նանոէլեկտրոնային սարքերի ֆիզիկա, բարձրջերմաստիճանային գերհաղորդիչներ, ֆեռոէլեկտրիկներ և դրանց հիմքով քիմիական (կենսաբժշկական) զգայակներ

## Մաս 1




**Ժ**ամանակակից տեղեկատվական համակարգերի ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման նկատմամբ օրավոր աճող պահանջներն անխուսափելիորեն կարևորում են և բարելավված հատկություններով նյութերի և կառուցվածքների ստացման հետ կապված հարցերը։ Այս իմաստով ֆեռոէլեկտրիկ (ՖԷ) նյութերը և դրանց վրա հիմնված կառուցվածքները հսկայական ներուժ ունեն։ Վերջին տասնամյակներում միջազգային գիտական շրջանակներում ի սկզբանե սեգնետակտիկ կոչված նյութերի առավել կիրառական անվանումը «ֆեռոէլեկտրիկ» եզրույթն է։ Այս վերջին անվանումը կապված է ֆեռոէլեկտրիկների էլեկտրական հատկությունների և ֆեռոմագնիսների

մագնիսական հատկությունների միջև առկա նմանության հետ։ Այսպես որ հետագա շարադրանքում կօգտագործենք սեգնետակտիկ կոչների ներկայում առավել ընդունված ՖԷ անվանումը։

ՖԷ-ների մի մեծ դաս, հատկապես պերօվսկիտի կառուցվածքով բյուրեղները, դիէլեկտրիկներ են, որոնք բնութագրվում են փոքր դիէլեկտրական կորուստներով, օժտված են պիեզոէլեկտրական հատկություններով, բնութագրվում են մեծ դիէլեկտրական թափանցելիությամբ, որը ոչ գծայնորեն է կախված կիրառված էլեկտրական դաշտից, մեխանիկական լարումից, ջերմաստիճանից և արտաքին այլ ազդակներից։ Այդ ոչ գծային կախումներն են դրանց բազմաբնույթ կիրառելիության ու հեռանկարայ-

նության հիմնական պատճառը։ Վերջին տասնամյակում պերօվսկիտի  $A_{1-x} A'_x B O_{3-b}$  ( $A = P, Ba, La, Li ; A' = Sr, Ca, B = Ti, Ta, Co, Fe, B = Ti, Ta, Co, Fe ; 0 < x < 1$ ), կառուցվածքով մետաղաօքսիդների նկատմամբ հետաքրքրությունը պայմանավորված է նաև դրանց էլեկտրական հատկությունների լայն սպեկտրով, որն ընդգրկում է դիէլեկտրական նյութերից մինչև իոնային/կամ մետաղական, n- և p-տիպի կիսահաղորդիչներից մինչև գերհաղորդիչ նյութեր։ Լայնորեն հետազոտվել և կիրառություն են գտել հատկապես պերօվսկիտի տիպի մի շարք բարդօքսիդային ՖԷ նյութեր (BaTiO<sub>3</sub>, SrTiO<sub>3</sub>, Ba<sub>x</sub> Sr<sub>1-x</sub> TiO<sub>3</sub> (BST), PbTiO<sub>3</sub>, LiNbO<sub>3</sub>, La<sub>1-x</sub> Ca<sub>x</sub> Cr<sub>1-y</sub> Co<sub>y</sub> O<sub>3</sub>, CaAl<sub>1-x</sub> Ti<sub>x</sub> O, և այլն)։

Այս նյութերի վրա հիմնված



խեցեղեն և նանոթաղանքային կառուցվածքները ներկայում օգտագործվում և ակտիվութեն հետազոտվում են որպես միկրոէլեկտրոնային գԲՀ միջակայքի էլեկտրական շղթայի բաղադրիչներ (օրինակ՝ լարումով կառավարվող կրնինսատորներ և ակուստիկական ալիքների ռեզոնատորներ), արևային մարտկոցների տարրեր, հաշվողական և հեռահաղորդակցության տեխնիկայի բնագավառներում տեղեկատվության մշակման ու ձևափոխման հանգույցների քայլական, դիմիսիական, դեղագործության, սննդի արդյունաբերության ու շրջակա միջավայրի հսկման, հիվանդությունների ախտորոշման ոլորտներում որպես զգայակներ, ինչպես նաև մեքենաշինության ու տիեզերական սարքաշինության, պինդմարմնային վառելիքային մարտկոցների տարրեր: Այս սարքերում հիմնականում օգտագործվում են ՖԷ-ի դիէլեկտրական, պիրոէլեկտրական, պիեզոէլեկտրական և էլեկտրական առանձնահատկությունները:

Ինչպիսի՞ դիէլեկտրական նյութեր են ՖԷ-ները, նյութերի որ դասին են պատկանում և ի՞նչ առանձնահատկություններով են օժտված:

Ֆեռոէլեկտրիկներ են կոչվում այն դիէլեկտրիկները, որոնցում ջերմաստիճանային որոշակի միջակայքում առկա է ինքնարեր (սպոնտան) բևեռացում, որի ուղղությունը կարելի է փոփոխել արտաքին էլեկտրական դաշտ կիրառելով: Եթե ինքնարեր բևեռացումը կախված է ջերմաստիճանից, ապա այս խմբի նյութերը պիրոէլեկտրիկներ են, իսկ եթե ինքնարեր բևեռացման ուղղությունը ինքնարական է փոփոխել արտաքին էլեկտրական դաշտի ազդեցությամբ, ապա այդպիսի նյութեր-

ֆեռոէլեկտրիկ է: Վերջիններում լիցքերն առանձնացած ու կողմանորոշված են առանց արտաքին դաշտի ազդեցության: Դա է պատճառը, որ ֆեռոէլեկտրիկների բևեռացումը կոչվում է ինքնարեր: Ինքնարեր բևեռացումն առաջանում է ՖԷ-ի բյուրեղացանցի տարրական թցում իոնների ոչ կենտրոնահամաշավի դասավորվածության շնորհիվ, որն էլ բյուրեղի ծավալում ստեղծում է հաստատուն էլեկտրական երկրսեռային մոմենտ:

Ըսդհանրապես, նյութի համար «մեկուսիչ» բնորշումն օգտագործվում է՝ նշելու համար էլեկտրական հոսանքի անանցանելիությունը դրա միջով, մինչդեռ «դիէլեկտրիկ» եզրույթն օգտագործվում է տվյալ նյութի՝ բևեռացման շնորհիվ էլեկտրական կուտակելու ունակությունը մատնանշելու համար: Դիէլեկտրիկ (ԴԷ) համարվում են այն նյութերը, որոնց ատոմներում էլեկտրոններն ամուր կապված են իրենց միջուկների հետ: Էլեկտրական լիցքերը ԴԷ-ներում արձագանքում են կիրառված էլեկտրական դաշտին՝ դիէլեկտրական բևեռացման փոփոխությամբ, եթե էլեկտրոնները տեղաշարժվում են դաշտի հակառակ ուղղությամբ, իսկ միջուկները՝ դաշտի ուղղությամբ, այսպիսով ձևավորելով երկրսեռներ, որոնք, դասավորվելով գուգակին շարքերով, առաջացնում են ԴԷ-ի ներքին դաշտը: Այս նյութերը գրեթե մեկուսիչներ են: Թեև ոչ բոլոր ԴԷ-ն են մեկուսիչներ, բայց բոլոր մեկուսիչներն ընդգծված ԴԷ-ներ են (ինչպես արդեն վերևում նշվեց՝ մեկուսիչ եզրույթը կապվում է փոքր էլեկտրահաղորդականության, իսկ ԴԷ եզրույթը՝ բևեռացման մեծ ունակության հետ):

Ակտիվ են կոչվում այն դիէլեկտրական նյութե-

ըր, որոնցով հնարավոր է կատարել էներգիայի և տեղեկատվության անմիջական փոխակերպում:

Ակտիվ դիէլեկտրական (ԱԴԷ) այութերի հատկությունները հնարավոր է կառավարել տարաբնույթ արտաքին ազդակներով՝ էլեկտրական և մագնիսական դաշտերով, ջերմաստիճանի փոփոխությամբ, լուսային ձառագայթմամբ, մեխանիկական լարման կիրառմամբ և այլն: ԱԴԷ-ները հիմնականում օգտագործվում են էլեկտրական ազդանշանների գեներացման, ուժեղացման, մոդուլման և կերպափոխման նպատակներով: ԱԴԷ-ների օրինակներ են՝ ֆեռոէլեկտրիկները, պիեզոէլեկտրիկները, պիրոէլեկտրիկները, ֆեռումագնիսները, ֆեռոէլեկտրամագնիսները և այլն:

ԱԴԷ-ներում էներգիայի և տեղեկատվության փոխակերպումները կատարվում են մի շարք ֆիզիկական երևոյթների «խաչման» շնորհիվ: Աղ.1-ում բերված են այդ երևոյթներից հիմնականներ՝ ներկայացված «արտաքին ազդեցություն-ֆիզիկական արձագանք» կապի ձևով:

ԱԴԷ նյութերում կարևորվում են նաև՝

- տարրեր մեծությունների միջև կապերի ոչ գծային բնույթը, օրինակ՝ թևեռացում – էլեկտրական դաշտի լարվածություն (P-E), մագնիսացում-մագնիսական դաշտի լարվածություն (B-H),
- արտաքին ազդակների բացակայությամբ, որոշակի պայմաններում դիտվող ինքնարեր երևոյթները, օրինակ՝ ֆեռոէլեկտրիկների ինքնարեր թևեռացումը:

Խաչվող երևոյթներն առավել ցայտուն արտահայտված են հենց ֆեռոէլեկտրիկներում, որոնք լայն կիրառություն են գտել տեխնիկայում, մասնավորապես, դրանց հիման վրա պատրաստվում են ջերմաստիճանի, ձնշման, ձառագայթման, կենսաբժշկական, բիմիական և այլ տվյալներ, որոնց անհրաժեշտությունը ներկայում գգացվում է մարդկային կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում:

Առաջին անգամ ֆեռոէլեկտրականության երևոյթը դիտվել է սեգնետյան աղում ( $KNaC_4H_4O_6 \cdot 4H_2O$ ) 1921թ., որի անունով էլ այս դասի ակտիվ դիէլեկտրիկները կոչվել են սեգնետաէլեկտրիկներ: 1880թ.-ին Պիեռ և Ժակ Կյուրիներն այս նյութերում նկատել են պիեզոէլեկտրական հատկություններ: Իգոր Կուրչատովս իր հետազոտական խմբով 1930-ականների սկզբին բազմակողմանիորեն ուսումնասիրել է սեգնետյան աղի հատկությունները: Հատկանշական է նրա՝ դեռևս 1933թ. իր «Սեգնետաէլեկտրիկներ» մենագրության վերջաբանում ձևակերպած այս կանխատեսումը, որ սեգնետային աղից բացի, ապագայում կհայտնաբերվեն նոր սեգնետաէլեկտրիկներ: Եվ իրոք, ընդամենը տասնմեկ տարի անց՝ 1944թ., Վուլը և Գոլդմանը հայտնաբերեցին բարիումի տիտանատը ( $BaTiO_3$ ), որն այժմ գործնական մեծ կիրառություն է գտել էլեկտրոնիկայում, միկրո- և նանոէլեկտրոնիկայում, և բարդ օրոխային ֆլ-ի հատկությունների հետազոտման և դրանց տեսակների ընդլայնման հիմք է ծառայում: Ժա-

### Աղյուսակ 1. Ակտիվ դիէլեկտրիկներում դիտվող հիմնական երևոյթները

Արձագանք Ազդեցություն	Էլեկտրական դաշտ	Մագնիսական դաշտ	Մեխանիկական լարվածություն	Ջերմաստիճան	Օպտիկական
Էլեկտրական դաշտ	Բևեռացում, էլ. հոսանք	Էլեկտրա- մագնիսական	Հակադարձ պիեզոէրեսույթ	Էլեկտրա- կալորական	Էլեկտրա- օպտիկական
Մագնիսական դաշտ	Մագնիսա- էլեկտրական	Մագնիսացում	Մագնիսա- ստրիկցիա	Մագնիսա- կալորական	Մագնիսա- օպտիկական
Մեխանիկական լարվածություն	Ուղիղ պիեզոէրեսույթ	Պիեզո- մագնիսական	Դեֆորմացիա	Ջերմա- առաձգական	Ֆոտոռած- գական
Ջերմաստիճան	Պիեռ- էլեկտրական	Ջերմա- մագնիսական	Ջերմային ընդարձակում	Ջերմու- նակություն	Ջերմա- օպտիկական
Լույս	Ֆոտովոլտային	Ֆոտո- մագնիսական	Ֆոտոստրիկցիա	Կլանում	Բեկում, անդրադառն


## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

մանակին ՖԷ-ի հայտնաբերումն իրավացիորեն համարվել է դիէլեկտրիկների մասին գիտության ամենանշանակալի ձեռքբերումը:

Ներկայում հայտնի ՖԷ-ների թիվը հաշվում է հարյուրներով, և մեծ թափով շարունակվում են նոր ՖԷ-ների ստացման, հատկությունների բարելավման, կիրառության հնարավորությունների բացահայտման ուղղությամբ տարրող ակտիվ հետազոտական աշխատանքները:

Հստ բյուրեղային կառուցվածքի և ինքնարեր թևեռացման առաջացման մեխանիզմի, ՖԷ-ները լինում են՝ իննային և երկրսեռային: Տեխնիկայում առավել լայն կիրառություն են գտել իննային ՖԷ-ները, որը պայմանավորված է դրանց փոխան-ջատման մեծ հաճախություններով, փոքր դիէլեկտրական կորուստներով և վերը նշված այլ ցանկալի բնութագրերով: Իննային ՖԷ-ների խմբին են պատկանում իննային կապով բյուրեղները, որոնք չեն պարունակում հաստատուն էլեկտրական մունցոտով ատոմային խմբեր:

Իննային ՖԷ-ների թվին են պատկանում պերովսկիտները, որոնց ընդհանուր բիմիական բանաձևն է  $ABO_3$ , որտեղ  $A$ -ն մեծ իննային շառավղով կատիոնն է,  $B$ -ն՝ համեմատաբար փոքր շառավղով կատիոնը, իսկ  $O$ -ն՝ թթվածինը: Այս դասն իր անվանումն ստացել է պերովսկիտ հանքանյութից ( $CaTiO_3$ ): Պերովսկիտներն ունեն խորանարդային բյուրեղային կառուցվածք (նկ.1):



Նկ. 1.  $BaTiO_3$ -ի և  $Pb(Zr,Ti)O_3$ -ի տարրական բջիջները

Պերովսկիտներ են՝ բարիումի և ստրոնցիումի տիտանատները ( $BaTiO_3$  և  $SrTiO_3$ ), կապարի տիտանատը ( $PbTiO_3$ ), լիթիումի նիոբատը ( $LiNbO_3$ ), կալիումի նիոբատը ( $KNbO_3$ ), բիսմութի ֆեռիտը ( $BiFeO_3$ ) և այլն: Դրանք բնութագրող հիմնական պարամետրերը բերված են Աղ. 2.-ում:

### Աղյուսակ 2. Պերովսկիտի տիպի որոշ Փեռէլեկտրիկների բնութագրերը

Անվանում	Քիմիական բանաձև	$T_c$ , Կ	$\epsilon$ , (300 Կ-ում)	Ps, [մկՎ/ $\mu$ մ]
Լիթիումի նիոբատ	$LiNbO_3$	1420	78	71
Բարիումի տիտանատ	$BaTiO_3$	393	500	26
Բիսմութի ֆեռիտ	$BiFeO_3$	1123	100	50
Կապարի տիտանատ	$PbTiO_3$	760	350	30

Պերովսկիտների թևեռացման կառուցվածքային միավորը տարրական բջիջն է: Պերովսկիտի թևեռացման մեխանիզմը դիտարկենք  $Ba_{1-x}Sr_xTiO_3$  (BST) -ի օրինակով, որը ՖԷ նյութերի շարքում ամենաբազմակողմանիորեն հետազոտված, լայն կիրառություններ գտած և ամենահեռանկարային թեկնածուն է: Այդպիսի բյուրեղների ինքնարեր թևեռացումն առաջանում է ֆազային անցնան ժամանակ իննաների աններդաշնակ տատանումների հետևանքով: Այս դեպքում անցումը պարակելեկտրական ֆազ անվանում են տեղաշարժման տիպի ֆազային անցում: Ինքնակամ թևեռականությամբ օժտված ԴԷ-ի այս վարքը կարելի է նմանեցնել մագնիսական դաշտում երկարի մագնիսացման վարքին:

Ըսդունակ է BST-ն համարել բարիումի տիտանատի և ստրոնցիումի տիտանատի պինդ լուծույթ, որը կարելի է ներկայացնել  $Ba_{1-x}Sr_xTiO_3$  կամ  $Ba_xSr_{1-x}TiO_3$  բիմիական բանաձևներից որևէ մեկով, որտեղ  $0 < x < 1$ :

Հետագա շարադրանքում վերոնշյալ երկու ձևերից կը լուստրենք  $Ba_xSr_{1-x}TiO_3$  բիմիական նշանակումը, իսկ որպես դրա կրծատ ձև՝ BST-ն:

Ֆեռէլեկտրիկների կարևորագույն բնութագրերից մեկը Կյուրիի ջերմաստիճանը կամ Կյուրիի ֆեռոէլեկտրական կետն է ( $T_c$ ) այն ջերմաստիճանը, որի դեպքում առաջանում է (սառելիս) կամ վերանում է (տաքանալիս) ինքնարեր թևեռացու-

մը:  $T_c$ -ից ցածր ջերմաստիճաններում BST-ի բյուրեղացանցի տարրական քջջը քառանիստ է, իսկ  $T_c$ -ից բարձր ջերմաստիճաններում՝ խորանարդ: Կյուրիի կետին հասնելուց հետո տեղի է ունենում ֆազային անցում ֆեռոէլեկտրական վիճակից պարական վիճակի: Այս դեպքում փոփոխում են բյուրեղի համաչափությունը, տարրական քջի պարամետրերը, իսկ դիէլեկտրական, առաձգական, պիեզոէլեկտրական, էլեկտրաօպտիկական և այլ բնութագրերի արժեքներն ունենում են կտրուկ մաքսիմումներ և մինիմումներ: Պարական ֆազում, որը բնութագրվում է ոչ ինքնարեր բևեռացմամբ, հարաբերական դիէլեկտրական թափանցելիությունը նվազում է ջերմաստիճանի աճմանը զուգընթաց: Պարական ֆազում ֆիզիկական դաշտում ցուցաբերում են դիէլեկտրական հաստատունի մեծ փոփոխություն: Հայտնի է նաև, որ այս նյութերն արագ արձագանքում են կիրառված ազդանշաններին, սենյակային ջերմաստիճանում ունեն աղմուկների ցածր մակարդակ, բարձրհաճախային տիրույթում՝ փոքր կորուստներ, ուստի կարող են բազմապիսի կիրառություններ գտնել ազդանշանների ռադիո- և միկրոալիքային տիրույթներում:

Բարիումի և ստրոնցիումի տարբեր հարաբերակցություններ ընտրելով՝ հնարավոր է հեշտությամբ փոփոխել BST-ի կյուրիի ջերմաստիճանը՝ այս հացնելով ընդհուար մինչև սենյակային և ավելի բարձր ջերմաստիճանների:

Ֆել-ի մյուս կարևորագույն պարամետրերից են դիէլեկտրական թափանցելիությունն ու դիէլեկտրական կորուստները:

Ինչպես նշվեց, ֆեռոէլեկտրիկներին բնորոշ է մեծ դիէլեկտրական թափանցելիությունը և դրա խիստ ոչ գծային կախումները ջերմաստիճանից և էլեկտրական դաշտի լարվածությունից: Ֆեռոէլեկտրիկների դիէլեկտրական թափանցելիությունն իր առավելագույն արժեքին հասնում է կյուրիի ջերմաստիճանում, իսկ դրանից բարձր ջերմաստիճաններում (պարական ֆազում) նկարագրվում է կյուրի-վեյսի օրենքով՝

$$\varepsilon = \varepsilon_0 + \frac{C}{T_c - T_o},$$


որտեղ  $C$ -ն կյուրի-վեյսի հաստատունն է,  $T_o$ -ն՝ կյուրի-վեյսի ջերմաստիճանը: Առաջին կարգի ֆազային անցման համար  $T_o < T_c$ , իսկ երկրորդ կարգի դեպքում  $T_o = T_c$ : Եթե  $T_c$ -ն մոտ է  $T_o$ -ին, ջերմաստիճանից անկախ է անտես-

վել, որովհետև այն շատ ավելի փոքր է, քան  $C/(T_c - T_o)$ -ն: Նկ. 2.ա-ում պատկերված է  $Ba_x Sr_{1-x} TiO_3$  խեցեղենի և միաբյուրեղի կյուրիի ջերմաստիճանի կախումը բարիումի և կոնցենտրացիայից, որը տարբեր հետազոտողների ուսումնասիրության առարկան է եղել վերջին տասնամյակներում: Բարձրորակ BST միաբյուրեղների հետ մեկտեղ, հաճախ օգտագործվում են նաև BST խեցեղեն նմուշներ, որոնց  $T_c$ -ն փոքր-ինչ մեծ է, քան բարձրորակ միաբյուրեղներինը: Խեցեղեններին բնորոշ են բաղադրության տատանումները: BST խեցու բյուրեղները կարող են ունենալ տարբեր տարրաչափություններ (ստեխիոմետրիա), այսինքն՝ դրանցում բարիումի և ստրոնցիումի իոնների բաշխումն անհամասեռ է: Այդ անհամասեռությունը հիմնականում պայմանավորված է խեցու ծակոտվենությամբ, ինչպես նաև բյուրեղների որոշակի ձգվածությամբ: Վերջինս հանգեցնում է ֆել-ի մյութի  $T_c$ -ի աճին: Նոյնը կարելի է ասել նաև կետային (կառուցվածքային) արատներ պարունակող ֆել բյուրեղների մասին: Ուշադրության է արժանի նաև այս հանգամանքը, որ բարձրորակ միաբյուրեղ  $Ba_x Sr_{1-x} TiO_3$ -ի և կետային արատներով կամ  $Ba_x Sr_{1-x} TiO_3$  խեցեղենն ամուշի  $T_c$ -ները համընկնում են  $x=0$  և  $x=1$  դեպքերում, սակայն տարբերվում են, եթե  $x=0,5$  (նկ. 2.ա): Բարիումի և չափարաժնից  $Ba_x Sr_{1-x} TiO_3$ -ի և դիէլեկտրական թափանցելիության ( $\times 10^{-3}$  մասշտաբով) կախումը պատկերված է նկ. 2.բ-ում, իսկ բարիումի տիտանատը ( $BaTiO_3$ ) որոշ խանոնդրների (այդ թվում ստրոնցիումի) տարբեր չափարաժններով հարստացնելու դեպքում  $T_c$ -ի փոփոխությունը՝ նկ. 2.գ-ում: Դիէլեկտրական թափանցելիության առավելագույն արժեքը ու դրա դիրքը ( $T_c$ -ն) հետազոտելիս, ինչպես և խեցեղեն նմուշների դեպքում, անհրաժեշտ է հաշվի առնել նմուշի բյուրեղային միկրոկառուցվածքը, իսկ BST բարակ թաղանթների դեպքում՝ դրանց հաստությունն ու նանոչափական կառուցվածքը, որը, ինչպես հաստատվել է վերջին հետազոտություններով, հետևանք է այդ թաղանթներում նկատվող քվանտային երևույթների: Ֆել-ում ընտրացման կախումը դաշտի և լարվածությունից ոչ գծային է և E-ի շրջանային փոփոխությունների դեպքում ունի փակ կորի տեսք, որը կոչվում է հիստերեզիսի օղակ (նկ. 3ը, նկ. 4): Բներացման հիստերեզիսի օղակի առկայությունը ֆելների բնութագրական հատկությունն է, որով դրանք տարբերվում են այլ տեսակի դիէլեկտրիկներից:



Ֆեռոէլեկտրիկի նմուշը, որպես կանոն, կազմ-

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Ված է առանձին՝ զանազան ուղղություններով  $P_s$  ինքնակամ բևեռացվածության վեկտորներով տիրույթներից (դոմեններից): Յուրաքանչյուր դոմեննի սահմաններում բոլոր տարրական բջիջների երկընեռային մոմենտները ուղղորդված են նույն ուղղությամբ, իսկ հարևան դոմեններում ինքնակամ բևեռացման ուղղությունները տարբերվում են միմյանցից: Քանի որ այս նյութերը բաղկացած են միմյանց նկատմամբ բառայնորեն ուղղված բևեռացված տեղամասերից, և բոլոր ուղղություններով բևեռացման հավանականությունները հավասար են, ապա արտաքին դաշտի բացակայությամբ նյութում ընդհանուր բևեռացումն իդեալական դեպքում բացակայում է, և ամրող բյուրեղի էլեկտրական մոմենտը զրո է:




Նկ. 2.ա.  $Ba_xSr_{1-x}TiO_3$  խեցու և միարյութեղի Կորիի ջերմաստիճանի կախմամբ բարիումի չ կոնցենտրացիայից: բ.  $Ba_xSr_{1-x}TiO_3$  խեցու ԴԵ հաստատունի ջերմաստիճանային կախմամբ բարիումի տարրերի չ կոնցենտրացիաների համար, գ.  $T^4$ -ի փոփոխությունը դրոշ խառնուրդների տարրեր չափարաժններով  $BaTiO_3$ -ն հարստացնելու դեպքում



Նկ. 3.ա. Պերովսկիտի տարրական բջջը, բ. պերովսկիտի հիստերեզիսի օղակը

Արտաքին էլեկտրական դաշտում տարրական բջջի կենտրոնական իոնը (Նկ. 3ա-ում և Նկ. 4-ում Տի-ի իոնը) տեղաշարժվում է իր սկզբնական դիրքից, և խորանարդային բջջը դեֆորմացվում է՝ վերածվելով ոչ կենտրոնահամաչափ կառուցվածքի: Կենտրոնական դրական իոնն ունի երկու կայուն վիճակ՝ բացասականորեն լիցքավորված թթվածնի իոնների նկատմամբ, որը բյուրեղին օժտում է երկու ուղղությամբ բևեռացման հատկությամբ (պայմանականորեն դրանք կանվանենք դրական և բացասական բևեռացումներ, Նկ. 4, Նկ. 5):

Բյուրեղի տրոհումը դոմենների էներգիապես նպաստավոր է, քանի որ այդ դեպքում լրիվ էներգիան հասնում է իր նվազագույն արժեքին և հնքնաբերաբար բևեռացված ֆեռոէլեկտրիկը զերմադինամիկական կայուն վիճակում է: Դոմենները կարող են հայտվել, եթե բյուրեղը պարական վիճակից անցնում է ֆեռոէլեկտրական վիճակի՝ կախված արատներից, ներքին մեխանիկական լարումներից կամ բյուրեղի դեֆորմացիայից:




Նկ. 4. Ֆեռոէլեկտրիկների բևեռացման  $P-E$  հիստերեզիսի օղակը

Ֆեռոէլեկտրիկի թևեռացման հիստերեզի-սի կորը դոմենային կառուցվածքի՝ էլեկտրական դաշտից կախման հետևանք է:

Եթե ֆեռոէլեկտրիկին կիրառվում է թույլ էլեկտրական դաշտ՝ դոմենները չեն փոխում իրենց թևեռացման ուղղությունը, և բյուրեղն իրեն պահում է որպես պարականական: Այդ դեպքում թևեռացումն էլեկտրական դաշտի լարվածությունից ունի գծային կախում (նկ. 4-ի OA տեղամաս): Էլեկտրական դաշտը մեծացնելիս բացասական թևեռացմամբ որոշ դոմեններ փոխում են իրենց ուղղությունը դրականի, և թևեռացումը մեծանում է (AB տեղամաս): Այս երևույթը շարունակվում է մինչև բոլոր դոմեններն ուղղվեն դրական ուղղությամբ (BC տեղամաս): Հարևան երկրսեռներն այս դեպքում կողմնորոշվում են նույն ուղղությամբ՝ նմուշում ձևավորելով ֆեռոմագնիտիզմ: Այս կետում նմուշը դառնում է միադումնեն (հագեցման տեղամաս): Ը կետն արտահայտում է թևեռացման  $P_s$  մեծությունը: Էլեկտրական դաշտի լարվածության փորձումը հանգեցնում է թևեռացման նվազման, բայց այս չի փոխվում ըստ նախկին BAO կորի: Եթե էլեկտրական դաշտը դառնում է զրո, դոմենների մի մասը պահպանում է նախկին դրական թևեռացումը, և բյուրեղը ցուցաբերում է մասցորդային թևեռացումը  $P_r$  (D կետ): Դա նշանակում է, որ ֆեռոէլեկտրիկի թևեռացումը որոշվում է ոչ միայն դաշտի լարվածության արժեքով տվյալ կետում (վիճակում), այլև թևեռացման նախկին վիճակներով:

$P_r$  մասցորդային թևեռացումը վերանում է, եթե հակառակ կիրառված դաշտը դառնում է հավասար Ec-ին (F կետ): Հակառակ ուղղված դաշտը մեծացնելիս բոլոր դոմենները շրջվում են մյուս թևեռացման ուղղությամբ (G կետ): Փոխելով կիրառված դաշտի լարվածության ուղղությունը ( $E \rightarrow -E$ ) և մեծացնելով այն՝ օղակը փակվում է: Դաշտի լարվածության այն արժեքը, որի դեպքում տեղի է ունենում թևեռացման ուղղության փոփոխություն, անվանում են կոլերցիտիվ դաշտ՝ Ec: Օրինակ՝ կոլերցիտիվ դաշտը ֆեռոմագնիտիզմում, որտեղ ( $\pm P_r$ )-ը կողավորվում է որպես տրամաբանական «0» և «1» վիճակներ, ներկայացնում է փոխանշատված շեմի թվային արժեքը: Հիշող սարքերում կիրառության համար ցանկալի է, որ կոլերցիտիվ դաշտի դրական ու բացասական կետերը (արժեքները) լինեն համաչափ և ըստ մեծության փոքր 2,5 Վ-ից, այնպես, որ ֆեռոմագնիտիզմում դաշտը կազմում է մոտավոր 10 Վ:




սարքերը կարողանան աշխատել ավանդական հիշող տարրերի սնման լարումներով:

Հագեցման արժեքից փոքր լարվածությամբ էլեկտրական դաշտերում ձևավորվում են փոքր չափերի հիստերեզիսի օղակներ, որոնց գագաթներն ընկած են ՕԱ գծի վրա: Հագեցման հիստերեզիսի օղակը կարևոր տեղեկություն է պարունակում ֆեռոէլեկտրիկի հատկությունների մասին: Դրա հետազոտությամբ որոշում են ֆեռոէլեկտրիկի հագեցման թևեռացումը, մասցորդային թևեռացումը և կոլերցիտիվ դաշտը:

Վերջում նշենք, որ ֆեռոէլեկտրիկի լրիվ թևեռացումը բաղկացած է երկու բաղադրիչներից՝ ոչ մասցորդային կամ չփոխանշատվող և մասցորդային կամ փոխանշատվող: Չփոխանշատվող թևեռացումը պայմանավորված է գծային մեկուսիչներին բնորոշ իոնային և էլեկտրական թևեռացմամբ: Էլեկտրական դաշտն անջատելիս թևեռացման առաջին բաղադրիչը միկրովայրկանների ընթացքում վերանում է: Փոխանշատվող թևեռացումը մակածվում է ֆեռոմագնիտիզմում դոմենների փոխանացատման հետևանքով և մասնաւում է բյուրեղում նաև էլեկտրական դաշտն անջատելուց հետո: Բներացման նշված երկու բաղադրիչների տարրերությունը մասցորդային թևեռացման կրկնապատճեն է՝  $2P_r$ :

Եթե  $T_i^{4+}$  իոնը տարրական բջջի կենտրոնում է (նկ. 5.ա), ապա բջջի դրական և բացասական լիցքերի կենտրոնները համընկնում են, և նրա երկրական մոմենտը զրո է:  $T_i^{4+}$  իոնի շեղումը թթվածնային ութանիստի կենտրոնից (նկ. 5.բ) հանգեցնում է բջջում  $P$  էլեկտրական մոմենտի առաջացման, որն ուղղված է շեղման ուղղությամբ:




Նկ. 5.  $\text{BaTiO}_3$ -ի տարրական բջջի կտրվածքը չքսեռացված (ω) և քսեռացված (ρ) վիճակներում (Յուղ են տրված հիմնարեր քսեռացման ուղղություններն արտաքին էլեկտրական դաշտում: Փոփոխական էլեկտրական դաշտում կենտրոնական իոնը ( $\text{Ti}$ -ի) շարունակարար տեղափոխվում է վերևից ներքև):

## ԻԴԵՊ



Ամերիկացի տնտեսագետ Թայլեր Կոուենը հետևել է 1605 երեխաների ծակատագրերին, որոնք 40 տարի առաջ՝ 13 տարեկան հասակում, աչքի են ընկել մաթեմատիկական բացառիկ շնորհալիությամբ: Պարզվել է, որ գրեթե բոլորը կյանքում հասել են մեծ հաջողությունների, ընդ որում՝ շատերը ոչ թե գիտության բնագավառում, այլ բիզնեսում:




«Наука и жизнь», 2015, N 6.



Բջջային հեռախոսով գովազդային ձանձրալի հաղորդագրություններ՝ սպամ ուղարկելու ռեկրոդը պատկանում է Շինաստանին: Մեկ տարվա ընթացքում սպամ ուղարկողները (սպամեր) տարածում են շուրջ 300 միլիարդ հաղորդագրություն, (ԱՄՆ-ում այդ թիվը շուրջ

5 միլիարդ է): Չբացահայտվելու համար չինացի սպամերներն իրենց գովազդն ուղարկում են շարժվող միկրոավտորուսներից, որոնք հնարավոր չեն ուղղործել (պելենգել), և էլեկտրոնային հասուկ սարքի միջոցով քողարկում են այն հեռախոսի համարը, որից ուղարկվում է գովազդը:



# Իտալացի պրոֆեսորները՝ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում



Ս.թ. հոկտեմբերի 2-ին Երևան էր ժամանել Տուշայի (Իտալիա) համալսարանի դասախոսների խումբը՝ «Էրազմուս+» կրեդիտային շարժունակություն ծրագրի շրջանակներում դասախոսություններ կարդալու ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում և ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոռութեային հետազոտությունների կենտրոնում «Ֆունկցիոնալ սննամթերք», «Ճշգրիտ գյուղատնտեսություն», «Գեովիճակագրություն» և այլ թեմաների վերաբերյալ, անցկացնելու պրակտիկ խմբային քննարկումներ։

Նոյն օրը ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանն ընդունել է Հայաստանում հատակայի դեսպան Զովանի Ռիչոլիին և Տուշայի համալսարանի պատվիրակությանը։ Ողջունելով հյուրերին ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանն ասել է «Իտալիայի Հայրապետությունը եվրոպայի այն երկրներից է, որոնց հետ ունենք բազմակրողմանի համագործակցության ծրագրեր ֆիզիկայի, քնական գիտությունների, հայգիտության ասպարեզներում։

Մենք աշխատում ենք, որպեսզի մեր կրթական ծրագրերը լինեն այնպիսին, որ կադրերի ստացած գիտելիքները համապատասխանեն ժամանակակից պահանջներին։ Այդ կապակցությամբ շատ ենք կարևորում Տուշայի համալսարանի պրոֆեսորների այցը և նրանց դասախոսությունները։

Հանդիպման մասնակիցներին ողջունել է Հայաստանում հատակայի արտակարգ և լիազոր դեսպան Զովանի Ռիչոլին։ «Մենք ուրախ ենք, որ Տուշայի համալսարանն այդքան ակտիվ մասնակցություն ունի Հայաստանի Հայրապետությունում։ Մասնավորապես, սննդի անվտանգությանը, սննդի որակին վերաբերող հարցերում մենք փորձ ունենք, որով կարող ենք կիսվել։ Այս ոլորտն, իսկապես, զարգացած է Իտալիայում։ Հայաստանը միշտ հայտնի է եղել իր սնունդով, սննդի արտադրությամբ։ Բայց քանի որ Հայաստանը փորձում է արտահանել իր սնունդը եվրասիական և եվրոպական շուկաներ, այս հարցն ավելի առաջնային կարևորություն է ստանում, և «Էրազմուս+» ծրագրի շնորհիվ մենք

հնարավորություն ունենք շարունակելու մեր համագործակցությունը և փորձի փոխանակումը»։

Հանդիպման ընթացքում քննարկվել են ««Էրազմուս+ KA107» ծրագրի արդյունքներն ու ձեռքբերումները, իսկ ասպիրանտները ներկայացրել են Տուշայի համալսարանում կատարված հետազոտությունների արդյունքները։



Հոկտեմբերի 3-ից մինչ 5-ը դասախոսությունները շարունակվել են ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոռութեային հետազոտությունների կենտրոնում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ բնապահպանության և բնօգտագործման ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների, ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոռութեային հետազոտությունների կենտրոնի ասպիրանտների և գիտաշխատողների համար։


# ԱՄԵՆԱՀԵՏԱՋՐՔԻՐ ԳԻՏԱՀԱՆՐԱՍԱՏՉԵԼԻ

## ՀԱՆԴԵՍ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԲԱԺԱՆՈՂԻԱԳՐՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
ԿԱՐՈՂ ԵԶ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ

+374 60 62 35 99





9 771829 034002 17003